

U. U. V  
1289

1999

19

7700

45

1289

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ

# ԱՅՀԱՄԴԻԹԻՒՆ

W. G. G. G.

ଶ୍ରୀମଦ୍ଭଗବତ

გუარაბა ერთ გუარაბა || თემ. მ. შარაძე.

1892

ՀԱՅՈՒԹ ՑՈՅՏ

# ԱՄՓՈՓԱԿԻՐԱՐԱՔԱ

Дозволено цензурою, Тифлисъ, 9-аго сентября 1892 г.

28-1296



Типографія М. Шарадзе, Николаевская ул., 21.

1289- 81

Յա միմ ըվելման խամառնչաց մաժելողը և դուռափյա՞ն շրջապատ և մեծ աշխաղման զանա՞ն դրս լվահամց միմ  
Ա Ռ Ա Ճ Ա Բ Ա Ն

արմ Հայոց լեզուի ուղղագրութիւնը գեռ իր կերշնական որոշ միաձև կերպարանքը չի ստացել Գրեթէ ամենայն մարդ իր առանձին ուղղագրութիւնն ունի և շատ անգամ առանց որևէ հիմունքի, ինչպէս պատահում է, գրում է. դրա համար և մեր ուղղագրութեան մէջ տիրում է բաղմատեսակութիւն, մինչդեռ լեզուի մէջ գրութեան միատեսակութիւնն անհրաժեշտ է:

Սոյն գրքոյկը կազմելսա աչքի առաջ ենք ունեցել գրութեան զանազան ձևերը և նրանցից բնտրել ենք այն ձևը, որ աւելի տարածուած և ընդհանրութիւնից ընդունուած է, և կամ տեսականապէս աւելի ճիշտ ենք համարելի Բացատրութիւնները, որոնցով յայտնում ենք թէ ինչու մի տեսակ գրութիւնն ընդունում ենք, միւսը ոչ աշխատել ենք, որքան կարելի է, կարճ լինին. որովհետև եթէ մեր նպատակը մի կողմից եղել է գրութեան բաղմատեսակութիւնների և տարածայնութիւնների մէջ միութիւն մտցնելի ուղղագրութեան ընդհանուր սկզբունքների վրայ հիմնուած, միւս կողմից՝ գլխաւորապէս և այն նպատակն ենք ունեցել, որ մեր գրքոյկը ուսում ստացած, բայց հայոց լեզուի ուղղագրութիւնը չիմացող մարդկանց համար ծառայի իրու ուղեցոյց մեր լեզուի ուղղագրութիւնը սովորելու: Վերջին նպատակի համար իսկապէս հարկաւոր էր միայն ուղղագրութեան ընդհանուր կանոնները տալ և բառերի ցուցակ գնել: սակայն մեր ուղղագրութեան արդի գրութեամբ այդ անհնար է, քանի որ

Հարկաւոր է գրութեան բազմատեսակ ձևերից մէկն ու  
մէկն ընտրել, որի համար անհրաժեշտ են և բացատրու-  
թիւնները:

Յարմարեցնել մի գրբոյկ այնպէս, որ երկու նպա-  
տակին ևս միանգամայն ծառայի՞ հեշտ չէ. իսկ մենք  
ստիպուած ենք եղել այդ անելու։ Այս պատճառով  
շատ բան կամ համառօտ ենք գրել, կամ բոլո-  
րովին թողել ենք։ Հնչիւնաբանութիւնից համառօ-  
տակի միայն այն մասն ենք գրել որ անհրաժեշտ է աշ-  
խարհաբարի գրութեան գժուարութիւնները՝ տառերին  
յատուկ հնչիւնների և բառի մեջ գրութեան ժամա-  
նակ ունեցած արտասանութեան տարբերութիւնը բա-  
ցատրելու համար։

Մեր ուղղագրութեանը վերաբերեալ նիւթեր չլի-  
նելու և առհասարակ ուղղագրութեան ուսումնասի-  
րուած չլինելու պատճառով, հարկաւ, մեր այս հրա-  
տարակութիւնը, ինչպէս դժուարութիւններից զերծ չէ  
եղել, նպանպէս և պակասութիւններից զերծ չէ։ Գուցէ  
նշանաւոր երեսյթներ աչքից փախցրել ենք, ինչպէս և  
վերջում դրած բառերից ցուցակի մէջ անշուշտ, շատ  
բառեր մտած չեն լինիլ:

Այս գրքովկը կաղմելիս օդառուել ենք հ. Այսը-  
նեանի «Քննական քերականութիւնից» և ակադեմիկ  
Գրոտի «Ուսուաց լեզուի ուղղագրութիւնից»։ Յօդուած-  
ների դասաւորութիւնը դրեմէ ամբողջապէս Գրոտի  
համեմատ ենք դրել որից երբեմն բառացի քաղել ենք  
և այն կանոնների բացատրութիւնները, որոնք յատուկ  
են ոչ միայն ուսւերէնին, այլ և հայերէնին և ուրիշ  
լեզուների։

## ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՀԱՅՈՅ ԼԵԶՈՒՄ ՀՆՉԻՒՆԵՐՆ  
ԱՅԲԲԵՆԱՐԱՆԸ

1. Ամենայն լեզու ունի միայն որոշ թուով իրեն լատուկ հնչիւններ: Գրութեան ժամանակ լեզուի ամեն մի հնչիւնը պէտք է նշանագրուի մի հատ առանձին տառով. ամեն տառ միայն մի հընչիւնի նշանագիր պէտք է լինի:

Այս է այլբնարանի հիմնական կանոնը. բայց  
ինչպէս ուրիշ լեզուների, նոյնպէս և հայոց լե-  
զուի այլբնարանն այդ կատարելութիւնը չունի.  
լեզուի մէջ կան հնչիւններ, որոնց համար այլբե-  
նարանում առանձին նշանագիր չկայ, և, ընդհա-  
կառակն, մի հատ հնչիւնի համար այլբնարա-  
նում երկու երեք տառ կամ նշանագիր կայ:

2. Մեր այբբենարանն ունի հետևեալ 38  
տառելը.

ա բ գ դ ե զ է ը թ ժ ի լ ի  
ծ կ հ ձ ղ ճ մ լ ն շ ո չ պ լ  
ջ ռ ս ս վ տ ը յ ւ փ ք օ ֆ:

Ալս այբուբենի վրայ պէտք է աւելացնել և  
ու, որ թէև մի պարզ հնչիւն է, բայց առանձին  
նշանագիր չունի և գրւում է երկու տառի միա-  
ւորութեամբ՝ երկտառով:

3. Խօսքի հնչիւններն, իրենց արտաբերու-  
թեան եղանակին նայած, երկու տեսակ են՝ ճայ-  
նաւոր և բաղաձայն: Զայնաւորները, ինչպէս են  
ա է օ, արտասանւում են բաց բերանով. իսկ բա-  
ղաձայնների արտասանութեան ժամանակ, օրինակ՝  
բ պ մ, հարկաւոր է, որ բերանի երկու մասերը  
կպչեն կամ քիչ ու շատ մօտենան իրար: Բաղա-  
ձայնները միայն ձայնաւորների օգնութեամբ կարող  
են վանդ կազմել:

283ՆԱԽՈՐ ՀՆՉԻՒՆՆԵՐ

4. Զայնաւորներն երկու տեսակ են՝ պարզ և  
երկրարքառ:

Փարզ ճայնաւորներն են՝ ա է ի, օ ու, ը:

Ը ձայնաւորը կարճ ու խուլ է. երբեմն այն-  
քան սղում է, որ բոլորովին կորչում է:

5. Յ տառը երկու տեսակ է արտասանւում.  
բառի սկզբում բաղաձայն է՝ և տառի հնչիւնով,  
իսկ բառի մէջ, ձայնաւորից յետոյ, կէս-ճայնաւոր  
է՝ ի տառի հնչիւնով:

6. Երկրարքառներ.—Երկու մօտէ-մօտ եկող  
ձայնաւորներից մէկը կարող է այնպէս սուղ (կարճ)  
արտասանուել, որ երկուսը միասին մի վանդ կը-  
կազմեն և մի անդամից կ'արտաբերուեն: Ձայնա-

ւորների այսպիսի բաղադրութիւնը կոչւում է երկ-  
բարքառ (երկձայն, բարբառ—ձայն, հնչիւն): Երկ-  
բարքառ վանդի ամենակարճ ձայնաւորը կոչւում  
է կէս-ճայնաւոր:

Մեր արդի գրական լեզուի մէջ երկբարքառ  
կազմելու համար ի հնչիւնն է ծառայում իբ-  
րև կէտ ձայնաւոր. բայց ի տառի փոխանակ գըր-  
ւում է յ կէս-ձայնաւորը (§ 5), որ դրուելով ա,  
ո, է ձայնաւորներից յետոյ, կազմում է այ, ոյ, էյ  
երկբարբառները, օրինակ՝ այս, լոյս, նոյ, է՛ բա-  
ռերի մէջ:

7. Վերոյիշեալ այ, ոյ, էյ երկբարբառների  
մէջ յ կէս-ձայնաւորը երկրորդ տեղն է բունում, բայց  
կան և երկբարբառներ, որոնց մէջ յ կէս-ձայ-  
նաւորն առաջին տեղն է բունում, կամ որոնք  
սկսում են յ (կէս ի) կէս-ձայնաւորով: Ալս կարգի  
երկբարբառներն են՝ յա, յե, յէ, յի, յո, յու:  
Գրութեան ժամանակ այս երկբարբառները  
գործ են ածւում բառի մէջը կամ վերջը աւ և ո  
ձայնաւորներից յետոյ, ինչպէս հետևեալ բառերի  
մէջ՝ ծառա-յա-կան, նա-յե-լ գո-յու-թիւն, ա-յո,  
իսկ բառի սկզբում և բառի մէջը կամ վերջը՝ բա-  
ղաձայնից յետոյ՝ գրանց փոխանակ գործ են ած-  
ւում ե, եա, եօ, իւ երկբարբառները. օրինակ՝ երբ,  
սենեակ, արդեօք, հիւր բառերի մէջ: Ըստ արտա-  
սանութեան են՝ հաւասար է յե-ի կամ յէ-ի, եա-ն՝  
յա-ի, եօ-ն՝ յո-ի կամ յօ-ի, իսկ իւ-ն՝ յու-ի:  
Ե երկբարբառ իբրև առանձին տառ մտնում  
է մեր ալբբենարանի մէջ:

8. Զայնաւորների բաղադրութիւնը:—Եթէ բառ-  
մէջ մօտէ-մօտ գալիս են երկու ձայնաւոր,  
երկուսն էլ միանգամայն աղարզ և որոշ չեն ար-  
տասանւում:

1) Ալդպիսի երկու կից ձայնաւորներից առաջինի  
հնչիւնը մաքուր է մնում, իսկ երկրորդը, սկզբից յ  
կէս-ձայնաւոր հնչիւնն ընդունելով, երկբարեառ-  
է արտասանւում. ինչպէս՝ ձի-ով, է-ակ, արի-ու-  
թիւն, մարգարէ-ութիւն արտասանւում են ձի-ով,  
է-յակ, արի-յութիւն, մարգարէ-յութիւն, կամ ձի-  
եռվ, է-եակ, արի-իւթիւն, մարգարէ-իւթիւն:

Յ կէս-ձայնաւորը թէպէտ բոլոր կից ձայ-  
նաւորների մէջ արտասանւում է, բայց գրւում  
է միայն այ և ո ձայնաւորներից յետոյ. ինչպէս՝  
կամ-յան, գո-յու-թիւն. իսկ միւս ձայնաւորներից  
յետոյ չի գրւում:

2) Երկու կից ձայնաւորներից առաջինը կարճ  
է արտասանւում, և յաջորդ ձայնաւորին միա-  
նալով երկուսը միասին մի երկբարեառ-վանդ են  
կազմում, որ և շատ անգամ երկբարեառով էլ  
գրւում է. օրինակ՝ որդի-ակ, պատանի-ակ, հրէ-  
այ գրւում և արտասանւում են որդեակ, պատա-  
նեակ, հրեայ. ալդպիս և Սսիա, Խտալիա, Երե-  
միա, միլիօն, ձիանք արտասանւում են Սսեա,  
Խտալիա, Երեմեա, միլիօն, ձեանք:

Յ նախորդ ու ձայնաւորը յաջորդ ձայ-  
նաւորից առաջ վ բաղաձայնի վերածուելով՝ նրա  
հետ միասին մի վանդ է կազմում. լեզուի, կա-  
տուի, ձու-ի, արտասանւում են լեզվի, կատվի, ձվի:

Այս դէպբում ու ձայնաւորը մի քանի բար-  
մառներում, երբեմն և գրական լեզուի մէջ, պա-  
հանման հում է իր ձայնաւոր հնչիւնը:

9. Գրաբարի երկբարեառներն են՝ ո (ուօ,  
ու-ն կարճ), եա, եօ (եաւ, եւ), այ, ու, աւ, եւ,  
իւ, ու \*), յա, յե, յէ, յը, յի, յո (յաւ), յու:

10. Մինչդեռ հին հայերէնը հարուստ է  
բարդ ձայնաւորներով կամ երկբարեառներով, մեր  
նոր լեզուն, մանաւանդ ժողովրդականը, սիրում է ա-  
ւելի պարզ ձայնաւորներ. դրա համար հին լեզուի  
գրաբարի գրեթէ բոլոր երկբարեառները աշխար-  
հաբարում, յատկապէս բարբառների մէջ, մի ընդ-  
հանուր օրէնքով պարզուելով, վեր են ածւում ի-  
րենց բաղադրիչ պարզ ձայնաւորներին, կամ մի բա-  
զամանից և մի ձայնաւորից կազմուած վանդերի \*\*):

\* ) Աւ, եւ, իւ, ու, երկբարեառների նաևնի հըն-  
չիւնն եղել է լատինական այ, յես, յու, ու. այդ երկ-  
բարեառների մէջ և տառն ու ձայնաւորի հնչիւն է  
ունեցել:

\*\*) Բարբառներում, մասամբ և գրական լեզուի  
մէջ, գրաբարի երկբարեառները, եթէ չեն պահում ի-  
րենց յատուկ հնչիւնները, ընդհանրապէս հետեւալ  
բաղադրիչ մասերին են վերածում. 1) ե=ի, է(է),  
ո=ու, օ, կամ վօ վանդ, որովհետեւ ու ձայնաւորը  
յաջորդ ձայնաւորից առաջ վ է արտասանւում (§ 8).  
2) եա=ե, ա. իսկ ե=ի, է, ուրեմն եա=ի, է(է),  
ա. 4) այ=ա, ի(յ), կամ երկուսի միջինը՝ է. 5) յ=յ  
ու, ի(յ), իսկ ո=ու, օ, ուրեմն ոյ=ու, օ(ո), ի. 6) աւ=ա  
ս, ու, կամ երկուսի միջինը՝ օ, կամ ավ. 7) եւ=ի,  
է(է), ու, կամ եվ վանդ. 8) իւ=ի, ու, կամ  
իվ վանդ. 9) ու=օ, ու:

Գրաբարի երկբարբառները մեր նոր գրական  
լեզուի մէջ կամ պահում են իրենց յատուկ հըն-  
չիւնը, կամ թէ չէ հետևեալ փոփոխութիւննե-  
րով են արտասանում։ 1) ե՞ն բառի մէջ արտա-  
սանում է պարզ ձայնաւոր է. 2) ո՞ն, ո՞ր իբրև  
առանձին տառ մտնում է մեր ալբբենարանի մէջ,  
բառի սկզբում արտասանում է վո (վօ) վանդ,  
իսկ բառի մէջը և վերջը՝ պարզ ձայնաւոր օ. 3)  
այ, ոյ բառի վերջը արտասանում են պարզ ձայ-  
նաւոր ա, օ, բացի մի քանի միավանդ բառերից՝  
հայ, վայ, նայ, ճայ, խոյ, նոյ. 4) առ, եւ, իւ բա-  
ռի վերջը և բառի մէջ ձայնաւորից առաջ (առ,  
եւ մի քանի բառերում և բաղաձայնից առաջ)  
արտասանում են ավ, եվ, իվ. 5) ու՞ն բառի մէջ  
ձայնաւորից առաջ արտասանում է վ բաղաձայն։

11) Յա, յե, յէ, յը, յի, յո, յու երկ-  
բարբառների յ կէս-ձայնաւորը բառի սկզբում դար-  
ձել է հագագային նուրբ հ բաղաձայն և այդ երկ-  
բարբառները արդի գրական լեզուի մէջ արտասան-  
ում են ինչպէս հա, հե, հէ, հը, հի, հո, հու  
վանդեր. ինչպէս Յակոբ, յաղթել, Յիսուս-Հակոբ  
հաղթել Հիսուս։

Բարբառների, մասամբ և գրական լեզուի մէջ  
այդ երկբարբառները, պարզութեան ընդհանուր  
օրէնքով վերածուելով իրենց բաղադրիչ ձայնաւոր-  
ներին, կորցնում նաև ընդհանրապէս սկզբի յ  
կէս-ձայնաւորը. Յակոբ-Ակոբ, Յովհաննէս-Օվանէս,  
Յիսուս-Խուս, Յուդա-Ռուդա, Յովսէփ-Օսէփ, Յուլիա-  
նոս-Ռուլիանոս. յաշորդ-աշորդ. յառաջադարձաց-

դէմ. յետ-ետ, յետոյ-ետոյ. յստակ-ստակ, յստակ.  
լաւելուլ-աւելացնել. յօրանջել-օրանջել, յիշոց-իշոց.  
յունապ-ունապ. յուշիկ-ուշիկ. յօնք (յաւնք)-ունք.  
յաջող-աջող. յասլահով-ասլահով, յեղանակ-եղանակ,  
յարագել-արագել, յելուզակ-ելուզակ. յերկար-երկար  
և ալն: Նոյնպէս և գրաբարում առանց յ-ի կան  
գործ ածուած՝ (յ)ատակ, (յ)աշտ, (յ)աչաղանք, (յ)ան-  
դուգն, (յ)ախնթոր, (յ)արի (յատնել բայի հրամ.),  
(յ)որձանք, (յ)անցանք, (յ)ալբատատես, (յ)աղթել,  
(յ)ստակութիւն, (յ)ոռի, (յ)ուռութք, (յ)արգոյ. և  
ալն, որոնցից մի քանիսը ժողովրդական բարբառ-  
ներում և գրական լեզուի մէջ ևո առանց յ-ի են  
գործ ածուում աղթել, արգոյ, և ալն:

ԲԱՂԱՑԱՅՆ ՀԱՇԻՆՆԵՐ

12. Բաղաձայն հնչիւնները, նայելով թէ խօս-  
քի գործարանի (կոկորդ, բերան՝ շրթունքներ, լե-  
զու, ատամներ, քիմք և քթափող՝ ուռնգներով  
միասին) որ մասով են արտաբերում, հետևեալ  
տեսակներին են բաժանում։

- |               |                            |
|---------------|----------------------------|
| 1) Շրթնային   | բ, պ, փ.                   |
|               | զ, ւ, ք.                   |
| 2) Կոկորդային | դ, կ, ք.                   |
|               | լ, հ, զ, իւ. մուհ միջմմման |
| 3) Ատամնային  | դ, տ, թ.                   |
|               | զ, ս.                      |
| 4) Քմային.    | ժ, զ, ու. մասասցա մմ թոփ   |
| 5) Ոնդային    | մ, ն.                      |
| 6) Լեզուային  | ը, ո, ւ.                   |

13) Մնացած վեց բաղաձայնները՝ ծ ձ ց ճ  
ջ չ բստ արտասանութեան բարդ հնչիւններ են,  
կազմուած են՝ ծ-ն տղ, ձ-ն դգ, ց-ն տս կամ  
թս, ճ-ն տժ, ջ-ն դժ, իսկ չ-ն թշ հնչիւնների  
միաւորութիւնից, որոնք մի անգամից արտաք-  
ըռուելով մի հնչիւն են տալիս:

Մի բանի բառեր գրուած կան թէ այդ  
բարդ հնչիւններով և թէ նրանց բաղադրիչ տաշ  
ուերով մատղիւ մածիւ թշուառ չուառ, ար-  
տսունը (արտասուք) — արցունք, և գաւառական  
պատսխուն (պատասխան) — պացնուն, վաթսուն,  
վատսուն — վացնուն:

14. Ժ շ ճ չ ջ հնչիւններն իրենց ձայնի ար-  
տաքին նմանութիւնից առնելով կոչւում են շշող  
հնչիւններ. իսկ զ ս ծ ձ ց հնչիւնները՝ սուլող  
կամ սուլածայն:

Լ ր (ս) ն մ դ (իս) հնչիւնները կոչւում են  
նայ (կակուդ) հնչիւններ, որովհետև հեշտութեամբ  
միանում են միւս բաղաձայնների հետ:

15. Բաղաձայնների կոշտ եւ փափուկ արտա-  
սանութիւնը: — Հայերէնի բաղաձայնները մեծ մա-  
սսամբ կոշտ են արտասանուում, մանաւանդ երբ նրանց  
հետեւում են պարզ ձայնաւորներ. բայց երբ բաղա-  
ձայններին հետեւում է եա (իա), եօ (իօ), իւ երկ-  
բարբառներից մէկը, բաղաձայնները սովորաբար փա-  
փուկ են արտասանուում. օրինակ՝ կարծեօք, արդեօք,  
կեանք, պատեան, սրբութիւն, ալիւր բառերի մէջ  
ծ դ կ տ թ լ հնչիւնները քիչ ու շատ աւելի

փափուկ են արտասանուում, քան` ծով, դոքա, կանք,  
պատան, արթուն, լուր բառերի մէջ:

16. Ի Ե է ձայնաւորներից առաջ գ կ ք բա-  
դաձայնները մեծ մասամբ փափուկ են արտասանուում.  
ինչպէս գին, կին, գետ, քերել, կէտ բառերի մէջ:  
Ե-ն այդ գէպքում պահում է իր երկբարբառ հըն-  
չիւնը, իսկ Է պարզ ձայնաւորն արտասանուում է  
ինչպէս ե երկբարբառ:

17. Լ բաղաձայնը այ, ոյ երկբարբառներից,  
երբեմն և ի ձայնաւորից լետոյ մեծ մասամբ փա-  
փուկ է արտասանուում ծով, թով, գավ, քավ,  
ծիլ. մանաւանդ երբ լին հետեւում է մի փափուկ  
ձայնաւոր (եա, եօ, իւ). ինչպէս՝ փայլփայլիւն:

Եթէ փափուկ արտասանուող լ բաղաձայ-  
նից լետոյ կոշտ ձայնաւորով սկսուող վանդ է  
գալիս, այն ժամանակ լ բաղաձայնը, նա-  
խննթաց այ, ոյ երկբարբառներից բաժանուելով,  
միանում է լաջորդ կոշտ ձայնաւորներին և կոշտ  
է արտասանուում. օրինակ՝ գայլաբարոյ, քայ-  
լափոխ:

18. Ռ և ո բաղաձայնների հնչիւնը բոլորովին  
առարել է իրարուց. ո-ն ը-ի թանձրը, կրկնակին է  
դրա համար և շատ բառերի մէջ երկու ը-ի փոխանակ  
գրուում է մի ո. ինչպէս՝ տաղը-տառ, եղր-եռ, եր-  
րակի-եռակի, երրեակ-եռեակ: Այ, ոյ երկբարբառ-  
ներից լետոյ ո-ն փափուկ է արտասանուում, թէ-  
պէտ և ոչ բոլորովին ը-ի նման. դրա համար և  
այդ երկբարբառներից լետոյ մեծ մասամբ ը է

գրւում, բացի մի քանի բառերից՝ ժայռ, մայռ,  
զգալուել:

19. Երեք կարգ բաղաձայններ: — Մի և նոյն  
գործարանով արտաբերուղի բաղաձայնները երկու  
կամ երեք տեսակ են՝ նուրբ, միջակ և թաւ կամ  
թանձր:

Հետևեալ ցուցակից երեսում է թէ ո՞ր բաղա-  
ձայնը ո՞ր տեսակին է պատկանում.

Նուրբ	Միջակ	Թաւ
մ	թ	փ
ւ	կ	փ
ա	դ	թ
ծ	ձ	ց
կ	դ	ք
ղ (նոր լեզ.)	զ (հին լեզ.)	խ
ճ	չ	չ
զ	ժ	չ

20. Մի եւ նոյն հնչիւնի կրկնութիւնը: — Հայե-  
րէնում մի և նոյն հնչիւնը, ձայնաւոր թէ բա-  
ղաձայն, կարող չէ ետևէ-ետև կրկնուել. Երկու  
մի և նոյն հնչիւն իրար մօտ կարող են գալ մի-  
այն պատահաբար՝ բարդութեան և ածանցման ժա-  
մանակ, երբ երկու առանձին արմատներ միանում  
են, կամ վանդի միջից մի ձայնաւոր կորչում է. օրինակ՝ ամենա-անվնաս, եր-րորդ, չոր-րորդ (եր,  
չոր արմատ. բորդ ածանց.), քննել (քնին արմատ):

Պէտք չէ շփոթել զգուել դդում, տարր  
գրութիւններն արտասանութեան հետ. այդպիսի

ձեւը տառերի կրկնութիւն են, և ոչ հնչիւնի, ու  
րովհետեւ արտասանելիս երկու մի և նոյն հնչիւնի  
մէջ մանում է ը ձայնաւորը, որը չի գուռում:

21. Բաղաձայնների բաղադրութիւնը: — Հայոց  
լեզուն չի սիրում թէ ձայնաւորների և թէ բաղաձայն-  
ների կուտակութիւնն: Բաղաձայն հնչիւններն իրար  
հետ միանում են՝ մեծ մասամբ միջին ունենալով  
որևէ ձայնաւոր. օրինակ՝ բարեկամութիւն,  
սովորական, ալրզակ, մըտամուր: Բառի սկզբ-  
բում երկու բաղաձայն չեն միանում առանց ձայ-  
նաւորի. բառի մէջը կամ վերջը, շատ քիչ բացա-  
ռութեամբ, միայն նմ զի և ուշ ժ զ ու բաղա-  
ձայններից լետոյ կարող է բաղաձայն հնչիւն գալ,  
առանց միջին որևէ ձայնաւորի. օրինակ՝ լաստ,  
վաշտ, ազգ, եղբայր. ամակ, որդի, ամառնային,  
ուխտ, թըշնամի: Բառի մէջը երեք բաղաձայն  
հնչիւն ևս կարող են միանալ, առանց միջում ձայ-  
նաւոր ունենալու, միայն բարդութեան և ածանց-  
ման ժամանակ, երբ երկու արմատներ միանում  
են, կամ բաղաձայնների միջից ձայնաւոր հնչիւնը  
սղում է. օրինակ՝ ամպ-ըոպ, մըլս-կան, ընդ-հա-  
տել թըմըկահար—թըմք(ու)կահար, երկնալին—  
երկ(ի)նալին, կըրկնել—կըրկ(ի)նել:

22. Բառերի արմատական ձեփ մէջ, այսինքն  
այնպիսի բառերի մէջ, որոնք բարդուած կամ ա-  
ծանցուած չեն և որոնց երկու բաղաձայնի միջից  
որևէ ձայնաւոր չի սղուիլ միջակ բաղաձայննե-  
րից լետոյ միայն միջակ բաղաձայն կարող է գալ,  
իսկ նուրբ և թաւ բաղաձայններից լետոյ միայն

նուրբ և թաւ հնչիւն: Ուրեմն զ ժ միջակներից լետոյ միայն ը զ դ միջակները կրդան աղջ, սկզբ (թէւ արմատն է սկիս-ը, սկսիլ բառից), աղդ. իսկ շ և իւ թաւերից լետոյ միայն պ կ տ, փ թ նուրբերն ու թաւերը:

Դ(η) Ն Մ դ (իւ) նալերից լետոյ բոլոր բաղաձայնները կարող են գալ:

23. Բաղաձայն հնչիւնների փոփոխութիւնը: Գրաբարի համեմատութեամբ՝ բաղաձայններն ես նոր լեզուի, յատկապէս բարբառների մէջ չեն պահում իրենց յատուկ նախնի հնչիւնը, այլ փոփոխուելով արտասանում են ինչպէս մի և նոյն գործարանի ուրիշ կարդի հնչիւն. օրինակ՝ ը պ փ, զ կ ք, դ իւ և այն, փոխանակում են իրար. եղբայր—եխապայը կամ եխիալը, աղջիկ—ախչիկ կամ ախճիկ, սուգ—սուք:

Գրական լեզուի մէջ՝ բառի սկզբում գրեթէ բոլոր բաղաձայնները պահում են իրենց յատուկ նախնի արտասանութիւնը. բառի մէջը և վերջը փոփոխում են: Սովորաբար նուրբ բաղաձայնը դառնում է միջակ, միջակը՝ թաւ, իսկ թաւը՝ նուրբ: Հստակում:

24. Պ կ տ ծ Շ նուրբերը Ն մ երբեմն և ը նալերից լետոյ սովորաբար արտասանուում են ինչպէս միջակ ը զ դ ծ շ հնչիւնները. օրինակ՝ ամպ (ամը), ընտանիք (ընդանիք), ընկնել (ընդնել), հարկաւոր (հարգաւոր). ալսպէս և բանտ—բանդ, գունտ—գունդ, խնձոր—խնձոր:

25. Բ զ դ ծ միջակները ալ, ոյ երկբար-

բառներից, ը բաղաձայնից, երբեմն և ա է ի ո ու ձայնաւորներից լետոյ սովորաբար արտասանուում են ինչպէս թաւ փ թ ց ծ օրինակ՝ մարդ (մարթ), ծագել (ծաքել), հոգի (հոքի), արջ (արչ), վարժ (վարց):

Նոյն միջակները Ն մ նայերից լետոյ սովորաբար պահում են իրենց հնչիւնը. մի քանի բառերի մէջ միայն փոխում են: Այդ բառերն են անգամ, հանգչել, կենդանի, խնդիք, ընդունել, ընդարձակ, ընդհանուր, ընդհատել, անդամ, համըերել, համըուրել:

Միջակ հնչիւնները բառի վերջում, ձայնաւորներից լետոյ երբեմն արտասանուում են խուլ նուրբ հնչիւնի մօտիկ. փափազ (փափաչ, փափաք), բադ (բատ), շարաբ (շարապ):

26. Միջակ զ հնչիւնը բաղաձայնի առաջ երբեմն, աւելի գաւառական արտասանութեամբ, հնչւում է թաւ ս, որի ազդեցութեան տակ և յաջորդ միջակները նուրբ են արտասանուում. օրինակ՝ աղջ—ասկ, սկիզբ—սկիսպ:

27. Չ նալը բաղաձայնից առաջ թաւ իւ հընչիւնն է ստանում, որի ազդեցութեան տակ և յաջորդ միջակ բաղաձայնները թաւ կամ նուրբ են արտասանուում (տես § 22). Եղբայր—եխապայը, եխիփայը, աղջատ — ախջատ, ախկատ, թուղթ—թուկիթ, թուկս:



28. Թաւ ը հնչիւնը երեեմն, աւելի գաւա-  
ռական արտասանութեամբ, նուրբ և թաւ հըն-  
չիւներից լետոյ արտասանում է ախչպէս նուրբ  
կ. ալէտք է—ալէտկ է, աչքեր — աչկեր, մտքիս—  
մտկիս:

աղջուու յանձ պդյանմ և ո զանցանձն միս  
շնորհ հմազ մի ուժոված ըմազ և հարժար զայ  
մա և մազայ քմ և համաց մայ և մայ մայ  
մայ գմանու պդյան մարօն յարաւ մար  
մարա նարմա յմանը պդյանը խանանց խանցա

անմա նանցան մար պդյանը մայ և  
լույ և համաստոյ մանցա յանձ թիդացա  
(անիսի ձախակ) ուսիսի մասի մա մա յուրան  
(անուա) յանց (անոյ) յայ

յուա մայարա մա մա յ մա մա մա

յանձ անուա մա մա մա մա մա մա մա մա մա  
մա մա մա մա մա մա մա մա մա մա մա մա մա մա

մա մա մա մա մա մա մա մա մա մա մա մա մա մա  
մա մա մա մա մա մա մա մա մա մա մա մա մա մա մա

մա մա մա մա մա մա մա մա մա մա մա մա մա մա մա

ծյար սկսացան ծյար նոր տանման մասի տմասնու  
ամարդ մարդու ծյար ծյար զամ և նաւու չ  
զամ քայակ ուսում մասուն զանձ միա ոյլ  
ոյխացան ի զանձ անուա մասուն մասուն մասուն

### ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

#### ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

29. Ուղղազրութիւն կոչում է բառերը թէ  
տուանձին-առանձին և թէ փոխադարձ կապակցու-  
թեամբ կանոնաւոր և անսխալ գրելու եղանակը, որ  
ընդհանրութիւնից ընդունուած է և տեսականա-  
պէս օրինաւոր համարուած:

Ուղղազրութիւնն ունի հետևեալ չորս տեսակ  
կանոնները.

Ա. Տառերի գրութիւնը կամ գործածութիւնը.

Բ. Բաղադրեալ բառերի գրութիւնը.

Գ. Տրոհութիւնը (տողադարձ և կէտազրու-  
թիւն), և

Դ. Առողանութեան նշանների գործածու-  
թիւնը:

Ա.

Յանձ անձ անձ անձ անձ անձ անձ անձ  
անձ անձ անձ անձ անձ անձ անձ անձ անձ անձ  
անձ անձ անձ անձ անձ անձ անձ անձ անձ անձ անձ

ՏԱՌԵՐԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ.

30. Տառերի գրութեան նկատմամբ ուղղա-  
զրութիւնը լինում է. 1) հնչիւնական (ձախական),  
երբ բառերը գրում են արտասանութեան համե-  
մատ, և 2) սկատմական կամ ստուգաբանական,  
երբ բառերը գրում են հին, արդէն փոխուած ար-

տասսանութեան համեմատ, կամ ընդհանրապէս գործէ ածում հնուց ընդունուած գրութեան եղանակը, որի համար կենդանի խօսքը չի կարող առաջնորդ լինել. օրինակ՝ արտասանում ենք թաքավօր, մարթ, բայց գրում ենք՝ թազաւոր, մարդ: Ստուգաբանական հիմունքը ինկատի ունի և բառերի արմատական գրութիւնը, չնայելով որ բառակազմութեան ժամանակ արտասանութիւնը փոխւում է. օրինակ՝ արտասանում ենք ծախկել, ընթանուր, սեփական, բայց գրում ենք՝ ծաղկել, ընդհանուր, սեպհական, որովհետեւ կազմուած են ծաղիկ, ընդհանուր, սեպուհ արմատներից:

Ամենայն լեզուի ուղղագրութիւն այս երկու տեսակ ուղղագրութեան խառնուրդ է կազմում:

31. Սկզբում գրաբարի ուղղագրութիւնը, հարկաւ, պարզ և որոշ եղած պիտի լինէր, մեծ մասամբ հիմնուած կենդանի արտասանութեան վըրայ, քանի որ ամենայն տառի նախնի հնչիւնը բառերի մէջ կենդանի է եղել և նման հնչիւնների իրարուց ունեցած տարբերութիւնը բացայատ և որոշ բայց լեզուի անընդհատ զարդացման կեանքում բառերի մէջ հնչիւնները հետզետէ փոփոխուած են, այսպէս որ այժմեան արտասանութեամբ մի քանի թէ ձայնաւոր և թէ բաղաձայն հնչիւններ որոշ դէպքերում բոլորովին նոյնացել են կամ որոշ փոփոխութիւններ են կրել (տե՛ս § 8, 10, 11, 23—28): Չնայելով այդ փոփոխութեանը արդի գրական լեզուի մէջ ընդունուած է գրաբարի՝ նախնի արտասանութեան վըրայ հիմնուած

ուղղագրութիւնը \*): Այս հանգամանքն է պատճառը, որ այժմ մեր ուղղագրութիւնը մեծ գրժուարութիւններ և առանձին ուսման ու առաջնորդող կանոնների պէտք ունի:

Գրութիւնը հեշտացնելու համար զանազան ժամանակներում փորձեր եղել են աշխարհաբարի ուղղագրութիւնը հիմնել միայն կենդանի արտասանութեան վըրայ, բայց այդ փորձերը յայտնի պատճառներով անաջող են անցել:

### 1. ԱՌԱՋՆՈՒՐԴՈՂ ԿԱՆՈՆՆԵՐԻ.

32. Չայնաւոր տառերի բաղադրութիւնը:— Ա և ո տառերը յաջորդ բոլոր ձայնաւորների հետ անմիջապէս չեն միանում, այլ միջից ընդունում են յ կէս-ձայնաւորը կամ ձայնակապը, որ յաջորդ ձայնաւորի հետ կազմում է երկբարբառ (տե՛ս §§ 7, 8): Ուստի հնարաւոր են միայն հետեւեալ բաղադրութիւնները՝ այս, այն, այն, այը այի, այո, այու, —ոյա, ոյե, ոյէ, ոյը, ոյո, ոյու. օրինակ՝ կալանք, նալել, երկնային, գոյական, շոլել և այլն:

Օտարազգի բառերի մէջ միայն հնարաւոր են առանց յ ձայնակապի առ, աօ, առւ և այն, պարզ բաղադրութիւնները (տե՛ս օտար. բառերի ուղղագրութիւնը):

\* ) Այժմ գրաբարը նոյնպէս նախնի արտասանութեամբ չենք կարդում, այլ նոր, փոփոխուած արտասանութեամբ:

Բարդ բառերի մէջ այ յօդակապը յաջորդ ձայնաւորի հետ առանց լոյթակապի է միանում. ամենա-ազնիւ, ամենա-ընտիր, ամենա-ողորմած, ամենա-օգտակար:

33. Եւ ի ձայնաւորները լաջորդ ձայնաւորների հետ միանում են առաջ լայնակապի, թէպէտ և ձայնակապով են արտասանուում (§ 8). ուստի հնարաւոր են էա, էե, էի, էո, էու, —իա, իե, իէ, իի, իո, իու, բազադրութիւնները և երբէք իյա, էյէ և ալլն. օրինակ՝ թէական, ասէինք, ձիով և ալլն:

34. Ե ձայնաւորից լետոյ ոչ մի ձայնաւոր չի գրւում, չհաշուած եա, եօ երկբարբառները:  
Հ և օ ձայնաւորներից ոչ առաջ և ոչ լետոյ ոչ մի ձայնաւոր չի գրւում, չհաշուած եօ երկբարբառը և հետևեալ կարգի բարդ բառերը՝ հոգէնկալ, ամենա-ընդունակ, ամենա-օրինաւոր:

35. Զայնաւոր տառերի գրութիւնը: — Զայնաւորներից ա ի ու տառերի գրութիւնն առանձին գժուարութիւն չունի, որովհետեւ արտասանութեան համեմատ է: Առանձին գժուարութիւն ունի ե, է, ո, և ը տառերի գրութիւնը:

Ե, Է

36. Բառի սկզբում ե է ձայնաւորների գըրութիւնը որոշ է, որովհետեւ երկուսի հնչիւնն այդ գէպքում տարբեր է. երկինք, երկար, էջ, էակ:

Բառի վերջում միշտ է է գրւում. ասէ, գըէ, մարգարէ, բազէ, ըոպէ:

Բառի մէջ նախավերջին վանգերում (վերջին վանդից առաջ եղած վանդերում) ընդհանրապէս ե է գրւում. գերի, գերեզման, երեւելի, հրեշտակ: Նախավերջին վանգերում է է գրւում.

1) Ա, օ (ո), ու, ձայնաւորներից առաջ, երբ է-ն պահում է իր սլարդ հնչիւնը, մինչդեռ ե-ն միանալով լաջորդ ա, օ ձայնաւորներին, կազմում է եա, եօ երկբարբառները. օրինակ՝ քրէական, մարգարէութիւնն, Սիմէօն, որ եթէ ե-ով գրուէին, կ'արտասանուէին՝ քրեական, մարգարենութիւնն կամ մարգարիթիւն, Սիմէօն: Այս գէպքում արտասանութիւնն առաջնորդում է գրւութեան ժամանակ:

2) Ի ձայնաւորից առաջ՝ ասէի, խօսէի, —որովհետեւ ե-ից լետոյ ձայնաւոր չի գրւում (§ 34):

3) Հետևեալ բառերի մէջ. այլութիւնն, տէրունական, անօրէնութիւնն, անօրէնութիւնն, գէրութիւնն, (գէր, գիրութիւնն), գէշանալ, գէշութիւնն (գէշ, գիշութիւն). իսկ աղէտաւոր, յաւէտաբար, յաւէրժական և ալլն, գրւում կանոնաւոր ձեւով և աղետաւոր, յաւէտաբար, յաւէրժական, որ և պէտք է ընդունել:

4) Հ-ով են գրւում և հետևեալ կարգի բարդ բառերը. ոսկէօղ, հոգէառ, հոգէընկալ. հոգէորդի և ալլն, որոնց բարդութեան երկրորդ բառը ձայնաւորով է սկսում: Իսկ եթէ ալդ կարգի բարդ բառերի երկրորդ մասը բաղաձայնով է սկսում, ընդհանուր կանոնով նախավերջին վանգերի մէջ ե պէտք է գըել և ոչ է. ոսկէզօծ, ոսկէգոյն, գինետուն, ալիշառն, հոգեգալուստ, և ոչ ոսկէզօծ,

սովէգոյն, գինէտուն, ալէխառն, հոգէգալուստ:

37. Վերջին վանզի, ինչպէս եւ միականզ  
բառերի մէջ է է գրում.

1) Այս բառերի մէջ, որոնց վերջին վանզի  
է հնչիւնը բարդուելիս կամ ածանցուելիս (գրաքա-  
րում և հոլովելիս), եղբ վերջից նոր վանզ է ա-  
մելանում, փոխում է ի հնչիւնի. օրինակ՝ պար-  
տէզ—պարտիզպան, նուէր—նուիրական, նուիրել  
տգէտ—տգիտութիւն, պատուէր—պատուիրել, ալո-  
պէս—ալսպիսի. դէպէ—դիպուած և ալն:

Այս կարգի բառերը հոլվական վերջաւո-  
րութիւններ և յօդեր ընդունելիս պահում են  
վերջին վանզի է-ով գրութիւնը, չնայելով որ այդ  
է նընկնում է նախավերջին վանդեի մէջ. օրինակ՝  
պատուէր, պատուէրով, պատուէրներ. տէրը, տէ-  
րեր, տէրերից և այլն:

2) Հետևեալ վերջալար ածանցական մասնիկ-  
նիկների մէջ. 1) եղէն—կանաչեղէն, ոսկեղէն. 2) ա-  
ւէտեւէտ—ծաղկաւէտ, խոտաւէտ, գինեւէտ. 3) երէն  
—հալերէն, ռուսերէն. 4) օրէն (օրէնք բառի ար-  
մատն է, որից և օրինաւոր) —խստօրէն, պարզօ-  
րէն. 5) սլէս (որի է-ն դառնում է ի, որպէս—որ-  
պիսի) —սաստկապէս, պարզապէս. 6) էք—ջրօրհնէք,  
մեռնօրհնէք, արժէք. 7) կէն—ծակուկէն, ճանճ-  
կէն. 8) էն—նկարէն:

3) էլ, էն, էս, էտ վերջաւորուած լատուկ,  
մէծ մասամբ և հասարակ, անունները. Միքայէլ,  
Գաբրիէլ, Զաւէն, Կայէն, Ներսէս, Արիստակէս,  
Պարէտ (Հասարակ անունները տես ցուցակը):

4) Մի քանի բառերի մէջ, որոնց միջի է-ն  
ածանցուելիս չի դառնում ի, ալլ է է մնում, կամ  
ե է դառնում. գէշ (տգեղ, վատ) —գէշութիւն. գէ-  
շանալ (կալ և գիշութիւն, գիշանալ), փէշ, երէկ—  
երէկուալ, մէկ—մէկերորդ (տասնումէկերորդ), շէկ  
շէկութիւն, բայց շիկաթան, շիկակարմիր. հրէշ—  
հրէշալին, հրէշաւոր, շրէշ—շրէշել, եղէզն—եղէզ-  
նուտ, եղէզնիկ, գմբէթ—գմբէթաւոր, գմբէթարդ,  
աղուէս—աղուեսաքուն, աղուեսնի. կան և եղէզ-  
նուտ, եղէզնիկ, գմբէթարդ, գմբէթաւոր, աղուէ-  
սենի, աղուէսաքուն գրութիւնները, բայց ալդ  
գրութիւններից աւելի կանոնաւոր է է-ով գրու-  
թիւնը: (Այս կարգի բառերը տես ցուցակը):

38. Վերջին վանզի, ինչպէս և միականզ  
բառերի մէջ ե գրում է.

1) այն բառերի մէջ, որոնց վերջին վանզի ե  
հնչիւնը բարդուելիս կամ ածանցուելիս ի չի դառ-  
նում. օրինակ՝ գիշեր—գիշերակին, գիշերել, երես—  
երեսանց, աւեր—աւերակ, աւերել. թեք—թեքել,  
թեքութիւն, ներկ—ներկել, ներկարար:

2) Յոգնականի եր և ներ մասնիկները. տներ,  
գրքեր, քաղաքներ, փողոցներ.

3) Բայերի բոլոր վերջաւորութիւնները՝ ել,  
եմ, ես, ենք, են, եց. բացի անցեալ անկատարի  
էր (էի, էիր, էր, էինք, էիք, էին. տես § 34) և  
էք վերջաւորութիւններից, որոնք է-ով են գըլ-  
ում. ասէր. կ'ասէր, ասէք, ասացէք, կ'ասէք:

Ե-ով է գրում և արգելական հրամայականի  
եր վերջաւորութիւնը. մի ասեր, մի գրեր:

Ա-յ յօդի ըմպել Ո, Օ.

39. Բառի սկզբում ու և օ տառերի հնչիւնը տարբեր է. ո-ն արտասանում է ինչպէս վր վանդ. որդի, որքան. իսկ վ բաղաձայնից առաջ առաջ ինչպէս օ ով, ովկիանոս, ովազիս, ովսաննա: Բառի սկզբում վօ վանգը միշտ գրւում է միշտ այն ո առառով. բացառութիւն կազմում է վոհմակ բառը, որ ունի և կանոնաւոր ոհմակ գրւութիւնը, որը և պէտք է ընտրել:

Բառի վերջում միշտ ո է գրւում, վերջից անձայն յով կամ առանց յի. այս, ոքո, ներքոյ յետոյ:

Միջարկութիւնների վերջում գրւում է օ. օրինակ՝ տօ', Հօ' խօ' (խօմ), օհօ՛:

Բառի մէջ ու և օ միանման օ են արտասանւում, ուստի երբ բառի մէջ վօ վանգը լսուի, ո կամ օ տառն իրենցից առաջ պէտք է ունենան վ, և, ու տառերից մէկը. թագաւոր, առաւօտ, զինուոր:

Լէոն, Թէոդոս, Թէոդօրոս, Գէորգ և սրանց նման մի քանի օտարազգի յատուկ անուններ վով արտասանւում են, բայց գրւում են առանց վի կամ ւի: Միայն Լէոն գրւում է և Լէոն:

Բառի մէջ օ տառն ունեցող արմատները սակաւթիւ են: Օ-ն մեծ մասամբ վերջին վանգի մէջ է գրւում և կազմում հետևեալ բաղադրութիւններ. օդ, օթ, օժ, օղ, օճ, օմ, օն, օս (յանունների օտարազգի ու վերջաւորութիւնը ո-ով է գրւում) օտ, օր և գրաբարի լոգնակի գործիա-

կանի օր վերջաւորութիւնը, որ աշխարհաբարում ածանցական մասնիկների կարգն է անցել:

Օ-ով գրւուղ բառերը տես ցուցակը:

40. Սի քանի բառեր թէ ո-ով են գրւում և թէ օ-ով. ուղղագրութեան հեշտութեան համար այդպիսի բառերի համար պէտք է ընարել ո-ով գրւութիւնը. քող, արտօրալ, գիւղորալք, գեղորալք, վանորալք, և ոչ քօղ, արտօրայ, գիւղօրալք, գեղօրալք, վանօրայ: Ո-ով պէտք է զբել և ներկայ գերբայի ող վերջաւորութիւնը՝ ծնող, կարդացող գրող, և ոչ ծնող, կարգացող գրօղ: Միայն է գրել՝ գրօշմել, խօստանալ, խօստովանել, ալլ պէտք է զբել գրոշմել, խօստանալ, խօստովանել:

41. Ը ծայնաւորի գրութիւնը: — Ը ծայնաւորը բառի մէջ սովորաբար չի գրւում, որովհետեւ, նայելով մօտիկ ձայնաւորների ու բաղաձայնների բաղագրութեանը, երբեմն երկար է արտասանւում, երբեմն սուզ. երբեմն նոյն իսկ այնքան սղւում է, որ կորչում է:

Բառի մէջ ը գրւում է միայն բարդ բառերում, երբ բարդութեան երկրորդ մասը ը-ով է սկսւում. օրինակ՝ նորընծալ, նորընտիր, գարընկեր, արագընթայ, խոչընդուռ և այլն:

Բառի սկզբում եւ վերջում ը-ն միշտ գրւում է. օրինակ՝ ընծալ, ընտիր, ընդարձակ, ըմբռնել, ըղձալ. տունը, գիրը, գոււը, գառը(ն):

Բառի սկզբում սկ, սալ, ստ, սփ, սք, սթ, շպ, շկ, տ, զբ, զզ բաղաձայնների միաւորութիւններից ա-

ուաշ, երբ դրանց ձայնաւոր է յաջորդում, նոյնպէս և գրաբար զ նախդրից առաջ, սուլ ը է արտասանում, բայց չի գրւում:

42. Բաղասային տառերի գրութիւնն առանձին դժուարութիւն ունի միայն բառերի մէջ, որովհետեւ բառերի սկզբում բոլոր բաղաձայններն ընդհանրապէս պահում են իրենց յատուկ հնչիւնը:

Ն, Մ

43. Պ, Ը, Վ շըթնալիններից առաջ միշտ մ է գրւում, որ երբեմն ն է արասասանուում. ամայ, ամբարտաւան, ամիսոփել, ամքոխ:

Բացասական ան մասնիկը ալ ը վի տառերից առաջ պահում է իր ն-ով գրութիւնը. անպակաս, անբաժին, անփոփոխ: Անքիծ բառի մէջ ն-ի փոխանակ գրւում է և մ—ամբիծ: Կանոնաւորութեան համար պէտք է ընտրել անբիծ գրութիւնը:

Ղ, Խ

44. Բաղաձայններից առաջ ղ կամ իւ գրելու ժամանակ պէտք է ինկատի ունենալ բառի կազմութիւնը: Բառի արմատական ձեւի մէջ բաղաձայններից առաջ ընդհանրապէս գրւում է ղ, որ սովորաբար իւ է արտասասանուում. ողբ, եղբայր, խեղճ, դաշճ. բայց թախծութիւն, խախտել, փախչել, լախճապակի, որովհետեւ արմատական ձեւի մէջ իւ է գրւում և ալդ իւն բաղաձայնից առաջ չի ընկնում. թախիծ, խախուտ, որից անխախտ (անխախտ), փախ, (փախուստ), լախիծ—ապակի: Բացա-

ռութիւն կազմում են հետեւեալ արմատական բառերը, որոնց մէջ տ տառից առաջ իւ է գրւում. ախտ, ուխտ, դրախտ, լախտ, տախտ, տախտակ, երախտիք, (ապերախտ), զմրուխտ, ապուխտ, դրուխտ (բարդութեան մէջ՝ Սանդրոխտ, Խորովիդրուխտ), ավանդուխտ, ժխտել, ապախտարք, ախտարք (աղթարք) բախտ, վախճան: Առաջին երկու բառը դ-ով՝ աղտ (կեղտ), ուղտ (կենդանի) ուրիշ նշանակութիւն ունին. իսկ վերջին երկու բառը մի և նոյն նշանակութեամբ դ-ով էլ են գրւում՝ բաղդ, վաղճան: Միատեսակութիւն պահելու համար պէտք է ընտրել բախտ, վաղճան գրութիւնները:

Ռ, Ծ

45. Բառի արմատական ձեւի մէջ Ն բաղաձայնից առաջ, երբ ն-ի և ո-ի միջից մի ձայնաւոր առաջ գուրս ընկել, ո է գրւում բեռնել, բըռնել, խառնել, իսկ միւս բաղաձայններից առաջ ը է գրւում՝ վարդ, կարդ, որդի, կերպ, ջերմ, աղծիւ: Աջանցման և բարդութեան ժամանակ, երբ երկու բաղաձայնի միջից մի ձայնաւոր գուրս է ընկնում, կամ երկու առանձին արմատներ միանում են, ն-ից առաջ ը, ինչպէս և ուրիշ բաղաձայններից առաջ ո կարող է ընկնել. օրինակ՝ գալ(ու)նանային, վեր(ի)նատուն, առ(ի)թիւ, պառ(ի)կել կառ(ը):

Երբեմն ո-ն, արմատական ն-ից հեռանալով, գրաբարի ձեռով ը-ի է փոխւում. օրինակ. դոնա-

պան, ձմեռնալին, ձմեռնամուտ, ամառնալին, ամառնամուտ, բայց դրանիկ, ձմերալին, ձմերել, ձմերանոց, ամարալին, ամարանոց, ալդալէս և հոլովում են գրաբարի ձեռվ գուղ—գրան, լեռ—լերան (գըր. լետոն—լերին). բայց կան և ո-ով գրութիւններ՝ ձմեռալին, ձմեռանոց, ամառանոց, գրան, լեռան: Այս կրկին գրութիւններից պէտք է ընտրել ո-ով գրութիւնը, որ աւելի մօտ է արմատին և աւելի լատուկ է աշխարհաբարին:

Հետեւալ տեսակի բարդ բառերի մէջ, երբ մի և նոյն արմատը մօտէ-մօտ կրկնում է, առաջին ո-ն, բաղաձայններից առաջ ընկնելով, ր-ի է փոխում. օրինակ՝ բարբառ, գրդիռ, կարկառ, մրմուռ, մրմռալ, թրթռալ, կրկռալ, ճռճռալ: Նմանաձայնութիւն ցոյց տուող այդպիսի կրկնուած բառերի մէջ երկու արմատն էլ ո-ով կարերի է գրել, երբ ձայնի սաստկութիւն է ցոյց տալիս, ինչպէս՝ մոմռալ, թռթռալ, ճռճռալ, գոռդուռալ:

Ծ, 2

46. Ձայնաւորներից լետոյ ծի գրւում, այլ ծ կամ ց. բացառութիւն կազմում է օծ բառը:

Բառի մէջը և վերջը ծ դրւում է միայն ր, դ, ն, բաղաձայններից լետոյ. վարժ, դաղճ, հունճ:

Չ-ով սկսուող և բառի մէջ ծ ունեցող բառերը տես ցուցակը:

Յ, չ

47. Բառի սկզբում՝ բաղաձայնից առաջ յ չի

գրւում, այլ միշտ յ. բացառութիւն կազմում են յղել, յղի (յղութիւն, յղանալ), յղկել, յղփութիւն (յղփանալ):

Ծ տառուկ սկսուող արմատների թիւը սահմանված է. այդպիսի բառերի մի մասն առանց յ-ի էլ է արտասանուում և գրւում (տես § 11): Այդպիսի բառերը տես ցուցակը:

Բառի մէջ յ-ն միշտ կէս-ձայնաւոր է հնչւում, ուստի բառի մէջը կամ վերջը չհնչիւնը միշտ պէտք է գրել և տուուի:

Բառի մէջ առ և ո ձայնաւորներից լետոյ յ-ն ծառայում է իբրև ձայնակապ (տես § 32) և իբրւայ, ոյ, էյ երկբարբառների կէս-ձայնաւոր (տես §§ 6, 7):

Բառի վերջում՝ առ և ո ձայնաւորներից լետոյ սովորաբար գրւում է յ, որ անձայն է մնում (տես § 10, 3 բգ). օրինակ՝ ծառպյ, բաշանայ, կրգնայ, կըզայ. ձուլածպյ, կոփածպյ, Աստուծպյ, լետոյ, ներքպյ:

48. Բառի վերջում՝ առ և ո ձայնաւորներից լետոյ յ չի գրւում.

ա) Պերանունների վերջում. սա, դա, նա, սրա, դրա, նրա, (սորա, գորա, նորա սոքա, գոքա, նորա, սոցա, դոցա, նոցա) և քու:

բ) Տակերի հըամալական եղանակի վերջում. (դու) գնամ, կարդամ, արամ, ասամ:

գ) Մակըալների և միջարկութիւնների վերջում. հիմա, ապա, աչա, այս:

դ) Ա վերջացած լատուկ անունների վերջում.  
Անսա, Երեմիա, Սառա, Ասիա:

49. Բառի վերջում ա և ո ձայնաւորներից  
յետոյ անձայն լ գրւում է այն ժամանակ, երբ  
բառակազմութեան ժամանակ լն վերականգնում  
է իր կէս-ձայնաւոր հնչիւնը. ինչպէս ծառայ, ար-  
քայ, ներքոյ, յետոյ բառերից և կըգնայ, կըգայ  
(ապառնի ժամանակ) և գնայ, գայ (ստոր, եղան.)  
ժամանակներից կազմուած՝ ծառալական, արքա-  
յութիւն, ներքոյական, յետոյք բառերի և կը-  
գնայի, կըգնայիր և այլն, գնայի, գնայիր և այլն,  
ժամանակների մէջ:

Բառի վերջում ա և ո ձայնաւորներից յե-  
անձայն լ չի գրւում այն ժամանակ, երբ ոչ մի  
դէպքում այդ լն չի վերականգնում իր կէս-ձայ-  
նաւոր հնչիւնը. Այսպէս լ չի գրւում մակբայների  
ու միջարկութիւնների և հրամայական եղանակի  
վերջում, որովհետեւ մակբայներն ու միջարկու-  
թիւնները և հրամայական եղանակն անփոփոխ են  
մնում և դրանցից այնպիսի ձեեր չեն կազմուում,  
որոնց մէջ լն վերականգներ իր հնչիւնը:

Մինչդեռ գրաբարում, ըստ հնագոյն ուղ-  
ղագրութեան, գերանունների վերջից լ գրւում  
էր՝ սայ, գայ, նայ, սորայ, դորայ, նորայ, քոյ և  
այլն. որովհետեւ յօդ ընդունելիս և հոլովելիս  
լն վերականգնում էր իր հնչիւնը—նախ, քոյդ,  
սորայոյ, դորալոյ—աշխարհաբարում չի գրւում,  
որովհետեւ յօդ ընդունելիս ու հոլովելիս դերա-  
նունները լի փոխանակ ն ձայնակապն են ըն-

դունում. սրա-նը, դրա-նը, նրա-նը, քո-նը,  
քո-նդ:

Այս ստուգաբանական հիման վրայ առանց  
լի պէտք է գրել և

1) Հիմա բառը, չեմ գնա, չես գնա, չի  
գնա և այլն, ապառնի ժամանակը, և ալսօրուա,  
ամսուա, տարուա ու սրանց նման հոլովող բառերի  
սեռական հոլովը, որոնց վերջից կրծատուած է  
կ, և ն տառերը՝ հիմա-կ (հիմի-կ) չեմ գնա-լ,  
չես գնա-լ, չի գնա-լ. այսօրուա-ն, ամսուա-ն,  
տարուա-ն: Հոլովելու ժամանակ ևս այդ տառե-  
րըն են վերականգնում իրենց հնչիւնը, և ոչ լն.  
հիմա-կ-ուա, հիմակուա-ն-ից, տարուա-ն-ից, այ-  
սօրուա-ն-ից:

2) Անցեալ կատարեալի եղակի առաջին  
դէմքը. զարմացա, գոհացա, տեսա. որովհետեւ  
բաղադրիչ ժամանակ չէ և լն չի վերականգ-  
նումիր հնչիւնը, մինչդեռ գրալարում լով է գըր-  
ւում, որովհետեւ այդ դէմքից կազմուում է ապառնի  
ժամանակը՝ զարմացայ-ց, գոհացայ-ց, տեսայ-ց,  
որի մէջ լն վերականգնում է իր հնչիւնը:

3) Աշխարհաբարում տեսականօրէն ճիշտ չէ  
և յատուկ անունների վերջում լ չգրելը, քանի  
որ հոլովելիս, ինչպէս հասարակ անունների մէջ,  
լն վերականգնում է իր հնչիւնը և գրութիւնը.  
Անալի, Սառալի: Այս անճիշտ գրութիւնն ևս  
աշխարհաբարում մնացել է գրաբարից:

Այս անճիշտ գրութիւնները՝ չեմ գնայ, չես  
գնայ, չի գնայ և այլն, այսօրուայ, տարուայ,

զարմացայ, տեսայ, ինչպէս և առանց յշի Սառա,  
Աննա, —պէտք է թողնել, որովհետև, ինչքան էլ  
ցանկալի լինի բառի վերջում լ դրելուն կատամամբ  
կանոնաւոր գրութիւնը վերականգնել, այժմ գը-  
ժուար է այդ անել, բայց հաղիւ թէ առանձին  
պէտք էլ լինի փոփոխելու այնպիսի ձևերի գրու-  
թիւնը, որ ամենքից արդէն ընդունուած և հաս-  
տատառուած է: Միայն հիմա և հիմայ գրութիւն-  
ներից պէտք է ընդունել հիմա ձևը, քանի որ այդ  
բառի գրութիւնը դեռ ևս տատանուում է և  
ճիշտ ձևն է հիմա:

50. Հետևեալ բառերի վերջում ը-ից յետոյ  
հ է գրւում, որ սովորաբար չի արտասահնուում.  
աշխարհ, խոնարհ, ճանապարհ, շնորհ: Հ տառը  
մնում է և բառակազմութեան ժամանակ. աշխար-  
հական, աշխարհք, խոնարհութիւն, շնորհք:

Վ, Ի, ՈՒ

51. Վ, հնչիւնի համար երեք տեսակ նշա-  
նագրութիւն կալ. վ տառը, հին աւ, եւ, իւ երկ-  
բարբառների և տառը, որ այժմ վ է արտասահ-  
նում (տես § 10, 4-րդ), և ու ձայնաւորի երկ-  
տառով գրութիւնը, որ այժմ լաջորդ ձայնաւորի  
առաջ վ է արտասահնուում (տես § 8, 3-րդ):

1) Վ, զրւումէ բառերի սկզբում և ո ձայնա-  
ւորից յետոյ, Վարդան, վազել, ով, ծով, խովկել:  
Բարդութեան ժամանակ բառասկզբի վը պահուում  
է և բառի մէջ՝ զօրա-վար, արագա-վար, Վարդա-

վար, գրա-վաճառ: Բարդ կամ լաղաղը եալ են, ու-  
րեմն և վով պէտք է գրուեն և հետևեալ տեսա-  
կի նմանաձայնութիւն ցոյց տուող բառերը. Ճվլալ,  
ծլվլալ, թովուալ և նմանները, որոնք կազմուած  
են ծըլ-վըլ (ճիլ-վիլ), ծըլ-վըլ ճըլ-վըլ կրկնութիւն-  
ներից: Կրկին վլ պէտք է գրել և հետևեալ տե-  
սակի բառերի մէջ. Չլլալ, շվացնել, գվլալ,  
ծլվլալ:

2) Խ զրւում ե, ի, ը ձայնաւորներից յե-  
տոյ և կազմում է աւ, եւ, իւ, ըւ բաղադրութիւն-  
ները. Հաւ, ցաւել, տերեւ, երեւել, թիւ, հիւանդ:  
Ըւ գործ է ածւում միայն այն դէպքում, երբ ւից  
յետոյ գալիս է բաղաձայն տառ. ինչպէս՝ ծըլծուալ,  
շըլշուալ, սըւսուալ, Քըւնի. նոյնպէս և տողա-  
դարձի ժամանակ (տես Տողադարձի կանոնները):

Ե, օ, ու ձայնաւորներից այ, ոյ երկբարբառ-  
ներից, ինչպէս կրառի վերջը բաղաձայններից յետոյ,  
Հայերէնում վ հնչիւնը չի գալիս, եթէ հարկ լինի  
օտարազգի կամ գառական բառեր գրելու, պէտք  
է վով գրել Լույր, Ալվազ Մերկ. իսկ է և օ  
տառերի գոխանակ պէտք է եւ և ո տառերը գը-  
րել, որոնցից յետոյ կը գրուեն և և վ (Տես Օտար-  
ազգի բառերի ու զլագրութիւնը):

3) Ալ զրւումէ բաղաձայնից յետոյ՝ լաջորդ  
ձայնաւորից առաջ. նուագ, զուարթ, գտնուել.  
Ստորած, յօդուած

Սոյն վահնչիւն ու-ի գրութիւնը մի քանի  
դէպքերում տարածայնութիւնների տեղիք է որ-

ւած. 1) Երբ վ-ահնչիւն ու-ին հետեւում է ու ձայնաւորը՝ ասուլում է, խօսուլում է, թուլում է, դասատութիւն, հովութիւն, — լնդհանրապէս գրում են վ-ով և աւելի ւ-ով ասուլում է, խօս- ւում է, թուլում, դասատութիւն, հովութիւն. կամ ասվում է, խօսվում է, դասատվութիւն, հովվութիւն: 2) Ոմանք կրաւորականի նշան ըն- դունելով վ տառը, ոչ միայն ու ձայնաւորից ա- ռաջ, այլ բոլոր դէպքերում ել կրաւորական բա- յերը գրում են վ-ով. ասվել խօսվել գրված, կազմվեց. նոյնպէս վ-ով են գրում և ժամանակ ցոյց տուող անուների հոլովերը՝ օրվայ, տար- վայ և այլն. իսկ գոյականների մէջ պահում են ու-ով գրութիւնը. Աստուած, նուեր, յօ- դուած: 3) Իւ վերջացած բառերից՝ թիւ, հաշիւ՝ կազմուած բառերը գրում են ւ-ով. հաշւի, հաշւել, թւի, թւել, հովել, հովել:

4) Սակաւերը վերջերս բոլոր դէպքերում ևս վ-ահնչիւն ու-ի փոխանակ սկսել են վ կամ և գրել. ասվել նվեր, Աստված, լեզվի, ձկի, կատ- վի. կամ ասւել նւեր, Աստուած, լեզվի, ձւի, կատվի:

Այս տարածայնութիւնները նրանից են ա- ռաջացել, որ ու երկտառը, տեղին նայելով թէ ու ձայնաւորի և թէ վ բաղաձայնի նշանագիրն է. մանաւանդ որ, բացի այդ վ-ահնչիւն ու-ից, մեր այբբենարանում մի և նոյն հնչիւնի համար կան ուրիշ երկու տառ ևս վ, և, մինչդեռ մի տա- ռը միայն մի հնչիւնի նշանագիր պէտք է լի- նի: (§ 1): Մեր այբբենարանի սյս պակասաւո-

րութիւնն ուղղելու, և գրութիւնն արտասանու- թեանը մօտեցնելու ձգտումից է առաջացել հին վ-ահնչիւն ու-ի փոխանակ վ կամ և գրելը: Սակայն գրութիւնն արտասանութեանը մօտեցնելու ձգ- տումն օրինաւոր է միայն այն ժամանակ, երբ այդ չի հակասում ուղղագրութեան ստուգաբանական հիմունքին, որ բառակազմութիւնն ինկատի ու- նի, և երբ կատարած փոփոխութիւնը նոր տա- րածայնութիւնների ու բազմատեսակութեան տե- ղեք չի տալիս: Այս ինկատի ունենալով, տես- նում ենք, որ վերսպիշեալ առաջին երեք տեսակ գրութիւնները գրութիւնն արտասանութեանը չեն մօտեցնում ու հեշտացնում, քանի որ վ հնչիւ- նի համար դարձեալ մնում են երեք նշանագիր- ները՝ վ, ւ, ու: Գրութիւնը քիչ ու շատ աւելի է մօտենում արտասանութեանը, բայց գժուարու- թիւնը մէջտեղից չի վերանում և չորրորդ տե- սակ ուղղագրութեամբ, այլ միայն տարածայնու- թիւններն ու բազմատեսակ գրութիւնն աւելա- նում է, քանի որ, մի կողմից, ու-ի փոխանակ ո- մանք գրում են վ, ուրիշները՝ ւ, միւս կողմից, վ հնչիւնի համար դարձեալ մնում են երկու նշա- նագիր՝ վ, ւ, և մինչեւ անդամ որոշ դէպքերում ու նշանագիրը, որովհետեւ, ինկատի ունենալով ուղ- ղագրութեան ստուգաբանական սկզբունքը, վ-ա- հնչիւն ու-ի փոխանակ վ կամ և կարելի չէ գրել մի կարգ բառերի մէջ որոնց այս կամ այն ձեռում ու-ն վերականգնում է իր ձայնաւոր հնչիւնը. օրինակ՝ կարելի չէ գրել Աստված, շվաք, անվա-

նել տված, կատվի, ձվի, վերարկվի, տիրացվի,  
չեռից, կամ Աստւած, շւաբ, անւանել և  
քանի որ հետևեալ ձեւրում ուն վերականգնում  
է իր հնչիւնը՝ Աստուծու, շուբ, անուն, տու (շը-  
նորհատու), կատու, ձու, վերարկու, տիրացու,  
հեռու \*):

Աւզդագրութեան մէջ միութիւն և միատե-  
սակութիւն մտած կըլինէր, և գրութիւնն արտա-  
սանութեանը մօտեցած կըլինէր իսկապէս այն  
ժամանակ, երբ վ հնչիւնի համար երեք նշանա-  
գրի փոխանակ ընդունուէր միայն մի տառ, օրի-  
նակ՝ միայն վ, և բոլոր դէպքերում էլ վ հնչիւնն  
այդ տառով գրուեր՝ միսաս, ծարավ, երեվեցավ,  
զվարթ, հիվանդ, հովվառմիւն և այն, բացի այն  
բառերից որոնց մէջ վ-ահնչիւնն ուն վերականգ-  
նում է իր ձայնաւոր հնչիւնը: Վ հնչիւնը մի-  
սան վ տառով գրելու փորձը եղել է մի քանի  
ժամանակ մի քանի անձերի ձեռքով, բայց անա-  
զող է անցել իր որոշ պատճառներով, որոնցից  
գլխաւորն այն է, որ մեր ուզդագրութիւնն այդ  
մասում արդէն հաստատուած և ընդհանրութիւ-  
նից ընդունուած է. իսկ ուզդագրութիւնն այդ-  
պիսի հաստատուած և ընդհանրութիւնից ըն-  
դունուած դէպքերում փոփոխելն անյարմար է,  
քանի որ փոփոխութիւնը եղած միութիւնը խան-  
գարում է և նոր բազմատեսակութիւն մտցնում

\* ) Բարբառների, երբեմ և գրական լեզուի մէջ  
այդ կարգի բառերի ուն շատ անգամ պահում է իր  
ձայնաւոր հնչիւնը, և վ չի արտասանուում:

ուղղագրութեան մէջ: Ուզդագրութեան միութիւնն  
ինկատի ունենալով, հարկաւոր է թողնել հին ուղ-  
ղագրութիւնը վ-ահնչիւնն ու-ի նկատմամբ, ինչ-  
պէս և մնում է ուրիշ շատ փոփոխուած հնչիւն-  
ների գրութիւնը նախնի ձեռվ (մարթ — մարդ, ախ-  
չիկ կամ ախճիկ — աղջիկ և այլն). մանաւանդ որ  
ուսման համար վահնչիւն ու-ի գրութիւնն իր  
որոշ և ընդհանրուր կամոնով այնքան գժուարու-  
թիւն չունի, որքան միւս բաղաձայնների գրութիւ-  
նը, օրինակ՝ երբ բ, գ, դ, զ գրում  
են, բայց վ, ք, թ, ց, իս արտասանուում:  
Ըստ-շատ՝ կարելի է թոյլ տալ որ ու-ի փոխա-  
նակ վ, կամ աւելի և գրուի այն դէպքերում,  
երբ անմիջապէս հետևում է ու ձայնաւորը. օ-  
րինակ ասվում է, խօսվում է, կամ աւելի աս-  
ւում է, խօսւում է, և այս միայն նրա համար,  
որ վերջին կերպով գրողներն աւելի բազմաթիւ  
են, քան ասուում է, խօսուում է գրողները:

## 2. ՄԻ ԵՒ ՆՈՅՆ ԲԱՌԻ ԿՐԻՒ ԳՐՈՒԹԻՒՆԸ.

52. Բազաձայն հնչիւնների փոփոխութեան աղ-  
գեցութեան տակ (§ § 23 – 28) մի կարգ բառեր  
երկու տեսակ են գրում. օրինակ՝ յառաջ — առաջ,  
յետ — ետ, բանտ — բանդ, խճոյք — խնջոյք, որոնցից մէկ  
կամ միւս գրութիւնն աւելի գործածական է, կամ  
երկուսն էլ անխտիր գործ են ածւում:

Մի և նոյն բառի կրկին գրութիւնից այն ձեզ  
պէտք է ընտրել, որն աւելի մօտ է արտասանու-  
թեանը:

53. Ե, մ՝ նայ տառերից յետոյ նախնի՝ նուրբ պէկ կ տ ծ ծ տառերով գրութեան հետ շատ բառեր գրւում են արտասանութեան համեմատ (§ 24) և միջակ ը զ դ ջ տառերով։ Այդ բառերն են.

Ամպարիշտ — ամբարիշտ, ամպար — ամբար,

լամպար — լսմբար (լամբար), անկուշել — անգուշել անկղ — անգղ անկոսնել — անգոսնել, զանկուած — զանգուած, զանկ, զանկակ — զանգ, զանգակ, դանկ — դանգ, թանկ, թանկագին — թանգ, դանգ, դանկ — դանգ, թանկ, թանկ — ժանգ, կանկառ — ժանգագին, ժանգարան, ժանկ — ժանգ, կանկառ — կանգառ, ճանկ — ճանգ, խորամանկ — խորամանգ, յանկ — յանգ, վանկ — վանգ, ցանկ — ցանգ, խունկ — խունգ, ծունկ — ծունգ, կնկուղ — կնկուղ, բանտ — բանտ, ժունտ — կունտ, ընտել — ընդել, ընտելք — ընդերք, ընտոծին — ընդոծին, ընտակեր-ընդակեր (արմատն է ունդ, հունդ), սան-տըր — սանդր, փանիտիոն — փանդիոն, խնձոր — խնձոր, խանձել — խանձել, խինծ — խինձ, կոնծել — կոնծել չնծան — չնծան, ընծիւղել — ընծիւղել, կունծ — կունձ, ինճոյք — ինջոյք, ճանճիոն — ճանճիոն, խոնճան — խոնճան, կինճ — կինջ, խոնճանալ — խոնճանալ։

Սոյն բառերի կրկին գրութիւններից սկզբ է ընտրել երկրորդ ձևով, միջակ տառերով, գրութիւնը, որ արտասանութեան, միանգամայն և մեր լեզուի ընդհանուր հնչիւնաբանութեան համեզուի ընդհանուր մեր բառերի մեծագոյն մասի մէջ նախնի գրութիւմը ն, մ՝ նայերից յետոյ գալիս միջակ տառեր, ինչպէս՝ անգունդ, անգորը, ամբոխ, անձն, տանձ, և ալլն։ Եթէ վերոլիշեալ բա-

ռերի համար միջակ տառերով գրութիւնն ընդունենք, այն ժամանակ սակաւաթիւ բառեր կըմնան, որոնք ն, մ՝ նայերից յետոյ կ'ունենան նուրբ պէկ կ տ ծ ծ տառերը։ Այդ բառերն են.

Ընտառ, անտի (գրաբ.), ընտիր, ընկնել (անկանել), անկելանոց, անկ է, անկուած, յանկարծ, սունկ տունկ, որից տնկել ընկեր, ամպրոպ, ճանճ, անծող ծանծաղ, հանճար, ցանկանալ, ինճիղ, կընճակ, կնտառոց, ցնծալ ընկալ ընկեցիկ (ընկենուլ բայից), ցնկինել ընկլմել ընկրկել ընկճել (ընդճել) անկողին (անգողին) ամպ (ամբ), անկիւն (անգիւն), անծեղ (անձեղ), պանծալ (պանձալ), ընկոյզ (ընգոյզ), ընծայ (ընձայ), անծխոտ (անձխոտ) ընտառնի (ընդառնի), ըմպել (ըմբել), մանկլաւէկ (մանգլաւէկ)։

Սոյն բառերը թէպէտ և մեծ մասամբ միջակ տառերով են արտասանութեան, բայց միջակ տառերով չեն գրւում, բացի մի քանի բառից, որոնց կըրկին գրութիւնը փակագծում դրուած է. բայց այդ գրութիւնները, թէպէտ և այս կամ այն գրուածքի մէջ պատահում են, անգործածական են, ուստի պէտք է նուրբ տառերով գրութիւնը թողնել։

54 Ինծ կենդանու անունը նախնի գրութեամբ գրւում է ինծ և ինծ. վերջին ձևով է միշտ գրւում ես գերանուան տրական հոլովը, ուստի տարբերելու համար կենդանու անունը կարելի է գրել միշտ ինծ ձևով, իսկ գերանունը՝ ինծ։

Գունդ, երբ զօրագունդ, եռումք է նշանակում, նախնի գրութեամբ միշտ դով է գրւում, իսկ երբ

գնտակ, երկրագումս է նշանակում, երկու ձևով՝ էլ գրւում է գունդ, գունտ. երկրորդ իմաստով պէտք է գրել միայն տոհված իսկ առաջին իմաստով դուք նոյնպէս՝

Կնճիթ, երբ խոզի, փղի կնճիթ է նշանակում, իսկ կնջիթ, երբ քունջութ ըոյսն է նշանակում:

Կնճիռ, երբ երեսի խորշոյ է նշանակում, իսկ կնջիռ, երբ խաղողի թեփ՝ կնջեռն է նշանակում:

55. Նախընթաց շրատ է ի ո ու հնչիւնների և այ, ոյ երբարբառների ազգեցութեան տակ՝ լաջորդ միջակ բ դ ձ միջակ տառերը թաւփ (թես § 25: Այս կարգի բառերը տես Յուցակը), բայց կրկին գրութիւն չունին, բացի սակաւաթիւ բառերից՝ թազչիլ, թագ կենալ-թաքչիլ, թաքկեն ալ, թաքուն, թակարդ-թակարթ, ադարադ-աքաղադ, անհեղեղ-անհեղեթ: Պէտք է ընտրել երկրորդ ձևով գրութիւնները, որ արտասանութեան համեմատ են:

56. Յաջորդ թաւ և հնչիւնի ազգեցութեան տակ՝ նախընթաց ժ միջակը՝ թաւ շ է արաասանում, որովհետև թաւ և միջակ հնչիւնները չեն կարող միանալ (թես § 22). դժխոյ-դշխոյ, աժխոյժաշխոյժ, դժխեմ-դշխեմ: Պէտք է ընտրել երկրորդ գրութիւնները, որ արտասանութեան համեմատ են:

Դժ բայցասական մասնիկն անփոփոխ է մնում. դժպհի, դժպատեհ, դժկամակ, դժբախտ: Դժ գոհ, դժդոյն բառերը գրւում են և տժգոհ, տժգոյն. պէտք է, միաձեռւթեան համար, ընտրել առաջին գրութիւնները:

Վայ Յաօսարւցգի բառերի ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ.

Եմայի վայ յանուան և Տ ծ ը ընսպու վանից քայլան ըմայի 7. Հին գրականութիւնից՝ գրաբարից ներ նոր գրականութեանն անցած օտարազգի բառերն ու յատուկ անունները պէտք է այնպէս գրել, ինչպէս գրաբարում գրուած կան, քանի որ այդ բառերից շատը՝ ազգային հնչիւնաբանութեան ազգեցութեան տակ՝ այնպիսի փոփոխութեան են ենթարկուած, որ օտարազգի բառի իսկական արտասանութիւնից հեռացած են և, կարելի է ասել, հայացած են: Պէտք է գրել՝ փիլիսոփայ, Եւրոպա, Սոլոմոն կամ Սոլոմոն, և ոչ փիլօսօֆ կամ փիլօսօփայ, Եվրոպա, Սոլոմոն:

58. Տառադարձութիւն: Լեզուի մէջ նոր մըտնող օտար բառերն և աւելի՝ յատուկ անունները պէտք է այնպէս գրել, որ, որքան կարելի է, հայերէն գրութեան արտասանութիւնը մօտ լինի այն լեզուների արտասանութեանը, որոնցից առնւում են այդ բառերը: Դրա համար պէտք է օտարազգի ամեն մի հնչիւնը հայերէնում մի և նոյն հնչիւնը նըշանակող տառով նշանակել, կամ ճիշտ տառադարձութիւն անել: Մեր տառերը համապատասխան են հետևեալ Եւրոպական տառերին. բ=b, ռռւսաց ճ=ջ, ռս. Ռ. դ=d, ռս. Ջ. պ=p, ռս. Ա. կ=k, ռս. Է. տ=t, ռս. Թ. ք=q, թ=th.

59. Պոլսեցիք և արևմտեան գաղթական հայերը, Նրանց հետեւլով և առհասարակ արևմտեան գրական լեզուով Խօսողներն ու գրողները, որովհետև մեր բոլոր նուրբ տառերը միջակ են արտասանում, իսկ միջակները՝ թաւ, իս-

բենց արտասանութեան համեմատ և օտարազգի միջակ, օրինակ՝ ոռուսաց Յ Ր Ա տառերը մեր նուրբ պէկ տառերով են տառադարձում, իսկ նրանց նուրբ Ա Ե Տ տառերը մեր միջակ բ դ դ կամ թաւ փ ք թ տառերով են տառադարձում. օրինակ՝ Ռետերբուրգ, Կովեյկա, փոխանակ գրելու Պետերբուրգ, կոպէկ, գրում են՝ Բեդերպուրկ, գորէգ կամ Փեթերպուրկ, քոփէք մինչդեռ հին գրականութիւնից մնացած օտարազգի բառերն ու անունները մեր՝ արևելեան հայոց կամ, որ մի և նոյն է, նախնի տառադարձութեամբ են թողնում.

Պետրոս, Կոստանդնուպոլիս, Սովորատէս, և ոչ Բեդրոս, Գոսդանդնուրոլիս, Սովորադէս կամ Փեթրոս, Քոսթանթնուրոլիս, Սովորաթէս: Պոլսեցոց տառադարձութիւնը համեմատ չէ ո. Մեսրոպեան տառադարձութեանը և մեր բնիկ, հայրենի արտասանութեանը:

60. Պակաս նշանազրեր: — Օտարազգի անունները շատ անգամ դժուար է ճշտութեամբ հայերէն դարձնել, որովհետև մեր այբբենարանում չըկան օտար լեզուների մէջ եղած շատ հնչիւններ: Նոյն իսկ մեր գաւառական բարբառները շատ այնպիսի հնչիւններ ունին, որոնց համար առանձին նշանազրեր չկան մեր այբբենարանում: Այդպիսի հնչիւնների համար առաջարկուած են առանձին նշանազրեր. բայց նոր, պայմանական նշանները յարմար են միայն գաւառական բարբառներով գրելու ժամանակ և գիտնական գրուածքների մէջ, երբ հարկաւոր է օտար կամ գաւառական հնչիւնները

ճիշտ արտայալտել. իսկ օտար բառերի և լատուկ անունների գրութեան մէջ, որքան կարելի է, պէտք է աշխատել մեր այբբենարանի օգնութեամբ ճշշտութիւն պահպանել:

1) Ֆրանս. և (գերմ. Ա) Հնչիւնը բաղաձայնից առաջ պէտք է գրել իւ երկբարբառով, որ քիչ ու շատ մօտ է և հնչիւնին. Հիւգոյ, Նիւտոն: Իսկ բառի վերջում և բառի մէջ ձայնաւորից առաջ աւելի յարմար է գրել եռու կամ իռու ձեռվ, որովհետև նեռն այդ դէպքերում իվ է կարդացւում. Նեռուն կամ Նիւռ-Եօրկ, Սեռու կամ Նիւռ-Եօրկ, Սիու, և ոչ Նիւ-Եօրկ Սիւ, որ կըկարգացուին Նիվ-Եօրկ, Սիվ:

2) Ֆրանս. և (գերմ. Ծ) Հնչիւնը բառի մէջ պէտք է գրել եօ երկբարբառով, իսկ բառի սկզբում պէտք է գրել էօ ձեռվ, Էօման, Էօզել, Էօֆեն, որովհետև եօն այդ դէպքում աւելի է հեռանում և հնչիւնից: Արևմտեան հայերը բառի մէջ ևս էօ ձեռվ են գրում Գէօթէ, Նլէօցեր, փոխանակ գրելու Գէօթէ, Նլէօցեր:

3) Օտարազգի փափուկ լ-ն (լ, լի) հայերէնում կամ պահում է իւր հնչիւնը, կամ թանձր է արտասանւում: Որպէս զի լ-ն, ինչպէս և ֆրանս. ցո (Ա) հնչիւնը, փափուկ տրտասանուի, պէտք է լ և ն տառերին յաջորդող ա, օ ձայնաւորներից առաջ և տառն աւելացնել և եա, եօ երկբարբառները կազմել, որոնցից առաջ լ, մասամբ և ն, տառը կազմել, պայմանական առաջ լ, մասամբ և ն, տառը փափուկ է արտասանւում (տես §§ 15, 17). billard, brilliant, compagnon պէտք է գրել բիլերդ, բրիլեանտ, կոմպանիոն, և ոչ բիլարդ, բրիլանտ, կոմ-

պանոն։ Նոյնպէս եթէ ու և նա տառերն ընկնում են բառի վերջը կամ բառի մէջ բաղաձաձայնից առաջ, նախընթացիա, և ձայնաւորներից լետոյալիտք, է աւելացնել յ տառը և կազմել բայահէյերկթարբառները, աղրմագից լետոյով և մարդամբ առենք տառերը փափուկ են արտասանելում։ պալտոյ, ամալգամ, Շամպայն, և ոչ պալտոյ, մամալգամ, Շամպան, ֆրանս, և տուիլ գրութիւնն ևս միշտալիտք է ալլ էլլ գրել, եմայլ, մեծանուն, պորտֆէյլ, ալտէ-ին լաջորդով առաջաւորներից, առաջ դարձեալ պէտք է ալտէլքում և տառն աւելացնել bataillon, մեծանուն, մեդայլեօն։ ջն ժուաֆափուկ լըն (հին ժամանակ) գրում (էին լ գլխին փշեկ կոչուած նշանով) վերջերս էլ սմանք սկսել են այդ պայմանական նշանագիրը դործած ծել որ և եթէ տարածուի, շատ յարմարէ։

61. Օտարազգի յա (յ), յէ, յու (յօ), յօ երկբարբահները նախնիք յա, յե կամ ե, յու, յո (յօ) են գրել. բայց այժմ բառի սկզբում ալդպէս կարելի չէ գրել, քանի որ յ-ն բառի սկզբում չ է կարդացուում (տես § 11), և պէտք է գրել՝ եա, ե, իւ, եօ երկբարբառներով — Jaffa, Jena, junker, jurist, jod — եաֆա, ենա, իւնկեր, իւրիստ, եօդ, որ նախնիք կըգրէին Յաֆա, Յենա կամ ենա, իւնկեր, յուրիստ, յոդ։ Սիդ երկբարբառները հին յա, յե, յու, յո (յօ) ձեռվ պէտք է գրել բառի մէջ առ ձայնաւորներից լետոյ, որովհետեւ ալտէլքում յ-ն պահում է իր կէս-ձայնաւոր հնչիւնը և լաջորդ ձայնաւորների հետ երկբարբառ է կազմում (§ 7). մայօր, մայօր-

ժօնս մայօր, մայօրդոմ, ալդպէս և բայոննա, կայուտա, Գուբրովսկայա, Համ-Փայետ. և ոչ մաեօր, մակօրդոմ, բայօննա, կայլւտա, Թուբրովսկաեա, Լամֆաետ։ Յ գում ու մշտակ բանն զու չ Յ լամփակիառի մէջ եթէ յօ երկբարբառը բաղաձայնից լետոյ է գրելիս պէտք է գրել իւ, օբիեկտ, սուս բիեկտ։ Թիւրքահայերն այդ գէպէքում ևս շատ անդամ յով են գրում։

62. յա, յի, յու գրութիւնները պէտք է գարձնելարիա, իւ (իէ), իու, իո (իօ) ձեերով. piano piast, pièce, radius — պիանոյ պիանո, պիես, ուսդիուս։

63. Օտարազգի յ (յօ) տառը տառադարձում է բառի սկզբում սովորաբար ու տառով. Ուաքէլ Ուորովամ, ուաքրի, բառի մէջը և վերջը ըտառով. Եիլեր, Սենեքերիմ, բարոն (պարոն). իսկ ն բաղձայնից առաջ ու տառով. Կեօններ, Կառնոյ։

64. Ե, է, ո, օ տառերի գրութիւն օտարազգի բառերի մէջ։ Ընդհանուր կանոն է, որ օտարազգի բառերն ու լատուկ անունները պէտք է հայերէնի ուղղագրութեան ընդհանուր կանոնների համեմտու գրել. ուստի ու տառը բառի սկզբում և վերջում պէտք է գրել է (ուստաց ե-ն պէտք է գրել ե), իսկ բառի մէջ ե, բացի ի ձայնաւորից առաջ, երբ պէտք է գրել է (տես §§ 36, 37, 38). տեմպերատուր, պրոֆեսոր, Տեսնին, Լենքորան և ոչ տէմպէրատուր, պրոֆէսոր, Ցէսին։ Նոյնպէս և պէտք է գրել և վերջին վանգի մէջ, քանի որ օտարազգի բառերի վերջին վանգի է հնչիւնը, ածանցուելիս կամ բարդուելիս, ի հնչիւնի

չի փոխւում. ինժեներ, բանկետ, սիստեմ, որոնցից ինժեներալին, սիստեմաբար:

Ժողովրդական լեզուից գրականական լեզուի  
մէջ նոր մասող բառերն ևս պէտք է ե-ով գրել:

65. Օտարազդի օ տառը պէտք է դարձնել.  
բառի սկզբում օ, իսկ բառի մէջը և վերջը ո. Օ-  
դիւստ, Օդեսսա. Սոկրատ, փելիսոփայ, պայլույշ  
Հիւգոյ:

Բառի մէջը և վերջը ո-ով պէտք է գրել,  
ինկատի ունենալով, որ 1) մեր բառերը, սակաւ բա-  
ցառութեամբ, այդ գէպքերում ո-ով են գրւում:  
2) նախնիք ևս օտարազդի օ հնչիւնը ո-ով են  
գրել, մինչև անդամ բառի սկզբում. Ներոն, Կի-  
կերոն, Սոկրատ, Թէոդոս. Ոլիմպ, Ովիդիոս: Այժմ  
բառի սկզբում միայն վ բաղաձայնից առաջ կա-  
րելի է ո-ով գրել որովհետեւ միւս գէպքերում  
բառասկզբի ո-ն արտասանւում է ինչպէս վո:

Ինչպէս հայերէն բառերի վերջում աւ և ո ձայ-  
նաւորներից յետոյ անձայն յ է գրւում, որովհետեւ  
ալդ յ-ն բառի ուրիշ ձեռում վերականգնում է իր  
կէս-ձայնաւոր հիշիւնը (§ 49), այլպէս և օտա-  
րազդի բառերի վերջում, ընդհանուր կանոնով, ա  
և ո ձայնաւորներից յետոյ յ պէտք է գրել. բիւ-  
րոյ, պայլտոյ, դեպոյ. որոնք կանոնաւոր հոլովում  
են բիւրոյի, պայլտոյի, դեպոյի, բիւրոյով, պայլտո-  
յով, դեպոյով. և ոչ բիւրոի, պայլտոի, դեպոի, բիւ-  
րոով, պայլտոով, դեպոով, կամ բիւրօի, պայլտօի,  
դեպօի, բիւրօյի, դեպօյով, որպիսի բաղադրութիւն-  
ներ չկան հայերէնում: Նոյնպէս պէտք է գրել և

Փիղիկայ, փիլիսոփայ, մեքենայ, անատոմիայ, խո-  
լերայ:

Միաձեռնութեան համար կարելի է թոյլ տալ,  
որ ո վերջացած յատուկ անունների վերջում ևս  
յ չգրուի, ինչպէս ա վերջացած ժամանակ չի  
գրւում. ինչպէս գրւում են Սառա, Անսա, բայց  
Սառայի, Անսայի, նոյնպէս կարելի է գրել Ռուս-  
սո, Կառնո, բայց Ռուսսոյի, Կառնոյի. թէպէտե  
աւելի ճիշտ կըլինի գրել Ռուսսոյ, Կառնոյ, Ճիւ-  
գոյ, ինչպէս գրւում են արևմտեան հայերը:

Օտարազդի բառերի մէջը և վերջը օ-ով  
կարելի է գրել միայն ձայնաւորներից յետոյ՝ Լէօ,  
Ֆէօդալ. որովհետեւ այդ գէպքում ո-ն շատ ան-  
գամ ւ (վ) ձայնակապով է կարդացւում: Նոյն-  
պէս օ-ով պէտք է գրել և հետեւեալ տեսակի  
բառերը՝ բօյ, Տոլստօյ, ոազքօյնիկ, որոնք եթէ  
ո-ով գրուեն՝ բօյ, Տոլստոյ, ոազքօյնիկ, — կըկար-  
գացուեն բօյ, Տոլստօ, ոազքօյնիկ

66. Օտարազդի բառերը վ հնչիւնի գրութեան  
նկատմամբ ևս հայոց լեզուի ուղղագրութեան  
ընդհանուր կանոնի համեմատ պէտք է գրել. բա-  
ռի սկզբում և ո ձայնաւորից յետոյ վ. միւս ձայ-  
նաւորներից յետոյ ւ, իսկ բաղաձայններից յետոյ  
ու. օրինակ՝ վագոն, վորոնցով, Մոլդավիա, Զուի-  
ցերիա, Շուեդիա:

67. Ձայնակապ յ: — Ա և ո ձայնաւորներից  
յետոյ, երբ գրանց յաջորդում են ձայնաւորներ,  
հայոց լեզուի հնչիւնաբանութեամբ, պէտք է գրել  
յ ձայնակապը. ուստի ա—օ, ա—օ, ա—ս, ա—ի, օ—ա,

օ—օ, օ—օ, օ—ս բաղադրութիւնները հայերէնում  
պէտք է դարձնել այո, այի, այու, այի, ոյա, ոյի,  
ոյի, ոյու. օրինակ՝ Միքա-լէլ, Տրո-լ-ա, պո-լ-ետ,  
և ոչ Միքայէլ. Տրոա կամ Տրօա, պօէտ:

Երբեմն յ ձայնակապի փոխանակ երկու ձայ-  
նաւորների մէջ մտնում է ւ (վ), սակաւ անգամ  
հ ձայնակապը. Դայնա-ւ-ու, Սա-ւ-ուղ, Տրո-վ-ադա,  
եասա-ւ-ուլ, զարա-ւ-ուլ, Աբրահամ:

Միւս ձայնաւորներն օտարազգի բաւերի մէջ  
ևս յաջորդ ձայնաւորներին միանում են առանց  
ձայնակապի, թէւ սովորաբար յ ձայնակապով են  
արտասանեում. Գաբրիէլ, Սէիր:

Եթէ օտարազգի բաւերը չեն ենթարկում  
մեր հնչիւնաբանութեանը և երկու կից ձայնա-  
ւորներն առանց յ ձայնակապի են արտասանեում,  
արտասանութեան համեմոտ առանց ձայնակապի  
էլ կարելի է գրել. ինչպէս Կատալաուն, Կլոակ,  
կլուն, բօալ, որ նախնիք կը գրէին Կադալայուն,  
կլոյակ, կլոյուն բոյալ, կամ Կատալաուն, կլովակ,  
կլովուն, բովալ:

68. Մի եւ նոյն հնչիւնի կրկնութիւնը՝ Հա-  
յոց լեզուին յատուկ չէ, որ մի և նոյն հնչիւնը,  
ձայնաւոր թէ բաղաձայն, ետևէ, ետև կրկնութի.  
ուստի օտարազգի անունների մի մասը հայերէ-  
նում առանց հնչիւնների կրկնութեան են գրում,  
թէպէտ և օտար լեզուների մէջ կրկնուած են. օ-  
րինակ՝ Թաղէոս, Ապոլոն (Ապողոն), Թեսալիա  
(Թեսաղիա), և ոչ Թաղէոս, Ապոլոն, Թեսալիա.  
մինչդեռ ուրիշ անունների մէջ սահմանում է կը ը-

նութիւնը. ՅԱՆԻԱ, Փիլիպպոս, Պո-աքքի, Աքիւլէս,  
Բաղաձայն հնչիւնները կրկնուած կամ առանց  
կրկնելու գրելու համար՝ պէտք է առաջնորդ ունե-  
նալ արտասանութիւնը. Եթէ հայերէնում արտասա-  
նութեան ժամանակ չի կրկնուած, գրելիս էլ պէտք  
է չկրկնել, ինչպէս՝ պրոֆեսոր, կոմիսիալ, Պրու-  
սիա, իսկ, ընդհակառակն, Եթէ արտասանութեան  
ժամանակ կրկնուած է, պէտք է գրելու ժամանակ  
ևս կրկնել. ինչպէս՝ Շիլեր, Պատոփիս և այլ (1)

Բառի վերջում մի և նոյն հնչիւնը երբէք  
կարելի չէ կրկնել. Գրիմ, Ցիմմերման, պրոգրամ,  
Սկոտ, և ոչ Գրիմ, Ցիմմերմանն, պրոգրամմ  
Սկոտու: Այսպիսի անուններն առանց կրկնութեան  
պէտք է գրել և հոլովելիս. Գրիմի, Ցիմմերմանի,  
պրոգրամի: Այսպիսի անուններն առանց կրկնութեան

Ձայնաւորների կրկնութիւնը միշտ պէտք է  
պահել. Քարքի, Լաօկօօն, Մօօրինաթրզան (2)

Երբ ձայնաւորներն առանց ձայնակապի են  
միանում, պէտք է օ-ով գրել ինչպէս վերսիշեալ  
բառերի մէջ: Ամա իսկ մայմունի նայ մայման

4. Գլուխտսու Գրութեալութիւններ.

69. Հին ժամանակ գլխատառով կամ Երկա-  
թագրով գրում էին բոլոր բառերն ամբողջապէս,  
որովհետև ս. Մեսրոպի հնարած տառերը միայն  
ալդ ձեւ ունէին. ալժմ, երբ տառերի ձեւերը շատ  
են, երկաթագիրը գործ է ածւուք իբրև գրուածա-  
քի մի զարդարանք. օրինակ՝ գրքերի վերնագիրներն  
ամբողջապէս երկաթագրով են տպագրում: Բացի դրա-

նից՝ երկաթագիրն իբրև դլխատառ գործ է և որոշ գէպքերում։ Գլխատառով սկսում են.

1) Գրուածքի սկզբի բառը և վերջակէտից յետոյ առաջին բառը։

2) Պատմութեան մէջ բերուած ուրիշի բառացի խօսքերի առաջին բառը։

3) Ոտանաւորի ամեն մի տողի սկզբի բառը։

4) Այն բոլոր բառերը, որոնք քրիստոնէական ճշմարիտ Աստուծու մտքով են գործ ածւում։ Աստուած, Ս. Երրորդութիւն, Հայր, Որդի, Ս. Հոգի, Տէր, Փրկիչ, Արարիչ, Նոյնպէս և Նախախնամութիւն, Նախասահմանութիւն, Նախասահմանութիւն, Վերին Տեսչութիւն, Երկինք և այլն։ Գլխատառով են գրւում և Աստուածութեան անունների տեղ գործածուած անձնական դերանունները՝ նա, Ինքն, Իւր և այլն։

5) Մարդկանց յատուկ անունները, ինչպէս և այդ անունների երկրորդական կամ աւելի կոչումները, մականունները, հասարակ անուն լինին, թէ ածական կամ թուական։ Յովկաննէս Մկրտիչ, Յուլիանոս Ուրացող, Յովկաննէս Կոլոս, Աշոտ Երկաթ, Աշոտ Ողորմած, Ներսէս Մեծն, Ներսէս Շնորհալի, Ներսէս Հինգերորդ Աշտարակցի, Լևոն Վեցերորդ, Գաւիթ-Բէկ, Մելիք Շահնազար։ Մարիամ Աստուածածին, Տիրամայր Ս. Կոյս, Աստուածամայր, և այլն։

Տիտղոսները, պաշտօնների ու կոչումնների անունները, երբ ընդհանուր մտքով են գործածում, փոքրատառով են սկսում։ պատրիարք, առաջարք, առաքեալ թագավոր, կայսր, բայց երբ պաշտօն

վարող մի լայտնի անձի համար են գործածում, գլխատառով են գրւում. Թագաւոր-Կայսրը, Վեհափառ Կաթողիկոսը, Սրբազն Առաջնորդը, Պատրիարքը, և այն։ Գլխատառով են գրւում և գրաւոր յարաբերութիւնների մէջ պատուի համար գործածուած տիտղոսներն ու պաշտօնի անունները. Նորին Վեհափառութիւն, Զերդ Սրբազնութիւն, Սրբազն Հայր, Հայր Սուրբ, Զեր Յարդութիւն, Մեծապատիւ Պարոն, Պարոն և այլն, նոյնպէս և յոգնակի Զ-րդ գէմքի Դուք, Զեր գերանունները։

6) Երկիր, տէրութիւն, նահանգ, գաւառ, քաղաք, գիւղ, ծով, դաշտ, գետ, լիճ, ջրանցք և այլն, նշանակող աշխարհագրական անունները, նոյնպէս և փողոցների, շինութիւնների, կամուրջների, նաւերի և այլն, յատուկ անունները. Հայաստան, Այրարատ Երևան, Ս. Էջմիածին, Մասիս, Երասխ, Սևանայ Լիճ և այլն։

Երբ անունը կազմուած է ածականից ու գոյականից, միայն ածականն է գլխատառով գրւում։ Երբ գոյականն ընդհանուր մտքով է գործածում, այսինքն ցոյց է տալիս այն տեսակը, որին պատկանում է առարկան. Աւ ծով, Կարմիր ծով, Այրարատեան աշխարհ, Երևանեան նահանգ, Ներսիսիեան գպրոց, Գէորգեան Ճեմարան, Աւ ջուր, Վանայ Լիճ. — իսկ երբ գոյականն ընդհանուր մտքով չի գործածում, այն ժամանակ թէ ածականը և թէ գոյականը գլխատառով են սկսում, նոր Քաղաք (Վաղարշապատ), Մայր Աթոռ (Ս. Էջմիածին)։

Ազգերի, ցեղերի, կրօնների և այլն, նոյնպէս

և աշխարհի կողմերի անունները փոքրատառով են  
սկսում: Տայ, Տայոց ազգ, ոուսներ, զերմա-  
նացիք, եւրոպացիք, քրիստոնէութիւն, մահ-  
մեղականութիւն, արեւելք, արեւմուտք, հիւ-  
սիս, Տարաւ Քայց Երբ աշխարհի կողմերի ա-  
նունները գործ են ածւում այդ կողմերում բնա-  
կուող ազգերի մոքով դլխատառով են սկսում:  
Արեւմուտքը, Արեւելքը, Այսինքն արեւմտեան,  
արեւելեան ազգերը:

7) Բարձրագոյն կառավարչական Հաստատու-  
թիւնների, ինչպէս և գիտնական և այլ ընկերու-  
թիւնների անունները. Պետական Խորհուրդ, Ս. Սի-  
սոդ, Գիտութեանց Ճեմարան: Երբեմն, Երբ անունը  
Երկու կամ մի քանի բառից է կազմուած, դլխատա-  
ռով գրւում է դրանցից մէկն ու մէկը, նայելով  
որ բառն է յատուեկ անուն համարւում և որը հա-  
սարակ. Բագուի Հայոց Մարդասիրական ընկերութիւն,  
Կովկասի Հայոց Բարեգործական ընկերութիւն:

8) Գրքերի, պարբերական Հրատարակութիւն-  
ների, յօդուածների վերնագիրները. Գործք Առա-  
քելոց, Ասկի Աքաղաղ, Այցելու, Խորհար, Արձագանք:

Բայց Երբ գրքերի անունները մէջ են բեր-  
ւում ոչ թէ նրանց վերտառութիւնը ցոյց տալու  
համար, այլ բովանդակութիւնը, այն ժամանակ  
դլխատառով չեն գրւում. առտօւածաշունչ, աւետա-  
րան, յայսմաւուրք:

9.) Գրքան առաջ եւ առաջ մասնաւոյն գլուխ  
(Այսուհետեւ Ա) առաջ առաջ առաջ առաջ առաջ  
անձնաւ մասնաւոյն արդյուն առաջ առաջ առաջ

ուստի այսուայ բայց մասն մասն առաջ առաջ առ-  
աջ առաջ մասն մասն առաջ այսուհետեւ գրութիւնը  
յայ ամբուղբարեւ բարեւրի գրութիւնը:

70. Երբեմն երկու կամ երեք բառ միանում,  
մի բաղադրեալ բառ են կազմում և հարմարւում  
են իբրև խօսքի մի մաս (մասն-բանի): Բաղադրեալ  
բառերը կամ միացած են գրւում, կամ առանձին-  
առանձին, կամ թէ գծիկով են միանում:

Կան բաղադրեալ բառեր, որ ոմանք միացած  
են գրում, ոմանք առանձին-առանձին. օրինակ՝  
ոչոք—ոք, որպէսզի—որպէս զի, ևեթ—և եթ:

71. Միացած պէտք է գրել ընդհանրապէս  
այն բաղադրեալ բառերը, որոնց մի մասն՝ առան-  
ձին վերցրած՝ չի գործածւում, ինչպէս են վերո-  
յիշեալ բառերի ոք, զի, ևթ բաղադրիչ մասերը: Հա-  
կառակ գէպում աւելի լաւ է միշտ առանձին-  
առանձին գրել:

72. Միացած պէտք է գրել.

1) Հետևեալ դերանունները, մակբայներն ու  
ջաղկապները, որոնց մի բաղադրիչ մասն առանձին  
չի գործածւում. ոչոք, ոքմին, իքմին, մէկմէկու, մէկ-  
մէկուց, ևեթ (իսկոյն ևեթ), որպէսզի, վասնզի, միթէ,  
միանդամայն, զորօրինակ այլուր, ամենուրեք, նաև,  
նամանաւանդ, այնուամենայնիւ, այսուամենայնիւ, նոյն-  
ժամայն, գրեթէ:

Այսչափ, այսչափ, այնչափ, մըշափ, ինչչափ, նոյնչափ,  
այստեղ, այդտեղ, այնտեղ, մըտեղ ինչտեղ մըտեղ այս-  
տեղից, այդտեղից, այնտեղից, նոյնտեղից, որտեղից, մը-

աեղեց, ի՞նչտեղեց, մէջտեղ, մէջտեղեց, այսօր, այնօր,  
կէսօր (միջօրէ) բառերը միասին են գրւում, երբ  
մի դերանուան կամ մի մակրայի միտք ունին. իսկ  
երբ սկզբի այս, այդ, այն, ինչ, որ, մէջ դերա-  
նունները պահում են իրենց ինքնուրոյն նշանա-  
կութիւնը և իրեւ որոշող բառ որոշում են չափ,  
տեղ, որ գոյականներին, այն ժամանակ առանձին  
են գրւում. օրինակ՝ ո՞րտեղ (ո՞ւը) գնացիր, եկ այս-  
տեղ (հոս, ալսը.), ո՞րտեղեց (ուստի) եկար և ալլն.  
բայց ո՞ր տեղն ընտրեցիր. այս տեղս, գնացին այն  
տեղը, որ նշանակել էին. ամենքն այն տեղի համար  
էին աշխատում և ալլն. Որ չափով կըչափէք, նոյն  
չափով կըչափեն և ձեզ. Այն օրը մեւ լինէր. Մին-  
չեւ կէսօր (ժամը 12, միջօրէ) մնացին այնտեղ, բայց  
մինչ կէս օր (ժամանակի տևողութիւն) մնացին այն-  
տեղ: Մէկէլ, մէկտեղ բառերը միացած են գրւում,  
երբ նշանակում են միւս, միատեղ կամ միասին.—Երէկ  
չէ՝ մէկէլ օրը (միւս օրը). մէկտեղ լացինք մեք ի հը-  
նումն. իսկ երբ նշանակում են մէկ անգամ էլ (յան-  
կարծ), որևէ տեղ, այն ժամանակ առանձին-առան-  
ձին են գրւում: Մէկ էլ (մի անգամ էլ) աստ, մէկ  
էլ տեսնես (յանկարծ). մէկ տեղ (որևէ տեղ) ընտ-  
րեցէք ձեզ համար:

2) Եւ շաղկապով միացած հետևեալ բառերը,  
որոնց առանձին մասերը կորցնում են իրենց ինք-  
նուրոյն նշանակութիւնը, և երեք բառը միասին  
մի դերանուան կամ մակրայի միտք են ստանում.  
որևէ, որևիցէ, ովևէ, ովկիցէ, ինչևէ, որպի-  
որևէ, որևիցէ, ովևէ, ովկիցէ, ինչևէ, որպի-

սիեկիցէ (դերանուն, շաղկապ և բայց միանալով կաղ-  
մում են մի նոր, առանձին իմաստով դերանուն),  
ուրեւէ, ուրեւիցէ, երբեւէ, երբեւիցէ (մակրայ, շաղկապ  
և բայց միանալով կազմում են մի նոր իմաստով  
մակրայ):

Մինչեւ նոյն բառը պէտք չէ միացած գրել,  
քանի որ այդ բառի առանձին մասերը աշխարհա-  
քարում ինքնուրոյն նշանակութեամբ գործ են ած-  
ւում և եւ շաղկապով միացած ժամանակ պահում  
են իրենց առանձին նշանակութիւնը. սաւ նա մի՛  
բան են անում, սա և նա նոյն բանն են անում. —Վերջին ձեռվ  
ասուած նախադասութիւնը նոյն իմաստն ունի,  
ինչ որ առաջին երկու նախադասութիւնները, մի-  
այն մի և նոյն բառերի միանալով՝ իմաստն աւե-  
լի սաստկանում է:

3) Տասից վերև մինչեւ քսան թուականները,  
ու շաղկապով միացած լինին՝ թէ չէ. տասնումէկ,  
տասներկու, տասներեք, տասնուշինգ, տաս-  
նուվեց, տասնեօթ, տասնութ, տասնինն:

4) Ու կամ եւ շաղկապով միացած հետե-  
ւեալ բառերը, որոնց միացած գրութիւնը հնուց  
ընդունուած է, կամ որոնցից ածանցուելով ու բար-  
գուելով նոր բառեր են կազմւում. այրուձի, ելեէջ,  
առեւտուր, առուտուր (առեւտրական), ելումուտ, ելե-  
մուտ (ելեմտական), երթեւեկ (երթեւեկել, երթեւ-  
եկութիւն), տարուբեր (տարուբերել), առեանդ (առե-  
ւանդութիւն), այլեայլ (առանց այլեայլութեան),  
տուրեառ (տուրեառութիւն): Միացած են գրւում

նորնալէս և տանուտէր, տանտիկին, օրումեջ, կէսուակէս,  
մինուձարք: իսունանի մշամառ ոյու մն մն եւուն  
72: Ու, եւ շաղկապներով միացած համանիշ  
բայրմատները, որոնք խոնարհուում են լինել ա-  
նել, գալ օժանդակ բայերով, և համանիշ կամ մօ-  
տիկ նշանակութիւն ունեցող գոյականները, ածա-  
կաններն ու մակբայները, որոնք միասին գործ են  
ածւում մտքի սաստիութիւն ցոյց տալու համար,  
պէտք է առանձին-առանձին գրել ջարդ ու բուրդ,  
քար ու քանդ (անել, լինել), կուչ ու հուպ (գալ)  
հաւ ու մաշ կամ հալ և մաշ (անել, լինել), ջարդ ու  
փշուր, ցիր ու ցան, խաղը ու խայտառակ (անել, լի-  
նել): մասանի մլու ցմունի հասարայտամ ծառուն  
Առանձին-առանձին պէտք է գրել նոյնպէն:  
Ահ ու գող ահ ու սարսափ, ծեծ ու փետ, լաց  
ու կոծ, թիւ ու համար, սուգ ու շիւան, տուն  
տեղ, աս ու լիս, ախ ու վախ, արդ ու զարդ,  
հող ու մոխիր, տէր ու տիրական, ակն ու արե-  
գակ, խօսք ու զրոյց, հաւ ու ձիւ, ծառ ու ձիւղ,  
ձիւն ու ձիւռ (ձիւն-ձիւռ), ձայն ու ծղթառ,  
պարտք ու պատուհաս, սկ ու մութ (օր), տուր  
ըրու ու դմբոց, քունջ ու պուճախ, բար ու ապառաժ  
(կտրուել), քիթ ու պառնդ (ցոյց տալ), խորտ  
ու բորտ, պարտ ու պատշաճ, հատ ու կենդ,  
հատ ու կտոր, գունա ու կծիկ, երկար ու ձիգ,  
տես ու ձանաչ, կուշտ ու կուռ (ուտել), հեշտ,  
ու հանգիստ, մեղք ու կրակ (բան), ձար ու ձրագ  
(մաքրդի), կեր ու խուր, թուր ու մուր, օր ու  
նորդիշեր (ամբողջ օրը), դէս ու դէս, շատ ու քիչ

դաի տակն ու վըայ (անել), նախ և առաջ, առաջ  
ու առաջ, հարց ու փորձ, դուրս ու տուն (ա-  
նել), ներս ու դուրս (անել), կոյս ու կոկոն,  
նիստ ու կաց, բուրդ ու բամբակը (գզել), փառք  
նայ ու պատիւ, թագ ու պսակ, փառք ու պարծանք,  
ձեռն ու ոտ (անել), ոտ ու գլուխ (խաշ), նետ  
ու աղեղ (նետ-աղեղ), կարդ ու սարք, սարք ու  
կարգ, լերդ ու թոր, աղ ու հաց, վար ու ցանք,  
ուշ ու միտք, անց ու դարձ, ել ու մուտ, ել և  
մուտ, առ ու կուլ (անել), բաց ու խուփ (ա-  
նել), մի և նոյն և այն:

Առանձին-առանձին պէտք է գրել և մի և նոյն  
բառի եւ, ու շաղկապով միացած կրկնութիւնը. դէմ  
ու դէմ, իսկ և իսկ, դէպ ու դէպ, անց ու անցք (գլո-  
խին, եկածը), տեղն ու տեղը, մէկն ու մէկը (ս, դ)  
և այն. նոյնպէս և հետեւեալ կարգի կրկնութիւն-  
ները. հաց ու մաց, ծուռ ու մուռ, սուտ ու մուտ  
և այն, ծակ ու ծուկ, հանդ ու հունդ, ժանդ ու  
ժունդ, սուս ու փուս, նազ ու դուզ, հունք ու բունք,  
ձէն ու ձուն, չեմ ու չում (անել), և այն:

Ու, եւ շաղկապներով միացած այսպիսի բա-  
ռերից մի քանիսը ոմանք միացած են գրում, ըն-  
դունելով իբրև մի բառ, իսկ մեծ մասն առան-  
ձին-առանձին են գրում. հետեւողաբար վարուե-  
լու համար կամ բալոր այսպիսի բառերը միացած  
պէտք է գրել կամ բոլորն ել առանձին-առանձին:  
Միացած գրելուն իբրև միակ հիմք ծառայում  
է այն, որ ու, եւ շաղկապներով միացած երկու բառն  
իբրև մի բառ են հոլովում և յօդ ընդունում.

օրինակ՝ վար ու ցանք, վար ու ցանքի, վար  
ու ցանքից, և այն: Բայց միայն այդ հիմքով կա-  
րելի չէ այդպիսի բառերը միացած գրել, քանի  
որ մեր լեզուի ընդհանուր յատկութիւնն է, որ  
ոչ միայն ու շաղկապով միացած համանիշ կամ  
մօտիկ նշանակութիւն ունեցող բառերն են այդ-  
պէս հոլովում, այլ նոյն իսկ բոլորովին տարբեր  
նշանակութիւն ունեցող բառերը, երբ միամանա-  
կան՝ հաւաքական մտքով են առնեում. օրինակ՝  
Հարս ու փեսայ, մարդ ու կնիկ, սար ու ձոր,  
մեծ ու փոքր, սուր ու զէնք, խօսք ու գործք,  
թուր ու հրացան, հրէշք ու ցաւ, արտ ու  
արօտ և այն, կարելի է, մանաւանդ բանառ-  
տեղծական լեզուի մէջ, հոլովէլ հարս ու փե-  
սայի, մարդ ու կնկայ, սար ու ձորից, մեծ ու  
փոքրի, սուր ու զէնքերով, խօսք ու գործքե-  
րով, թուր ու հրացանով, հրէշք ու ցաւերից,  
արտ ու արօտից և այն: Միւս կողմից, եթէ  
ու շաղկապով միացած այդպիսի բառերը միացած  
գրուելու լինին, այն ժամանակ մեր բառերի մե-  
ծագոյն մասն, այս կամ այն բառի հետ ու շաղ-  
կապով միացած, իբրև նոր բառ պէտք է համա-  
րուին և բառարանի մէջ մանեն, իսկ այդ անհնար  
է, որովհետև այդպիսի միաւորութիւններին սահ-  
ման դնել կարելի չէ, քանի որ շատ անգամ մի-  
աւորութիւնները կախուած են գրողի կամ Խօ-  
սողի ճաշակից: Այս անյարմարութիւնից ազատ  
մնալու և գրութեան մէջ միաձեռութիւնն պահելու  
համար՝ այսպիսի բառերը պէտք է առանձին-ա-

ռանձին գրել, բաւական համարելով, որ ու շաղ-  
կապով արդէն միացած են, մանաւանդ որ ընդ-  
հանրութիւնն այդպիսի բառերն առանձին-առան-  
ձին է գրում: Առանձին գրելուն իբրև հիմք կա-  
րող է ծառայել և այն, որ այդպիսի միաւորուած  
կրկն բառերից երկուսն ևս առանձին-առանձին  
շեշտուում են իբրև ջոկ բառ. ջարդ ու ընկը-  
անել, ահ ու գողը բանեց:

73. Գրաքարի ի, առ, ընդ, ըստ, նոյնպէս և  
մինչ նախդիմերն աշխարհաքարում առանձին, ինք-  
նուրոյն նշանակութեամբ չեն գործածուում, այլ  
որոշ բառերի սկզբից միայն գրուելով, նրանց ա-  
ռանձին նոր նշանակութիւն են տալիս. ուստի այդ-  
նախդիրները պէտք է միացած գրել այն բառե-  
րի հետ, որոնց սկզբից գրուուած են: Նախդիրնե-  
րի հետ միացած բառերն աշխարհաքարում մեծ  
մասամբ մակբալ են դառնում, բացի սակաւաթիւ-  
բառերից, որոնք նախադրութեան միտք ունին:  
Այդպիսի բառերն են.

Նախադրութիւններ. իվեր, իվայր (գետն իվեր,  
գետն իվայր, այն օրից իվեր), դէպի, բացի:

Մակբալներ. իդէպ, իբուն (օրն իբուն), իզուր,  
իսպառ, իբաց (առեալ), իսես (գալ, դնել), իդերև  
(հանել), ինկատի (առնել), իբնէ, իծնէ, իպաշտնէ,  
իհա՛րկէ, իվերջոյ, իմօտոյ, իսրտէ (բայց՝ ի բոլոր սըր-  
տէ), առժամանակ, առժամամ, մի, առժամս, առայժմ, առ-  
հասարակ, առառաւելն, առնուազն, առհարկի, առո-  
չինչ (համարել), առմիշտ, ընդառաջ, ընդհակառակն,  
ընդամենը, ընդմիշտ, ընդսմին, ընդնմին, ըստիս, ըստ-

այսմ, ըստայնմ, ըստորում, ըստինքեան, նոյնպէս և  
մինչայս, մինչայդ, մինչայն (մինչև այս, այդ, այն ժա-  
մանակը, տեղը), մինչդեռ:

Առ, ընդ, ըստ, ինչպէս և ի նախդիրներով  
բաղադրուած շատ բառեր կան, որոնց միացած  
գրութիւնն արդէն հաստատուած և ընդհանրու-  
թիւնից ընդունուած է, ինչպէս են, առաւել  
(առ աւելի), առաջօք (առ աջօք), առողանել,  
առընթեր, առօրեալ, առժաման, առհաւատ-  
չեալ, առձեռն, ընդունել ընդունակ, ընդարձ  
ձակ, ընդհատել, ընդդէմ և այլն: այս միայն  
Միացած պէտք է գրել և որևէ նախդրով  
միացած երկու առանձին բառերը, կամ մի և նոյն  
բառի կրկնութիւնը. գզնզգզն, կորդկուրան, բեռ  
բանքիփեր, շարիշար, կաղիկաղ, փոխիփոխ, ծուլիծուլ  
(լինել), մէկէնիմէկ, տեղնիտեղ, գլխիփայր, գլխիփեր,  
զառիփայր, զառիփեր, հիմիփեր, դարիփայր, դարիփեր,  
լանջիփայր, լանջիփեր, խառնիխուռն, բացէիբաց, առի-  
չգոյէ, փոքրիշատէ, վերջիփերջոյ, կարճիկարճոյ, վերի-  
փերջոյ, գերիփերջոյ, օրէցօր, տարեցտարի, որդեցորդի,  
օրըստօրէ, օրընդմէջ, խոընդոտն, մերթընդմերթ, մէջ-  
ընդմէջ, ինքնըստինքեան:

Մի և նոյն բառի կրկնութիւնը, երբ միջին  
ունենում է առ նախդիրը, առանձին-առանձին (է)  
գրուած. միացնելն այն անյարմարութիւնն ունի,  
որ շատ այդպիսի բառեր, կրկնուած ձեռվի իբրև  
նոր բառ պիտի համարուէին. մէկ էլ բազմավանդ  
բառերի կրկնութիւնից շատ երկար բառեր կըկազ-  
մուեին: Ուստի ինչպէս առանձին-առանձին պէտք

է գրել ժամանակ առ ժամանակ, սակաւ առ սակաւ,  
փոքր առ փոքր, ճակատ առ վճակատ, նոյնպէս և փոխ  
առ փոխ, վէտ առ վէտ, միշտառ մի, բառ առ բառ,  
տող առ տող, գէմ առ գէմ, քայլ առ քայլ, տուն առ  
տուն, դաս (առ դաս, խիտ) առ խիտ և այլն:

Այսպիսի բառերն, աւելի բանաւոր կըլինէր,  
միացած կամ առանձին-առանձին գրելու փոխանակ  
գծիկով միացնել ժամանակ-առ ժամանակ, փոքր-առ-  
փոքր, բառ-առ-բառ. բայց այդպիսի գրութիւնն ըն-  
դունուած չէ. գծիկով կարելի է բաժանել և հե-  
տեւեալ բառերը, որոնք միացած կամ առանձին-  
առանձին են գրուած. բացէ-իբաց, փոքր-իշատէ, վերջ-  
իփերջոյ, կարճ-իկարճոյ, վերիփերջոյ, գերիփերջոյ, օրէ-  
օր, տարեցտարի, որդեցորդի, մէկէն-իմէկ:

Երբ ի, առ, ըստ, նախդիրներն աշխարհա-  
ծո բարիում գործ են ածանում ինքնուրոյն նշանակու-  
թեամբ համար (ի), դէպի - (առ), համեմատ,  
որոնայիշլով (ըստ) և այլ նախդիրութիւնների մըտ-  
քով առանձին են գրուած նախդիրների այդպի-  
սի գործածութիւնն աշխարհաբարում գրաբարից  
է փոխառնուած. ուստի և շատ անգամ նախ-  
դիրների նեղիրն էլ գրաբարի նման է հոլովում  
ու վարւում. (ի) վնաս նորա, ի սէր Աստուծոյ  
ի նպաստ, ի փրկութիւն աշխարհի, ի (փառս  
Աստուծոյ, ի զարմանս կամ ի մեծ զարմանս  
աշխարհի ի վարձատրութիւն, ի տրիտուր, ի  
ալատիժ, ի իշշատակ, առ Աստուծոյ դիմել. հետ  
թանու հայերի ջերմեւանդութիւնն առ Աստու-  
ծիկ գիցուհին՝ մեծ էր. մեր պարտականուա-

թիւնն առ Աստուած և առ թագաւորն . .  
ըստ պատշաճին, ըստ երկութին, ըստ մեծութեան, ըստ օրինի, ըստ ամենայնի, ըստ պատահման, ըստ մեծի մասին և այլն:

74. Միութեան զիծ կամ լոկ գծիկ (-) գրւում է լնդհանրապէս այն երկու, երբեմն և երեք բառի մէջ, որոնք միասին մի բառի միտք ունին, բայց միացած գրելն ընդունուած չէ. այդպիսի բառերը գծիկով միացած մի բառ են համարւում:

Գծիկի գործածութիւնը եւրոպական լեզուներից նոր է մանում մեր լեզաւի մէջ, և դեռ ևս շաա բառեր, որոնք միասին մի բառի միտք ունին, առանց գծիկի են գրւում:

Գծիկով պէտք է միացնել.

1) Մի և նոյն բառի հետևեալ տեսակի կըըկնութիւնները, երբ ու շաղկապով չեն միացած. սուտ - մուտ, տուն - մուն, հաց - մաց, ձանձ - մանձ ոլոր-մոլոր սեփկ-մեփկ և այլն. նոյնպէս և մարդ-մարդասուն, մարդ-մադաթ, մարդ-մուրդ, աման-չաման, սպառ-սպուռ (միացած էլ է գրւում՝ սպառըսպուռ), ծակ-ծուկ, ձայն-ձուն, փասայ-փուսայ, փալսա-փուլսա, պարապ-սարապ, հարայ-հրոց, աւալ-թաւալ, լոթի-փոթի, հայիլ-մայիլ (լինել), և այլն:

2) Հետևեալ տեսակի կըկնութիւնները, երբ ածականի առաջին վանգը, մասնաւոր փոփոխութեամբ, գրւում է ածականի սկզբից՝ սաստկութիւն ցոլց տալու համար կաս-կարմիր, ճիփ-ճերմակ, մէն-մենակ կամ միս-մինակ, սեփ-սև, կափ-կանաչ դեփ-դեղին, դափ-դառիկ և այլն:

3) Մի և նոյն թուականների կըկնութիւնները, որ բաշխական թուականների մաքով են գործ ածւում. մէկ-մէկ, երկու-երկու, կամ աւելի՝ երկ'-երկու\*, երեք-երեք, չորս-չորս, հինգ-հինգ և այլն:  
\* Առաջին երկու-ի ուն սղուած է, դրա համար վրան գրուած է ապաթարց'') նշանը:

4) Թուականների հետևեալ տեսակի կըկնութիւնները, երբ անորոշ, մերձաւոր թիւ են ցոլց տալիս. մէկ-երկու, երկու-երեք, երեք-չորս, չորս-հինգ. և այլն:

5) Թուականների հետևեալ տեսակի բաղադրութիւնները գոյականների հետ. երկու-երեւանի, երեք-յարկանի, չորս-աչքանի վեց-մատնանի, եօթըգլխանի և այլն:

6) Մի և նոյն գոյական անունների կըկնութիւնները, որոնք մի ածականի կամ մակըալի միտք են ստանում, ինչպէս և մի և նոյն ածական անունների և մակըալնների կըկնութիւնները. թել-թել գոյն-գոյն, գունդ-գունդ, փունջ-փունջ, ժամանակ-ժամանակ, տեղ-տեղ, կարդ-կարդ, խումբ-խումբ, գասդաս, ծուռ-ծուռ, քիչ-քիչ, քիչը-քիչը, քչից-քչից, շատշատ, մեծ-մեծ, սկ-սկ, փոքր-փոքր, ծանր-ծանր, մանր-մանր, փոխ-փոխ, կախ-կախ, ստէպ-ստէպ, շուտ-շուտ, ուշ-ուշ, կամաց-կամաց, վեր-վեր, ետ-ետ (յետ-յետ), հատ-հատ, հազիւ-հազ, երբեմն-երբեմն, պէս-պէս (միացած էլ է գրւում՝ պէսպէս):

Կըկնուած ածականը սովորաբար գրւում է յոդնակի թուով գոյականի վրայ. այդ գէպ.քում շատ անգամ գծով չեն միացնում ածականի կըկնութիւնները:

թիւնը, որովհետեւ երկու բառը միասին նոր բառ ոի միտք չեն ստանում, բայց գարձեալ միացնելն աւելի բանաւոր է, քանի որ երկու ածականը միտք չեն ստանում, բայց մի ածականի միտք ունի և կրկնում են սաստկութիւն ցոյց տալու համար. օրինակ ու-սւամպեր, մեծ-մեծ տներ, լաւ լաւ ջրեր, մութ-մութ ձորեր, մի և նոյն է ասել սևանեամպեր, մեծամեծ տներ, լաւալաւ ջրեր, մթնամութ (մթնախաւար) ձորեր:

7) Գերանունների կրկնութիւնները, որ յոդնականի միտք են ստանում, սովորաբար առ անձինառանձին են գրում. ՞Վ ով, (՞Վքեր), ՞Եմ ում, ի՞նչ ի՞նչ (ի՞նչեր), այս այս (բանը). բայց աւելի ճիշտ կը ինի գծիկով միացրած գրել. ՞Վով (՞Վքեր) են, ՞Եմ-ում տուեց, այս-այս բանը, ի՞նչ-ի՞նչ դուքս ձգուեցաւ, այս-այն (մարդ), այս-ի՞նչ, այն-ի՞նչ, նոյնպէս այսանուն, այն-անուն (մարդը), իրան-իրան խօսում է, և այլն;

Շատ անգամ այդպիսի կրկնութիւնները միանում են և, ու շաղկապներով. այն ժամանակ առանձին-առանձին են գրում. ով ու ով, ում և ում, այս ու այս, այս ու այն, քեզ ու քեզ, ի՞նձ ու ի՞նձ և այլն:

8) Երկու ածական կամ գոյական անուն, ի՞նչպէս և երկու մակեալ, երբ միաւորեալ մտքով են գործ ածւում. պատմական-փիլիսոփայական, կրօնական-բարոյական, հայ-պարթեական, ոււսութիւլքական, հայ-համարիամարիա, Աւստրա-Հունգարիա, Շու-

Նորուեգիա, Կամայ-ակամայ, Սականե-յանուանէ, ուշի-ուշով, ակն-յանդիման, դէմ-յանդիման, յայտ-յանդի-ման, ձեռք-ձեռքի:

9) Առհասարակ ու, եւ, կամ թէ շաղկապներով չմիացած համանիշ կամ մօտիկ նշանակութիւն ունեցող գոյականները, ածականներն ու մակեալները, որոնք միասին գործ են ածւում մի ընդհանուր նշանակութեամբ, կամ մտքի սաստկութիւն ցոյց տալու համար. կահ-կարասիբ, ձէն-ծպտուն, ձէն-ծըպուտ, ծտի-ծիծաղ, երդում-կրակն (լնկնել), մեռնաւաղան (ենք), հայ-հու, հայ-հայ, վայ-վայ (հայ-հայը գնացել է, վայ-վայն է մնացել), ազգով-տակով (Ճանակնել) տեղով-բարձով (թեք լնկնել), գնալ-դալ (ունենալ), սոսով-գլուխ (կորչել), կտոր-բրդուճ, սունչտեղ աւել-պա կաս (աւել-պակասի համար, կըներէք), կերած-իմած (իդ), հագած-մաշած (իդ, մատագ), զուգած-զարդարած, մեռնել-կենդանութիւն (կայ), արիւն-արտասուք (թափել) սոող-խօսող (մարդ), սանող-բերող (մարդ), կորած-մոլորած, անցնող-դարձող (ից), կիսատ-պատ, տանող-տանողի (է), ուտող-ուտողի (է), առօք-փառօք, լսոյն-արձակ, արձակ-համարձակ, աղատ-արձակ, անտունանտեր, դէսից-դէսից, շատից-բչից, կանաչ-կարմիր (ծիածան), ցերեցան (անել), դէս-դէն (լնկնել), գիշեր-ցերեկ, օրլ-ցերեկով (օր-ցերեկով, օր ու ցերեկով), էսօր-էգուց, էգուց-էլօր (բայց էգուց չէ էլօր), երկայն-բարակ (ձգուել), վաղ-ուշ, ժամանակ-առժամանակ, ծանօթ-անծանօթ, գլուխ-պատռած (գլխալատառ ներս լնկնել) շան-սատակ (անել), բան-հայ-

(անել), մինչայս-մինչայն (գլում-են և մինչ այս՝  
մինչ այն):

Այս կարգի բառերի մեջ մասն ընդհանրա-  
պէս գրում են առանց գծով միացնելու, կամ եր-  
կու բառը տոորակէտով բաժանելով, բայց այդ-  
պէս գրել յարմարէ միայն բառի ուղղական հո-  
ղանակով, իսկ սեռականն ու միւս հոլովները կա-  
րելի չեն այդպէս գրել՝ կահ կարասիքի, ծափ  
ծիծաղի (նշաւակ), գնալ գալու համար և այլն.  
կամ կահ, կարասիքի. ծափ, ծիծաղի. գնալ,  
գալու (համար), քանի որ երկու բառը միասին  
իրեւ մի բառ են հոլովում և ընդունում:  
10) Կէս բառը լաջորդ գոյականի հետ, երբ  
գործ է ածւում ոչ (իբրև) որոշող բառ, այլ  
երկու բառը միասին մի նոր ընդհանուր նշանա-  
կութիւն են ստանում. կէս-գիշեր (գիշերուալ ժա-  
մը 12-ը. իսկ կէս գիշեր, երբ գիշերուալ կէսի չափ  
ժամանակի տևողութիւն է նշանակում), կէս-բերան  
(կիսաբերան), կէս-կուժ (կիսակուժ, դորակ), կէս-  
ձայնաւոր (կիսաձայն), կէս-բաց (կիսաբաց), կէս-ճա-  
նապարհ (կիսաճանապարհ, կիսաճանպա), կէս-մեռած  
(կիսամեռ), կէս-կենդանի (կիսակենդան): և այլն:

11) Փոխ գոյականը լաջորդ գոյականի (հետ,  
երբ փոխանորդի մտքով է) գործ ածւում. փոխ-  
տեսուչ, փոխանդանդապետ, փոխանդախափաշ և այլն:

12) Ոչ մակբալը, երբ լաջորդ գոյականի, ա-  
ծականի և մակբալի սկզբից դրւում է իբրև բա-  
ցասական մասնիկ՝ հակառակ նշանակութիւն ցոյց

(անքաղաքագէտ), ոչ-իմաստասէր (անիմաստասէր),  
ոչհեռու, ոչմօտիկ, ոչփոքք, ոչմեծ, ոչազգային,  
ոչհայ և այլն: մակրայն ընդհանրապէս գծով չեն միաց-  
վում, մակրայն ընդհանրապէս գծով միացնելն  
աւելի բանաւոր է:

Նախ 13) Երբ մի ածական և մի գոյական բարդ-  
ւում են առանց այլ յօդակապի, կամ ածականը չի  
ենթարկւում ձայնաւորների վոփսխման և կորուս-  
ման կանոնին. օրինակ ծուռ-բերան, ծուռ-վեզ, պինդ-  
գլուխ, սուտ-զրոյց, սուտ-ասան, սուտ-անուն, կուշտ-  
փոր, նոյնպէս երկար-ականջ, բաց-բերան, ծակ-աչք,  
բաց-սիրտ, չար-եղու, բաց-գլուխ, մեծ-սիրտ և այլն,  
որոնք իսկապէս պիտի բարդուէին՝ ծուռբերան, ծուռ-  
վեզ կամ ծուռիզ պնդագլուխ, սուտ-զրոյց (ինչպէս ստա-  
խօս), ստասան (ստասաց), ստանուն, կշտափոր, երկա-  
րականջ, բացաբերան, ծակաչք, բացասիրտ (սրտաբաց),  
չարալեզու, բացագլուխ (գլխաբաց), մեծասիրտ ձև երով:

Այս կարգի բարդ բառերը շատ անգամ  
միացած են գրում՝ ծուռբերան, սուտանուն,  
սուտ-զրոյց, չար-եղու, բացբերան, ծակաչք,  
որ և կարելի է. բայց առանձին-առանձին գրել՝  
բաց բերան, ծակ աչք, պինդ գլուխ, չար լե-  
զու և այլն, կարելի չէ, որովհետև այն ժամա-  
նակ առանձին գրուած ածականը յաջորդ գոյա-  
կանին որոշող բառ կը բառայ, մինչդեռ երկուսը  
միասին մի բարդ բառ են և մի ածականինշանա-  
կութիւն ունին:

75. Առանձին-առանձին են գրւում.

1) Թուականներ, որոնք եւ, ու շաղկապով միա-

ցած են, տասնակ մէկ, տասն և երկու, տասն և երեք, տասն և չորս և այլն. նոյնդէս և քսան և մէկ, քսան և երկու կամ քսան ու մէկ, քսան ու երկու. երեսուն և մէկ և միւսները (տափց մինչև քսան ու շաղկապով միայն թռւականների գրութիւնը տես § 71, 3-րդ):

Քանից վերև թռւականները, որոնք ու կամ եւ շաղկապով չեն միայնած, ոմանք միացած են գրում, ոմանք առանձին-առանձին. քսան մէկ, քսան երկու, քսան երեք... երեսուն մէկ, երեսուն երկու... կամ քսանմէկ, քսաներկու, քսաներեք, քսանչորս... երեսունմէկ, երեսուներկու... և միւսները՝ Աւելի յար-մար է արդպիսի թռւականները միայնած կամ առանձին-առանձին՝ գրելու փոխանակ՝ գծով միացանել. քսանմէկ, քսան-երկու, քսան-երեք, քսան-չորս... երեսուն-մէկ, երեսուն-երկու և այլն. իսկ երկու հարիւր, երեք հարիւր, չորս հարիւր... երկու հազար, երեք հազար և այլն, առանձին-առանձին պէտք է գրել:

2) Դերանուններ՝ մի քանի, մէկ քանի, քանի մի, քանի մէկ, ամեն մի, ամեն մէկ, ինըն իրեն, ով որ, որը որ, ինչ որ:

Ովոր, ինչ-որ, երբ նշանակում են որևէ մէկը, որևէ բան, պէտք է գծով միացնել ով-որ (որևէ մարդ) եկաւ ձեզ մօտ. ինչ-որ բան ասաց նրա ականջին: Գծով պէտք է միացնել և մէն-մի, որովհետև մէն բառն աւանձին չի գործածւում:

3) Մակըայներ՝ մի անգամ, մէկ անգամ, երկու անգամ, երեք անգամ և այլն. ոչ երբէք ոչ մի, ոչ

մէկ, ոչ մի տեղ մի տեղ ո՞չ ապաբէն, չէ՞ որ, երբ որ, ուր որ, մինչև որ, այնպէս որ, ինչպէս որ, պատճառն որ, իրը թէ, իրու թէ, կարծես թէ, գեռ ևս, արդէն իսկ, զուր տեղը, այն ժամանակի, համարեալ թէ:

Ուր-որ, երբ նշանակում է որևէ տեղ, գծով պէտք է միացնել նրա եղբայրը ուր-որ (որևէ տեղ) գնաց: Գծով պէտք է միացնել և քաւ-լիցի, որովհետև լիցի ձեն աշխարհաբարում անգործածականն է:

4) Նաղկապներ՝ բայց և այնպէս, սակայն և այնպէս, և այսպէս, և սակայն, և ոչ և կամ, և թէ, և ոչ իսկ, ոչ իսկ, նոյն իսկ, մինչ իսկ, մինչև իսկ, իսկ արդ, և արդ, չէ թէ, ոչ թէ, ոչ միայն, բան թէ, ապա թէ, ապա եթէ, թռող թէ, որպէս թէ, հազիւ թէ, գուցէ թէ, կամ թէ, այսինքն թէ, բայց եթէ, բայց թէ, թէ չէ, թէ ոչ ապա թէ ոչ հապա թէ չէ, մանաւանդ թէ, մանաւանդ որ, քանի որ, քանի զեռ, երբ զեռ, հենց որ, այլ որ, այլ և, ուստի և, թէ և (թէկ), թէպէտ և, առաւել ևս, աւելի ևս, ևս աւաւել ևս աւելի, այսինքն է, այս է:

5) Միջարկութիւններ՝ երանի թէ, ուր է թէ, ափսո՞ս որ, մեջք որ, վայ թէ և այլն:

Այս բառերից մի քանիսը վերջերս ոմանք սկսել են միացրած գրել ինչպէս են՝ ոլոր, ինչ-որ, երբոր, թէկ, թէպէտ, նոյնիսկ, նոյնպէս և երկուհարիւր, երեքհարիւր, չորսհարիւր և այլն. բայց միացրած գրելուն ոչ մի հիմք չկայ: Միայն միացրած գրել կարելի է թէկ, որովհետև երկու շաղկապը՝ թէ, եւ՝ միասին բոլորովին

Նոր միտք են ստանում. մինչդեռ թէպէտ և, կարելի չէ մի ացս ծ գրել բանի որ թէպէտ շաղկապը՝ եւ շաղկապի հետ մլ ացած՝ պաշտում է իր նշանակութիւնը, ինչպէս այլ ուրախի և ուրիշ շաղկապները եւ շաղկապի հետ մլ ացած՝ այլ և, ուստի և: 76.) Գոյական անունների այնպիսի կրկն ուժիւնները, որոնց առաջին մասը է վերջաւորութեամբ բացառական հոլով է դըւում, երկրորդը հայցական հոլով. բաղաքէ բաղաք, գիւղէ գիւղ երկրէ երկիր, փողոցէ փողոց, գլխէ գլխուն, դռնէ դռոս, ծայրէ ծայր: Ումանք այսպիսի կրկնութիւնները, մանաւանդ մլավանդ բառ երից կազմուածները, միացած են գըւըում, ընդունելով իբրև մի բառ: Հետեւողաբար վարուելու համար, եթէ միավանդ բառ երից կազմուածները միացած են գըւըում, բազմավանդ բառ երից կո գմուածներն ես պէտք է միացած գրել, որով շատ երկար բառեր կըստացուին, և այն անյարմարութիւնն էլ կ'առաջանայ, որ շատ բառեր, այդպէս կրկնուած ձեռվ, իբրև նոր բառ պէտք է մըտնեն բառարանի մէջ: Փօխանակ միացած գրելու, աւելի լարմար է գծով միացնել այն կրկնութիւնները միախն, որոնք մի մակրայի միտք ունին և շեն պահում բացառական և հայցական հոլովի նըշանակութիւնը, կամ բացառականի է վերջաւորութիւնը կարելի չէ՝ ից վերջաւորութեան փոխել օրինակ՝ ետեւետեւ, դիմացէ-դիմաց, մօտէ-մօտ, շարէ-շար, ժամէ-ժամ, դարէ-դար, օրէ-օր, քովէ-քով վազէ-վազ, կուզէ-կուզ, շուռէ-շուռ. (տալ), հոգէ-հոգ (բարեկամ), մէջէ-մէջ, չոքէ-չոք, տակէ-տակ (մարդ),

տէրէ-տէր (անել) և այլն. նոյնպէս և յ նախդրով. տէրէ-ցտէր (անել), հոգէ-ցհոգի, օրէ-ցօր, տարէ-ցտարի, որդէ-ցորդի և այլն: Իսկ բաղաքէ բաղաք, երկրէ երկիր, գիւղէ գիւղ և այլն, կարելի չէ գծով միացնել, որովհետեւ բացառական և հայցական հոլովները պահում են իրենց նշանակութիւնը, և կարելի է ասել բաղաքէ բաղաք երկրից երկիր, գիւղէ գիւղ (մտն գալ):

76. Բայերի բացասական չ մասնիկը, մեծ մասմբ առանց հետեւզականութեան, գրում են հետեւել չորս ձեռվ. չբերել, չըբերել, չը բերել, չբերել. Պէտք է գրել հնուց և ընդհանրութիւնից ընդունուած ձեռվ՝ բայի հետ միացած՝ միայն չ տառը՝ առանց ը ձայնաւորի և առանց տպաթարցի. չեմ, չես, չէ, չենք, չէք, չեն, չդնալ չնօսել չասել որովհետեւ բացասական մասնիկը ոչ թէ չը վանդնէ, որ ը տառվ և առանձին գրուի, այլ ոչ բառից կրճատած չ տառն է, որ արտասանւում է բայի հետ միացած:

Բացասական չ մասնիկը դրուելով բառի սկզբում բաղաձայնից առաջ՝ ը ձսյնաւորով վանդէ աւելացնում ոչ թէ նրա համար, որ բացասական մասնիկը չը վանդնէ, այլ նրա համար, որ մեր լեզուի հնչիւնաբանութեան ընդհանուր օրէնքով բառի սկզբի երկու բաղաձայնի մէջ միշտ ը հնչիւնն է մանում: Այդ հնչիւնն աւելանում է նաև զ, ց նախդիրներից և որ մասնիկից յետոյ, երբ սրանք զբուում են բաղաձայնով սկսուող բառի վայց լւստուած, բայց ցլաեր, ցլնա, զայն, բայց լվա-

լուսակեր, ըղնա (§ 41), կամ հնագոյն արտասահնում թեամբ՝ դրամէր, դլինա. գէտ, տըգէտ, գեղ տըգեղ: Նոյն օրէնքով բառի մէջ ևս երբ երկու բաղաձայնից յետոյ մի նոր բաղաձայն է աւելանում, երկու բաղաձայնի մէջ մանում է ը հնչիւնը. Կոտրել, կոտըրտել, պատմել, պատմըմել, գտնել, գտնըւել. Որովհետեւ բացասական մասնիկը միայն չ տառն է, ուստի և ապաթարց դնել չ'գնալ, չ'ասել, չ'գիտեմ, չ'եմ, չ'ես, չ'է և այն, կարելի չէ, որովհետեւ ապաթարցը դրւում է միայն այն ժամանակ, երբ վանդի միջից մի բաղաձայն սղուել է \*):

Ո ձայնաւորից առաջ չ մասնիկից յետոյ երբեմ լրւում է ը հնչիւնը, որովհետեւ ո՞ն արտասանելում է ինչպէս վօ. չողորմել — չըզորմել (չվօղորմել). բայց դա գաւառական արտասանութեամբ է. ո տառից առաջ ևս պէտք է գրել միայն չ չողորմել, չողջունել, չողբալ, որոնց մէջ ո՞ն պէտք է արտասանել իբրև օ, ինչպէս ընդհանրապէս ո՞ն արտասանելում է բառի մէջ: Սիալ է նոյնպէս գրել՝ չըերգել, չըերեւաց, չըասաց, այլ չերգել, չերեւաց, չասաց. միայն թէ ե՞ն այդ դէպրում շատ անգամ պահում է իր երկրարբառ հնչիւնը:

77. Պակաս տարաձայնութիւնների տեղիք չի

\*) Բարբառներին յատուկ սղումների վրայ նոյնպէս ապաթարց չի դրւում սովորաբար. ինչպէս՝ գագարել — գագրել պատմուել — պատուել բերանի — բերնի, և ոչ գագրել, պատուել բերնի:

տուած և բայերի ապառնի ժամանակի կը մասնիկի գրութիւնը. գրում են՝ կը բերեմ, կըբերեմ, կ'բերեմ, կըերեմ, կասեմ, կ'ասեմ, նոյն իսկ կը ասեմ, կըերեւայ, կ'երեւայ, կերեւայ: Ապառնի ժամանակի մասնիկն է ոչ թէ կ տառը, այլ կը վանգը, որ սղուած է հին կու ձեւից\*). իսկ վերջինս կազմուած է միջնադարեան լեզուի կայ ու բառերից, որ հին ժամանակ միշտ առանձին էին գրում: Բայց այժմ, որովհետեւ կը աննշան մասնիկ է և գործ է ածւում միայն բայերի հետ միացած, ուստի և բայերի հետ միացած ևս պէտք է գրել ինչպէս արտասանելում է. կը բերեմ, կըտանեմ, կը բերեմ, կըտանեմ: Չայնաւորով սկսուող բայերից առաջ լո՞ն սղուում է և տեղը գրւում է ապաթարց. կ'առնեմ, կ'ուրախանամ, կ'օրհնեմ, կ'երեւայ, կ'երգի որովհետեւ մեր լեզուի ընդհանուր յատկութեամբ ը ձայնաւորը չի կարող միանալ ուրիշ ձայնաւորների հետ (§ 34.), ուստի և կարելի չէ գրել՝ կըառնեմ, կըուրախանայ, կըօրհնեմ, կըերեւայ, կըերգի:

Ո ձայնաւորից առաջ կը մասնիկի ըն սովորաբար չի սղուում, որովհետեւ ո՞ն բառի սկըզբում արտասանելում է ինչպէս վո, ուստի և կանգաւառական արտասանելեան համեմատ գրողներ՝ կըողորմի, կըողջունէ. բայց պէտք է ընդ-

\*) Թէ ապառնի ժամանակի մասնիկն է կը վանգը, այդ երեւում է և նրանից, որ բարբառներում պար մասնիկը յետադաս է դրւում կը ձեռվ, ասեմ կը, գրեմ կը:

Հանուր ձեռվ գրել՝ կ'ողջորմի, կ'ողջունէ, և  
ո՞ն այդ գեպքում պէտք է արտասանել օ, ինչ  
պէս ընդհանրապէս արտասանում է բառի մէջ:  
Սխալ է նոյնպէս գրել՝ կըերեւայ, կըերգի, կը-  
երկարի. այլ կ'երեւայ, կ'երգի, կ'երկարի. մի-  
այն թէ ե՞ն այդ գեպքում պահում է իրերի-  
բարբառ հնդինը:

78. Օժանդակ եմ, ես, է և այլն բայերով կազմուած բաղադրեալ ժամանակները սխալ է միացած գրել գնումնեմ, գնումնես, գնումնեւ և այլն, որովհետեւ օժանդակ բայց առանձին բառ է և տեղին նայելով՝ նոյն խոկ բաժանում է խոնարհելի բայից և յետու առաջ դրւում. Ես գնում եմ, ես եմ գնում, ես եմ տուն գնում: Խոզանակ

79. Առհասարակ առանձին պէտք է զրել և  
բոլոր բաղադրեալ բայերը, որոնք երկու բառից են  
կազմուած, բայց մի բայի միտք ունին. ցոյց տար,  
միան ընկնել վեր ածել վէր ընկնել, ետ տալ վէր  
գալ, վեր ունել գործ ածել և ալին, որոնց երկու  
մասերը խոնարհուելիս բաժանելում են օժանդակ  
բայով. ցոյց եմ տալիս, միան է ընկնում, վէր է  
ընկնում, վէր եմ անում, գործ եմ ածում, վէր է  
ածում. Վերջին երկու բայերը գըւում են և մի-  
ացած իբրև մի բարդ բառ, գործածել վերածել.  
որոնցից կազմուած են և գործածութիւն, վերածում  
բառերը:

Բաղադրեալ բայերի կը, չ մասնիկները ևս  
նարհելի մասի վրայ են գրում ցոյց կրտայ, ցոյց

**Տ Բ Ա Հ Ո Ւ Թ Ի Ւ Ն**

80. Բառերի և խօսքի (նախադասութեան) մասերն իրարուց կանոնաւոր բաժանելը կոչում է տրոհութիւն։ Տրոհութեանն երկու տեսակ կանոնեն վերաբերում՝ տողադարձ կամ տողադարձութիւն և կէտապրութիւն։

## 1. Səqətərə

81. Երբ տողի վերջում բառն ամբողջապես  
չի տեղաւորվում, բառի մի մասը լաջորդ տողն ենք  
անց կացնում, կամ տողադարձ ենք անում։ Տողա-  
դարձի համար իբրև գլխաւոր հիմք ծառայում է  
բառերի կանոնաւոր բաժանումը վանգերի կամ հե-  
գումը։ Միավանդ բառերը կարելի չեն բաժանել,  
որովհետև վանգի մի մասը կարելի չէ տողի վեր-  
ջում գրել, իսկ միւս մասը նոր տողն անց կացնել

82. Բաղաձայն տառերի բաժանումը:—Երկու ձայնաւորի մէջ գտնուած մի բաղաձայնը լաջորդ վանդին է անցնում. տա-նել, գա-սա-ւո-րու-թիւն երկու բաղաձայնից մէկը նախորդ վանդին է պատկանում, միւսը՝ լաջորդ վանդին. պար-տիզ պահանջին էրեշ-տակ, սպս-տիկ. երեք բաղաձայնից առաջին երկուուր նախորդ վանդին են պատկա-

նում, իսկ երբորդը՝ լաջորդ վանդին, թարգ-ման,  
հանգ-չել, պարա-քից:

Եթէ երկու ձայնաւորի մէջ գտնուած բա-  
ղաձայններից երկրորդը կամ երրորդը ը ու լ դ  
ն մ նայերից մէկը լինի, հեգելիս նախընթաց բա-  
ղաձայնն այդ տառերից անբաժան է մում, մանա-  
ւանդ երբ երկու բաղաձայնի միջից մի ձայնաւոր է  
սղուել, այսպէս հեգելու համեմատ բաժանուամ են  
մա-քրել, շաղա-կրատ գայթա-կղութիւն, պա-տուել  
եր-կրորդ, կար-մրութիւն, բար-ձրութիւն, եր-  
կնաւոր, աս-տղալից, քաղ-ցրութիւն, բեր-կրիլ  
եր-կրաւոր: Բայց աւելի լաւ է առաջին երեք կա-  
նոնով բաժանել. մաք-րել շաղակ-րատ, աստ-ղա-  
լից, պատ-ռել և այն:

83. Հայնաւորի գրութիւնը տողադարձի  
ժամանակը: — Հայնաւորը, որ բառի մէջ սովորա-  
բար չի գրւում (§ 41), տողադարձի ժամանակ այն  
գէպերում, երբ լիքն է արտասանուամ \*), միշտ  
գրւում է թէ տողի վերջում մնացած և թէ լա-  
ջորդ տողին անցած վանդերում. օրինակ՝ մըտ-քի,  
շղզ-թայ, կը-տրըտել եր-կընքի, քաղ-ցրը, բար-ձրը:  
Առանձին գիտելիք հարկաւոր է այն գէպերի հա-

\*) Հ այնաւորի արտասանուամիւնը բառի մէջ՝  
կախուած է մերձաւոր բաղաձայնների դասարութիւ-  
նից: Հայերէն սովորող օտարազգի մարդկանց համար  
դժուար է իմանալ թէ մի քանի բաղաձայններից որոնց  
մէջ ը պէտք է արտասանել որոնց մէջ ոչ. բայց հայ-  
քենախօս մարդկանց համար բնական է ը-ի հըն-  
չիւնը:

մար, ուր ը-ն թէպէտ արտասանուամ է, բայց սուդ,  
երբեմն էլ այնքան սղուամ է, որ կորչուամ է:

1) Բառի սկզբի սկ, ստ, սպ, սբ, սփ, սթ, շպ,  
շէ, շո, զգ բաղադրութիւններից (§ 41), ինչ-  
պէս և գրաբարի զ նախդրից առաջ արտասանուած  
սուդ ը-ն տողադարձի ժամանակ վանդ է կազմուամ,  
և այդպիսի բառերը սովորաբար բաժանուամ են՝  
ըս-կիզբ. ըշ-տեմարան. բայց ընդհանրապէս աւելի  
լաւ է աշխատել այդպիսի բաղաձայններն իրարուց  
չբաժանել և սկզբի երկու բաղաձայնն էլ լայնորդ  
ձայնաւորին տալ ու բաժանել՝ սպա-սել, շտե-մտ-  
րան, սկը-սել. վերջին ձեռվակէտք է բաժանել մանա-  
ւանդ այն ժամանակ, երբ նախընթաց բառը ձայ-  
նաւորով է վերջանուամ, որովհետեւ այդ ժամանակի բա-  
ռասկզբի սուդ ը-ն բոլորովին կօրչուամ է. օրինակ՝ ամե-  
նեին կարելի չէ բաժանել՝ նա ըշ-տեմարան գնաց.  
նա զբօս-նուամ է: Իսկ երբ նախընթաց բառը ընդու-  
նուամ է ն յօդը, սպ, ստ, սփ և ալն, բաղադրու-  
թիւններից առաջ ը-ն քիչ ու շատ երկար է ար-  
տասանուամ, ուստի կարելի է բաժանել. մարդն ըս-  
պասեց. մարդն ըզ-գաստ է:

2) Եթէ բառի սկզբի երկու բաղաձայնից երկ-  
րորդը նայ է լինուամ, այդ երկու բաղաձայնի մէջ  
եղած ը-ն սուդ է և ը-ի արտասանութիւնն ազատ  
է. ուստի կարելի է բաժանել ուշ-լանալ, գլ-բաւոր  
կը-բակոտ, տլ-դայ, գլ-նալ, կամ ոլանալ, գրա-  
ւոր, կրա-կոտ. իսկ միավանգներն առանց բաժա-  
նուելու են մնուամ՝ տղայ, կրակ, գրել. Աւելի լաւ

Ե լնդհանըտպէս այդպիսի երկու բաղաձայններն իրարուց չբաժանել և տողագարձը վերջին ձևով անել սլա-նալ, գրաւ-ւրու:

3) Բառի վերջի ս, դ, ն յօդերի և նախորդ բաղաձայնների մէջ ը ձայնաւոր է մտնում, ուստի այդպիսի բառերը կարելի է բաժանել՝ տու-նըս, տու-նըդ. բայց երբ յոցորդ բառը ձայնաւորով է սկսում, այդ ը-ն, մանաւանդ ն յօդից առաջ, բոլորովին սղւում է. ուստի կարելի չէ բաժանել՝ աշակեր-տըն է, աշակեր-տըն ասաց, այլ աշ-կերտն է, աշ-կերտն ասաց:

4) Բառի մէջ վ-ահնչիւն ու-ն, նայ բաղաձայնների նման (§ 82), հեգելիս նախորդ բաղաձայնից անբաժան է մնում. ուստի այդպիսի բառեւրը պէտք է բաժանել՝ Ա-ստուած, ա-սուել, խօսուել և ոչ Ա-ստ-ուած, աս-ուել, խօս-ուել. Ա-սում է, խօսում է և այն, զրութիւնները սովորաբար բաժանում են՝ աս-ում է, խօս-ում է, թէպէտ ըստ արտասանութեան դարձեալ պէտք է բաժանել ա-սում է, խօ-սում է, ինչպէս բաժանում են ա-սուում է, խօ-սուում է զրութիւնները:

5) Եթէ վ-ահնչիւն ու-ն գալիս է երկու բաղաձայնից լետոյ, լնդհանըտպէս ու-ի (վ) և նախընթաց բաղաձայնի մէջ արտասանում է կէսը, ուստի այդպիսի բառերը կարելի է բաժանել՝ մատնը-ւել, գտնը-ւել, պատմը-ւել. թէպէտ աւելի լաւ է երկու վանդ համարել և բաժանել մատ-նը-ւել, գրտ-նը-ւել պատ-ժուել. Ըստ զրութեամբ կարելի է բաժանել նոյնպէս և այն ժամանակ, երբ վ-ահնչիւն

ու-ն ընկնում է բառի սկզբի բաղաձայնից լետոյ. նը-ւագ, նը-ւէր, տը-ւած, զը-ւարժ. Եթէ վ-ահնչիւն ու-ի առաջ ընկնում են ը, ո բաղաձայնները, հեգելիս ու-ն (վ) այդ բաղաձայններից բաժանում է, բայց տողագարձի ժամանակ անբաժան պէտք է թողնել՝ վա-ուուել, տա-րուել, տա-րուալ, որովհետև սովորութիւն չէ ու-ն առանց նախորդ բաղաձայնի յաջորդ վանգն անց կացնել։ Եա, իւ երկբարբառներն ես տողագարձի ժամանակ միշտ պէտք է նախորդ բաղաձայնի հետ յաջորդ տողը տանել՝ սե-նեակ, հա-րիւր, արա-մեան, թէկ ըստ արտասանութեան երեմն այդ երկբարբառները բաժանում են նախորդ բաղաձայններից:

84. Զայնառող տառերի բաժանումը: — Երկու մօտէ-մօտ եկող ձայնաւորները կարող են բաժանուել. Գաբրի-էլ, որդի-ական, է-ակ. բայց աւելի լաւ է աշխատել յաջորդ տողը ձայնաւորով սկսուող վանդ չտանել։ Եա, իւ այ, ոյ, եօ երկբարբառները, ինչպէս եա, ո ձայնաւորներից լետոյ եկող յա, յեա, յե, յէ, յի, յո, յու յերկբարբառներն անբաժան են մնում. ուստի այդպիսի բառերը պէտք է բաժանել՝ սե-նեա-կի, հիւ-րեր, լալ-նութիւն, լոյսի, հա-յաստան, ծառ-ա-իել, արքա-լի, հմա-յեակ, ա-յո, ծառ-ա-յութիւն և այն:

Ծատերը գրաբարի աւ, եւ, իւ երկբարբառներն անբաժան են թողնում՝ ագուաւ-ի, հիւ-անդ, երեւ-ալ. Նշնպէս բաժանում են՝ հայ-աստան, ծառ-այ-ութիւն, շը-էլ — յ-ն նախորդ ա, ո ձայնաւոր-

Ների հետ միացնելով և տի, ոյ երկբարբառները կազմելով՝ բայց աշխարհաբարում այդպէս բաժանել կարելի չէ, որովհետեւ ւ-ը և յ-ն ոչ թէ նաև սորդ ձայնաւորների հետ են արտասանուում, այլ մասն յաջորդ ձայնաւորների հետ, ագռաւի, հիւանդ, ծառաշութիւն։

85. Բարդ և ածանցական բառերի բաժանումը։ — Բարդ և ածանցական բառերի բաժանման նկատմամբ մեր ուղղագրութիւնը գեռ ևս տատանում է, ընդհանրապէս բարդ և ածանցական բառերը պառարգ բառերի նման բաժանում են արտասանութեան համեմատ. մեծիմաստ, ինքնիշխան, նորընծայ, նորեկ, ազգօգուտ, ծովեզը, ինքնուրոյն, ողջանդամ, յաղթանդամ, հիւրընկալ, ազգընտիր, հօրեղբայր, եղբօրորդի, կաթնեղբայր, սըրընթաց, սըրտեռանդն, ջըրընկէց, բազմերախտ. — աներկիւղ, անընդունակ, անօգուտ, բացարձակ, և այլն. բայց ոմանք աշխատում են բարդ և ածանցական բառերն այնպէս բաժանել, որ բառի կազմութիւնը երևայ. մեծիմաստ, ինքնիշխան, նորընծայ, նորեկ, ազգօգուտ, ծովեզը, ինքնուրոյն, ողջանդամ, յաղթանդամ, հիւրընկալ, ազգընտիր, հօրեղբայր, եղբօրորդի, կաթնեղբայր, սըրընթաց, սըրտեռանդ, ջըրընկէց, բազմերախտ, աներկիւղ, անընդունակ, անօգուտ, բացարձակ, և այլն։

Ընդհանրապէս պէտք է բարդ և ածանցական բառերի նորութիւնը նման արտասանութեան համեմատ կարելի չէ բաժանել. 1) Երբ բարդութեան առաջին բառը ձայնաւորների կորուսման կամ փոփոխման կանոնը պահում է, օրինակ՝ կարելի չէ բաժանել սըրընթաց, ջըրընկէց, սըրտեռանդ, բազմերախտ, խըմբերգ, լուսնոսկի, բընորոշ. — 2) Երբ երկրորդ արմատը սկսւում է ե, ո ձայնաւորներով, որոնք բարդութեան ժամանակ չեն պահում իրենց հնչեանը. օրինակ՝ կարելի չէ բաժանել վերելք, նորեկ, ջերմեռանդ, ողբերգութիւն աներկիւղ, ամենողորմ, անորդի անորոշ, անողոք, բացորոշ, այլ վերելք, նորեկ, անողոք և այլն։

Միայն այն ժամանակ կարելի է այնպէս բաժանել որ բառի կազմութիւնը երևայ, երբ առանց ա կամ ելոդակապի են բարդութած, և երբ սկզբից ան, բաց, համ, փոխ, տար և այլ նախայարմառնիկներով են ածանցուած։ Այդպիսի բառեր են վերևուում դրածների հետ և հետևեալները. ամենիմաստ, աւագերէց, էշայծեամ, վայրէջք, ինքնօգնութիւն, ամենօրեայ, դասընթաց. դասընկեր, արագընթաց, նորընտիր, աստուածընդդէմ, լայնարձակ, անընդհատ, անընըռնելի, անիշխան, տարաշխարհ, համաշխարհ, վերընծիւղել, մակընթացութիւն և այլն։

Այսպիսի բառերի բաժանման ժամանակ պէտք է ինկատի ունենալ, որ կազմութեան համեմատ կարելի չէ բաժանել. 1) Երբ բարդութեան առաջին բառը ձայնաւորների կորուսման կամ փոփոխման կանոնը պահում է, օրինակ՝ կարելի չէ բաժանել սըրընթաց, ջըրընկէց, սըրտեռանդ, բազմերախտ, խըմբերգ, լուսնոսկի, բընորոշ. — 2) Երբ երկրորդ արմատը սկսւում է ե, ո ձայնաւորներով, որոնք բարդութեան ժամանակ չեն պահում իրենց հնչեանը. օրինակ՝ կարելի չէ բաժանել վերելք, նորեկ, ջերմեռանդ, ողբերգութիւն աներկիւղ, ամենողորմ, անորդի անորոշ, անողոք, բացորոշ, այլ վերելք, նորեկ, անողոք և այլն։

Բացի վերոլիշեան, ազգ՝ բարդ և ածանցական բառերի բաժանման համար պէտք է ինկատի ունենալ, որ

1) Ա կամ ե լողակապից լետոյ եկող երկու բաղաձայնից մէկը, որ բարդութեան երկրորդ արմատի սկիզբն է, հեգելիս չի միանում լողակապին ուստի այդպիսի բառերը բաժանում են՝ բարե-խնամ, գծա-գրել, դասա-խմբել, չարա-խնդաց, լրա-գրութիւն, լեռնա-ընակ, և ոչ թէ բարեխնամ, գծագրել, և այլն. բայց կարելի է բաժանել՝ բարեխնամ, գըշ-ծագրել, դասախմբել, չարախնդաց, լը-րագրութիւն, լեռնաբնակ:

2) Բարդութեան երկրորդ բառի սկզբին բաղաձայնից լետոյ եթէ ը է արտասանում, չի գըր-ւում. լեռնա-ընակ, բարե-խնամ, չարա-խնդաց, նոյնպէս և ան-վնաս, ան-կնունք, ան-կոիւ, ան-հմուտ, և ոչ բարե-խընամ, լեռնա-ըընակ, չարա-խընդաց, ան-վընաս, ան-կընունք, ան-կըուիւ, ան-հըմուտ:

86. Բաղադրեալ բառերը բաժանում են բառի կազմութեան համեմատ. տողադրածի ժամանակ կարելի չէ այդպիսի բառերի մի արմատից մի տառ միւս արմատի հետ միացնել. ուստի պէտք է բաժանել.

Ոչ-ոք, եւ-եթ, վասն-զի, հետ-զհետէ, զոր-օրինակ, ամեն-ուրեք, այնու-ամենայնիւ, որ-ևէ կամ որևէ, ով-ևէ կամ ովեէ, երբե-է կամ երբ-ևէ, տամնու-մէկ կամ տասն-ումէկ, տասն-երկու, տասն-երեք այր-ուձի, կամ այրու-ձի, ելու-մուտ կամ ելու-ումուտ, այլ-ևայլ կամ այլեւ-այլ, առու-տուր, կամ առ-ուտուր, ի-կեր, ի-վայր, ի-նկատի, ի-բնէ, ի-ծնէ. առ-այժմ, առ-առաւ ևելն, առ-ոչինչ, ըստ-իս, ըստ-այսմ, ըստ-որում, ըստ-

ինքեան, մինչ-այս, մինչ-այն, գոյն-զգոյն, բերանքս-իվեր, տեղնի-տեղը կամ տեղն-իտեղը, հիմն-իվեր, օրէ-ցօր, օր-ըստօրէ, խոչ-ընդու, վայր-իվերոյ և այլն:

Բաղադրեալ բառերը միայն այն ժամանակ կարելի է պարզ բառերի նման բաժաննել, երբ բառի կազմութիւնը պարզ չէ, կամ բաղադրութիւնը հընդուց ընդունուած է. ինչպէս են՝ ըն-դունակ, ըն-դունել, ըն-դարձակ, առաւօտ, առողջանել և այլն,

Տողադրածի տրոհութեան նշանը (-) կոչւում է ննթամնայ, որ դրւում է տողի վերջում:

## 2. ԿԵՑԱԴՐՈՒԹԻՒՆ

87. Խօսքի մասերը կամ նախադասութիւններն իրարուց բաժաննելու համար այլեւալլ նշաններ են գործ ածում, որոնք լնդհանուր անունով կոչւում են կէտ, իսկ գործածութիւնը կոչւում է կէտադրութիւն: Կէտադրութեան նշաններն են՝ վերջակէտ (.), միջակէտ կամ կէտ (.), ստորակէտ (,), բութ (') և գիծ (—), որոնք դրւում են նախադասութիւնների, մասամբ և նախադասութեան անդամների մէջ և ընթերցողին գիւրութիւն են տալիս գրուածքը հասկանալու:

88. Վերջակէտ դրւում է այն աժամանակ, երբ գրողը խօսքն ամբողջացած և վերջացած է համարում: Վերջակէտով մի նախադասութիւն կատարելապէս բաժանում է միւսից: Եատ անդամ վերջակէտով բաժանում են կարճ-կարճ նախադասութիւններ:

Ճաշուածածաշուայ շոկն անց էր կսցել։ Սար ու ձոր  
գլխները էլ ետ բարձրացնում էին, որ փաքր շունչ  
առնեին։ Թանձր խաւարը, սև դումանը եկել,  
բոլոր գաշտերի ձորերի երեսը բոնել օդը ծան-  
դացրել, կալել էր։ Թուզունը տեղիցը չեր ուղում  
շարժուի, հաւը բնիցը գլուխը հանի։ — Արովեան։  
Երբեմն լեռնային գադաթից պոկւում է, ցած  
է գլորում մի ահագին բարաժայու։ Նա կտրում  
է գետի ճանապարհը։ Զրերի ընթացքը կանգ է  
առնում։ Այդ միջոցին կատաղած թարթառը ուռ-  
չում է, ուռչում է և, հետզհետէ աճելով, հա-  
ւաբում է իր ուժերը։ — Ռաֆֆի։

Երբեմն, երկու նախադասութիւն իրարուց ա-  
ռելի որոշ տրոհելու համար, վերջակէտից յետոր  
գնում են գիծ (—), կամ յաջորդնախադասութիւ-  
նը նոր տողից են ոկտում։

89. Միջակէտով կամ կէտով իրարուց բա-  
ժանում են, միջնամասութիւնները, որոնք ի-  
րենց արտայատած մտքերով բաւական մօտիկ կապ  
ունին իրար հետ։ Համազօր, անկախ նախադասու-  
թիւնների մէջ վերջակէտ կամ միջակէտ դնելը շատ  
անգամ կախուած է գրողի կամքից։ Օրինակ՝ վե-  
րոյիշեալ հատուածների մէջ վերջակէտի փոխանակ  
կարելի է և միջակէտ դնել։ Ահա մի ուրիշ օրին-  
ակ ևս,

Օրն էր տարաժամ, մարտիկը դադարած, առ  
Փողը հնչեցին մարտին կատարած։  
Մութը տարածուեց, աստեղք ցոլացին,

երկնից ցողն իջաւ արնալից գետնին։  
Մթնասէր թուշունք ձայներով խոպու  
Գուշակում էին մարդկանց սրւդ ու բօթ։ — Գ. Ք.  
2) Միաւորեալ նախադասութեան մէջ՝ շաղ-  
կապով չմիացած ենթակաները կամ ստորոգեալնե-  
րը, երբ ունին երկրորդական անդամներ կամ ամ-  
բողջ պարզաբանող նախադասութիւններ, որոնք այդ  
ենթականերից կամ ստորոգեալներից բաժանում են  
ստորակէտով։

Թշնամիների յարձակմունքները, որ ամենայն  
տարի կրկնուում էին սովոր, որ մեծամեծ կոտրած-  
ներ էր անում։ ամեն տեսակ արհաւերքներն ու  
տառապանքը, որոնց հետեանքն է ահագին խըմ-  
բերով գաղթականութիւնն և պանդստութիւնը, —  
այս ամենը Հայաստանը զօկեցին ուղղուում են  
բաղմամարդութիւնից։

Տրդատը վերականգնեց հայոց թագաւորու-  
թիւնը, որ իր հօր՝ Խոսրով Մեծի սպանուելուց յե-  
տոյ պարսից ձեռն էր ընկել։ Վրէժինդիր եղաւ  
իր հօր մահուանը, աւերելով Պարսկաստանի մինչեւ  
անդամ ներքին նահանգները։ Հրովարտակներով  
մի քանի անգամ հրամայեց, որ հայ ժողովուրդը  
ջերմեռանդութեամբ պաշտէ իր աստուածներին,  
որոնց պաշտամունքն արդէն թուլացել էր Հայոց  
աշխարհում։ սուրբ Գրիգորին Խորակիրապը ձեւ-  
տուաւ, երբ իմացաւ, որ նա իր հօրն սպանող  
Անդի որդին է և քրիստոնեայ է։ վերջը՝ ո. Գրի-  
գորին Ակրապից հանելով՝ նրա ձեռքով մկրտուե-  
ցաւ, դառնալով բարեպաշտ քրիստոնեայ, ինչպէս

և բարեպաշտ կռապաշտ էր. կործանեց բոլոր մե-  
հեաններն ու կռատները, նրանց տեղը Քրիս-  
տոսի և Խաչը կանգնեցնելով:

3) Միջակէտ է դրւում Երբեմնամ Սայն ժա-  
մանակ, Երբ անկախ, Համազօր նախադասութիւն-  
ները կամ միաւորեալ նախադասութեան ստորո-  
գեալները միմեանցից բաժանուած են բայց, նու-  
կայն, այլ, իսկ, միայն շաղկապներով, որոնց ա-  
ռաջ, Երբ նախադասութիւնները կարճ են լինում,  
սովորաբար ստորակէտ է դրւում: Երբեմն այդպի-  
սի նախադասութիւնները բաժանում են վերջա-  
կէտով և նոյն իսկ նոր տողից են մկսւում:  
Լեռների մերկ գագաթները պատեց Երեկո-  
յեան ստուերը, իսկ ձորերի մէջ լոյսը հետզիւ-  
տէ աղօտ գոյն էր ստանում. միայն ոսկեգոյն  
ամպերը գլորւում էին օդի բարձրութեան մէջ: Ղֆ.

Սկզբումը գուցէ Հայերն էլ իմանալի կեր-  
պով էին պաշտում Արամազդին. բայց քաղաքա-  
կան կեանքի զարդացման հետ զարդացաւ և  
Հայոց աստուած պաշտութիւններն եղանակը: Կ. Կոստ.

Օսմանցոց և պարսից հաշտութիւնից յետոյ  
Հայաստանը փոքր ինչ Խաղաղացաւ: Բայց այս  
Խաղաղութիւնը ժլ. դարու սկզբներում յան-  
կարծ քրովաւեցաւ, շատ կողմեր և գլխաւորապէս  
հիւսիսային Հայաստանը տակն ու վրայ եղան:

4) Միջակէտով բաժանում են և գլխաւոր  
նախադասութեան պատկանող մի քանի Երկրորդա-  
կան նախադասութիւնները, եթէ շատ կարճ չեն.  
Եթէ Երկրորդական նախադասութիւնները գլխաւոր-

րից առաջ Են լինում, գլխաւոր նախադասու-  
թեան սկզբում դրւում է ստորակէտ ու գիծ:

Եթէ Հայոց աշխարհի աշխարհագրական տե-  
ղադրութիւնն այնպէս լինէր, որ Երկրի սահման-  
ները պաշտպանուած լինէին բնական պատուար-  
ներով. Եթէ Հայերն ունեցած չլինէին այնպիսի  
դրացիներ, որոնք շատ աւելի գորաւոր և մեծ  
աղդ էին քան Հայերը, և շարունակ աշխատում  
էին Հայաստանն իրենց ձեռքի տակ առնել. Եթէ  
մեր Երկրի վրայով անցած չլինէր ամեն մի նշա-  
նաւոր աշխարհակալ, վերջապէս՝ Եթէ չլինէր  
խուժադուժ ազգերի այն ահագին բազմութեամբ  
գաղթականութիւնը, որ Հայաստանն աւերելով  
արևելքից անցնում էր գէպի արևմուտք, — այն  
ժամանակ Հայոց Երկրը կըծաղկէր Խաղաղ քա-  
ղաքակրթութեամբ, որ իմէ յատուկ է եղել  
Հայոց ազգին:

5) Միջակէտ դրւում է լաւելեալ նախադա-  
սութիւնների (Երբ գրողն ուրիշի խօսքերն է մէջ  
ըերում), վերնագիրների, վկայութիւնների և ալլն,  
առաջ, որոնք չակերտների մէջ են առնուում:

Հուրը պլազ, աղիկը կանչեց. Ժմ մեղաց Հաս-  
մար Աստուած ինձ պատեցց: Դամառ-Քաթիպա:

6) Միջակէտ դրւում է և բացադրական խօս-  
քերի առաջ, Երբ կրծատուած են այս է, այս են,  
որ է, որոնք են, այսինքն է բացադրական բառերը:

Հայոց նախարարներն երկու գլխաւոր դասի  
էին բաժանուում աւագ և կրտսեր նախարարներ: Պ. լ.  
90. Ստորակէտ դրւում է. յուսով ցուցանիլի

1) Համազօր, անկախ կարճ նախադասութիւնների մէջ. առ աժայացու չեւույր և այցը մատմած մաժայի Առուները խոխոջացին, ու մանաւաք Շառերն բողբոջ արձակեցին, ու պատասխան Օդը լի է ձայնիւ թռչնոց, ու գիշեալ հիմքամբ հարիստոս յարեաւ ի մուելոց։ Գամմա Քաթ.

2) Գլխաւոր նախադասութեան, և սրան պարզաբանող երկրորդական նախադասութեան մէջ.

Ով ալարի, ոչ դալարի։ Խնչ կըցանես, այն կը հնձես։ Վարդանը, որ հայոց զօրքի սպարապետն էր, ընկաւ Աւարայրի ճակատամարտում։ Եատ անգամ գլխաւոր և երկրորդական նախադասութիւնները, եթէ կարճ են, բաժանում են բութով։ Կամ եթէ երկրորդական նախադասութիւնը գլխաւորի մէջն է ընկած, սկզբից առնում է բութ, վերջից ստորակէտ։

Ով ալարի՝ ոչ դալարի։ Վարդանը՝ որ հայոց զօրքի սպարապետն էր, ընկաւ Աւարայրի (ճակատամարտում) Մարդս՝ որ սխալական է, չի սիրում խոստովանել իւր յանցանքը։ Եթէ գլխաւոր կամ երկրորդական նախադասութիւնը կարճ է, և երկրորդական նախադասութիւնը լետադաս է ու գլխաւորի հետ միացած է թէ շաղկապով, սովորաբար ոչ մի կէտով չի բաժանում գլխաւորից։ Կարծեմ թէ չեմ սխալում։ Կարծես թէ չգիտէ։

3) Երկրորդական կրծատուած նախադասութիւնները գլխաւորից ոչ մի կէտով չեն բաժան-

ւում։ միայն պարագայական կրծատուած նախադասութիւնները, եթէ ընդարձակ են, գլխաւորից երեմն, բաժանում են ստորակէտով և աւելի բութով։ Աղդն անտարերութեամբ ականատես եղաւ Աֆքարշակունեաց գահի խորտակմանը՝ առանց իւր կողմից մի ընդդիմութիւն ցոյց տալու։ Հայ ժողովութիւն Պարսից երկրի հետ կապելու և իւր նպատակներին ծառայեցնելու պամար՝ Շահաբասը ամեն տեսակ արտօնութիւններ տուեց հայերին։ Բայց չնայելով այս խորամանկ վարմունքին, հայերը չէին կարող մոռանալ իրանց հայենիբը։ Պալատանեան։ 4) Երբ ածականը կամ անցեալ գերբալը, լրացուցով կամ առանց լրացուցչի, գործ են ածւում ոչ իբրև որոշող բառ, ալլ իբրև պարագայական բառ կամ երկրորդական կրծատուած նախադասութիւն, գոյականից բաժանում են ստորակէտով կամ բութով եթէ կարճ են։ Այդպիսի ածականը սովորաբար լետադաս է վարուամ, իսկ անցեալ դերեայով կրծատուած նախադասութիւնը կարող է գոյականից թէ լետադաս լինել և թէ նախադաս։ Բայց նա՝ միշտ հպարտ՝ (որ միշտ հպարտ էր, կամ միշտ հպարտ լինելով) մնաց հաստատուն։ Թշնամին, անգոհ (որ անգոհ էր, անգոհ լինելով) մեր բերած ծանր զոհերին, իւր լերբ նզոված ձեռքը կարկառեց... Գամառ-Քաթիպա։ Իմ առաջև բացւում էր մի նոր տեսարան, այնքան հիանալի, այնքան յափշտակիչ (որ այն-

ասլքան հիանալի, յափշտակիչներ), որպէս մի գե-  
ղեցիկ պատկեր իր հրաշվի արուեստագործուա-  
թեամբ: — Քաղջը է շնչել լեռնային աղը, առդու  
րուած ծաղիկների անուշահոտութեամբ: — Տեղա-  
տեղ խուլ արմունջով վազում են վտակներ, ա-  
մօթխածութեամբ թափնուած խոտերի մէջ մաֆֆի:  
Անխոնջ մշակը, հողի վրայ պառկած, զովու-  
թիւն խնդրում էր մարմուն յոգնած: — Այն ով  
է կանգնած ամբիսնի վրայ, դողդոջուն ձեռքերն  
երկինք ամբարձած, գթառատ աշերն լիւ արտա-  
սուքով: Գամառ-Քաթիպա: Դումաց ըստ  
Երբեմն ալգպիսի երկրորդական յետագաս կըր-  
ճատուած նախադասութիւնները կամ ածականները,  
մանաւանդ երբ միքանի հատ են, դոլականից բա-  
ժանուամ են զծով:  
Տես այս խղճուկ իմ կտրճիս առ ոյդ, պար-  
կեցու ու գիտուն, բայց հօրական փող չունելով  
հաճելի չէ ամենուն: — Երդ սիրում են հոգեւոր,  
զմա խաղ սիրում են, — բայց անմեջ: —  
յան վարդան — զօրավար իր աղքէն ընտրած, պայովու  
Արեան դաշտի մէջ բաջ հանդիսացած, խուսդր  
Սրտացաւ հայոց դառը վիճակին, և բայց առ ու ու ու  
Ուսք հանեց նոցա ընդդէմ գոռ պարսկին: Գ. Ք.  
5) Երբ միաւորեալ նախադասութեատն մէջ  
ետեկ-ետեւ եկող մի քանի միատեսակ անդամնե-  
րը — ենթակայ, ստորոգեալ, որոշող բառեր, լրա-  
ցուցիչներ կամ միատեսակ պարագայական բառեր —  
եւ, ու շաղկապնեղով միացած են, ոչ մի կէտով չեն  
բաժանուամ իրարուց. իսկ եթէ այդ շաղկապներով

միացած չեն, բաժանուամ են ստորակէտով:  
Գիւղացին վարում է, ցանում է, հնձում է  
մարս և կալսում է: Աւտը, ոնդեղիւրը և գլինը ապ-  
մարտում են ջրերում և կերակրում են ծովային բոյ-  
-ջո սերով, որդերով ու ձկներով: Եթէ առ թայ  
Երբ եւ, ու, կամ թէ շաղկապները կրկնուած  
են նախադասութիւնների կամ գոյականների առաջ,  
իրենցից առաջ ստորակէտ են առնուամ: Եւ թէ, և  
կամ շաղկապներից առաջ ստորակէտ չի դրւում:  
Եւ զուր տեղը եստանեցում եմ, և յուղ-  
ում եմ, և գողում, և մի միայն թղթի վրայ ան-  
միտ կերպով խաղաղում: Յ. Յովհաննիսենն:  
Թէ ամառը, թէ ձմեռը, թէ աշնանը և թէ  
գարնանը մենք ունինք մեր առանձին զուարծու-  
թիւնները: Կամ ես պէտք է գնամ, կամ դու:  
6) Մի և նոյն գոյականին որոշող երկու ա-  
ծական անունները ստորակէտով չեն բաժանուամ:  
Երբ առաջին ածականը որոշում է ոչ միայն գո-  
յականը, այլ գոյականը միւս ածականի հետ միա-  
սին վեր առած:  
Աշտարակներից մէկի գլխին միայնակ նստած  
է աշագին սե արծիւր: — Շաֆֆի:  
Սև սև գիշակեր ագռաւեներն էին մնացել: — Ար-  
Մարմարոնեայ գեղեցիաշեն աւաղան: — Թան-  
գագին սամոյր մուշտակ:  
Երկու ածականի մէջ ստորակէտ չի դրւում:  
Երբ նրանցից մէկը լարաբերական է, միւսը որակա-  
կան, ինչպէս վերոլիշեալ վերջին երկու օրինակի  
մէջ է:

Երբեմն երկու որակական ածականի մէջ ևս ստորակէտ չի դրում, ինչպէս վերոյիշեալ առաջին երկու օրինակի մէջ է, երբ առարկան զանազան կողմերից են որոշում, կամ առարկայի զանազան տեսակ լատկութիւններն են ցոյց տալիս. օրինակ՝ երբ մէկը ցոյց է տալիս գոյնը, միւսը՝ մեծութիւնը, կամ թէ ինչո՞վ է կերակրում առարկան: Իսկ եթէ որակական ածականները առարկայի միանման յատկութիւններն են որոշում, իրարուց բաժանւում են ստորակէտով. օրինակ՝

Բարի, գեղեցիկ, առաքինի ընկեր:

Ստորակէտով չեն բաժանւում նոյնպէս երկու որոշող բառերը, եթէ մէկն ածական անուն է, միւսը թուական անուն:

Առաջին հոգեոր դպրոց: Երկու կարիք աղայ:

7) Բացայալտիչը եթէ բացայալտեալից նախադաս է դրում և վերջինիս հետ յօդով ու հոլովով չի համաձայնում, ոչ մի կէտով չի բաժանւում բացայալտեալից:

Երուանդ թագաւորը երասխ գետի վրայ շինեց Երուանդաշատ բաղաքը:

Բացայալտիչը երբ բացայալտեալից յետոյ է դըրւում և յօդով ու հոլովով համաձայնում է բացայալտեալի հետ, եթէ մի կամ երկու բառ է բացայալտեալից բաժանւում է ըութով, իսկ եթէ մի քանի բառից է կազմուած, ստորակէտների կամ բութերի մէջ է առնւում, կամ սկզբից բութ է առնում, վերջից ստորակէտ:

Սանատրուկի որդու՝ Արտաշէս մանկան կեանքն

աղատողը. մի կին է եղած:— Անահիտ տիկնոջ քոյրն էր Աստղիկ՝ գեղեցիկութեան գիցուհին: Կ. Կոստոն Արտաւազդը՝ Տիգրան Բ-ի որդին՝ գերի տարուեցաւ Եղիպտոս:— Վաղարշակը, հայոց առաջին արշակունի թագաւորը, բաղաքական և զմնուուրական օրէնքներ տուաւ հայոց: Պալասաննեան: Երբեմն յետադաս բայալտիչը բացայալտեալից բաժանւում է գծով, իսկ վերջից ստորակէտ է առնում, կամ բութ:

Զեռքը բաժակ—նշան արեան Քըիստոսի:

Մեր լեզուն, մեր ծէսք—նշանք ազգութեան, Երբէք չիշութին ի մէջ մարդկութեան: Երուսաղէմ—փառք հնութեան՝ լերանց վրա հանգչում էր: Գամառ-Քաթիպա:

8) Ստորակէտներով բաժանւում են միջանկեալ նախադասութիւնները, միջանկեալ բառերը, մակրախերը և դրանց նման ուրիշ խօսքերը, երբ նախադասութեան կազմութեան մէջ չեն մտնում, այլ կամ խօսողի հաւաստի լինելու աստիճանն են ցոյց տալիս, կամ նրա յարաքերութիւնը դէպի առարկան, կամ նրա մտքի հիմունքը և ալին: Այդպիսի բառեր են՝

Իհարկէ, հարկաւ, յիրաւի, արդարե, անշուշտ, հաւանական է, կարելի է, գուցէ, թերւս, հաւատացած եմ, հաւատաւ, հաւատացած եղիր, միտս է, հասկանալի է, և այսպէս, որ ասես, կարծես, անկասկած, սակայն, մի խօսքով, կարձասած, խօստովանանք լինի, բարեբախտաբար, գժբախտաբար, դիցուք, խօսք չի ուզել, ասել չե

ուղիլ ասենք, ըստ երևութին, ընդհակառակն, իմ կարծիքով, այսպէս ասած, և այն:

Այս բառերից մի քանիսը՝ ինչպէս, միայն, մենակ, օրինակ, առաջին, երկրորդ, երրորդ և այն, տեղին նայելով՝ վերջից բութ ևս կարող են ստանալ:

9. Կոչական բառերը, երբ նախադասութեան սկզբումն են, ետևից ստորակէտ են առնում. երբ նախադասութեան վերջում են, առաջից ստորակէտ են առնում, վերջից՝ վերջակէտ. իսկ երբ նախադասութեան մէջն են ընկած, երկու կողմից ստորակէտի մէջ են գրւում:

Գնա, իմ որդի, աշխարհքսանցիք: —

Սիրելիք, օգնութեան հասէք: Դամ. - Քաթիպա. 91. Բութ գրւում է, բացի վերյիշեալ դէպ-քերից. (§ 90. 2-րդ, 3-րդ, 4-րդ, 7-րդ, 8-րդ).

1) Մի քանի առարկաների, անձերի կամ գործ ծովութիւնների թուարկութիւն ցոյց տառող բառերի առաջ: Հայաստանի արդաւանդ գաշտերը տարէցտաւրի առատութեամբ տալիս էին բազմատեսակ բերքեր՝ ցորեն գարի, բրինձ. Հավիտներն էլ մնուց ցանում էին անհամար ընտանի կենդանիներ՝ ձի, ջորի, գոմեց ռչխար, այծ, եղ ու կով: — Թումա Արծրունին պատմում է Արծրունեաց առաջին թագաւոր Գագիկի բարեմասութիւնները՝ քաջութիւնը, իմաստութիւնը և աշխարհաշինութիւնը: — Կիլիկիայի բնակիչների մեծ մասը հայ էին, իսկ մնացած մասը բաղկանում էր երկրի հին բնակիչներից՝ յղներից, ասորիներից և մահմեդական-

ներից: — Ներսիսեան դարու բանաստեղծներն են՝ ներսէս Ընորհանութիւն, Յովհաննէս Սարկաւագ, Գրիգոր Պահանակի, Գրիգոր Տղայ: — Պալասանեան: Երբեմն այսպիսի դէպքերում միջակէտ, ստորակէտու գիծ, կամ լոկ զիծ էլ է դրւում.

Ներեք ընդարձակ քերթուած թողեց Ընորհանութիւն. Եգեսիոյ ողք, Յիսուս որդի...: — Վենետիկի կեցիք Կիլիկիայում իրաւունք ունեին պարապելու այլեայլ բերքերի արտադրութեամբ, — այգեգործութեամբ, բամբակի, ձիթենու ու թթենու մշակութեամբ...: — Պալ.

Յիշեց մանկութեան նա իւր օրերը —

Սիրելի ծողք, եղարք, աղդականք: — Գ.-Ք.

2) Կարճ յաւելեալ նախադասութեան՝ ուրիշի խօսքերի առաջ, որ ալդ դէպքում չակերտների մէջ չի դրւում.

Ասում եմ՝ դիմացիք. ո՞նց դիմանամ:

3) Այն է, այսինքն է, այսպէս են, որոնք են, թում է, օրինակ, ինչպէս և այլ բառերից, նախ, ապա, յետոյ, առաջին, երկրորդ, երրորդ և այն, թուարկութիւններից յետոյ.

Հայ պատմագրութիւնը շարունակում է մինչև վերջը հաւատարիմ մնալ իւր գլխաւոր սկըզբունքներին, այն է՝ ճշմարտասիրութեանն ու ժամանակադրական ճշտութեանը: — Պալասանեան:

Նախ՝ անմեղութիւնը մեր խոստովանեց, Ապա՝ չարերուն մեզ ի խաչ մատնեց: — Գ.-Ք.

4) Գլխաւոր նախադասութեանը պարզաբանող երկրորդական նախադասութեան առաջ, երբ ալդ

Երկու նախադասութիւնները միացած չեն թէ, որ,  
որովհետեւ և ուրիշ շաղկապներով, որոնք գեղչուած  
են և զօրութեամբ են իմացւում. նոյնպէս և զեղ-  
չուած էական բայի և առհասարակ ամեն մի զեղ-  
չուած բայի տեղ, որ զօրութեամբ է իմացւում:  
Դու մէկ դիր ականջ՝ (տեսթէ) ինչպէս ձայն կուտամ  
իմ համատարած ցրուած հայերուն:

Ասէք՝ ինչ կ'անէ ջուրը ընկածը:

Ոյժ էլ չունիմ ես՝ (որ) նոցա պաշտպանեմ: Դ.-Ք.

Երեսյթներ առաջ բերելը բնութեան գործն է. Երե-  
սյթների քննութիւնը՝ իմացականութեան:—Հ. Այտ.

Ըստ անդամ անտեղի կերպով բութ են  
դնում թէ շաղկապից յետոյ. «Դու կարծեցիր  
թէ՝ ոսկին մեծ բան է»: «Որ համոզուիս թէ՝  
մեր ազգը կորչելու ազգ չէ իսպառ. (Գալա-  
քամիպա): Այդպիսի գէպքերում թէ շաղկապից  
առաջ պէտք է ստորակէտ դնել կամ, եթէ նա-  
խադասութիւններից մէկը կարծ է, ոչ մի կէտ  
չդնել: Եսկ եթէ թէ շաղկապը կրծատուած լինի,  
այն ժամանակ պէտք է բութ դնել. «Դու կար-  
ծեցիր՝ ոսկին մեծ բան է»: «Որ համոզուիս՝ մեր  
ազգը կորչելու ազգ չէ իսպառ:

Երեմն այս գէպքերում, աւելի ոտանաւոր-  
ների մէջ տողի վերջում, բութի փոխանակ զիծ է  
դըւում.

Ականջ եմ գնում—մի ձայն անմեկին խօսում է ինձ  
հետ: Նայում եմ առաջ—երկու ճանապարհ բաց է իմ  
դաստիարակութեամբ մասնաւութեամբ մասնաւութեամբ:

Հոգիս վկայեց—դու իմ հրեշտակն ես:—Յ. Յովի.

5) Բութ դըւում է մի բառի վրայ և այն ժա-  
մանակ, երբ այդ բառը յաջորդ բառին չի պատ-  
կանում, այլ նրանից յետոյ եկող բառերից մէկին:

Տրդատ թագաւորի պարսիկների գէմ վարած պա-  
տերազմները:

92. Անշատման զիծ կամ լոկ զիծ դըւում է.  
բացի վերոլիշեալ գէպքերից ( §§ 88, 89, 4-րդ, 90,  
4-րդ, 7-րդ. 91, 1-ն, 4-րդ.). 1) Ենթակալի և ստո-  
րոգեալի մէջ, երբ էական բայը (եմ, ես, է և այն)  
զեղչուած է, կամ առհասարակ այն տեղերում, ուր  
մի բառ կրծատուած է:

Ես—ապուշ մատնիչ, բաժինս—տանջանք: Յ. Յովի.

Մենք խաղաղութիւն Փրկչէն սովորեցանք,  
Նեղիչն ներել—Աւետարանէն:— Գալ.-Քաթ.

2) Ընդհանրապէս, երբ խանգարւում է շա-  
րադրութեան սովորական կարգը, նոյնպէս գործո-  
ղութեան արագութիւնը ցոյց տալու համար, կամ  
նախադասութեան անակնկալ եղբակացութեան ա-  
ռաջ գըւում է զիծ:

Լեզուն—մաշաթոյն ասացին մարդիկ,  
Ճարտար խօսուածքը—չարութեան գործիք,

Եւ այն հանձարը, որ նորա բաժին  
Տուաւ ի վերուսաւ—մարդիկ ջանք արին...:

Քեզ սիրեց աշխարհ և սիրեց—իրօք:  
Հաղիւ-հազ ոտքը դրել էր շեմքին—

«Ողջոյն քեզ, Սահակ», ասաց գիտին:  
Իմ անունը, իմ յիշատակ՝ կը կորչին:— Գ.-Ք.

3) Սուր հակադրութիւններ ցոյց տալու հա-

մալ: Վարդ էր տեսածդ, վարդ էիր երգում, ու

Փշից, տառասկից միշտ հեռի փախչում: Աստուած,

Աստուած, սրտով որ բարի ես,

Մենք վար, Դուն վեր—շատ հեռի ես: Գ.-Ռ.

4) Գիծ դըւում է, ստորակէտի փոխանակ, և  
նախադասութեանը չպատկանող միջանկեալ բառերի  
սկզբից ու վերջից:

Մինչ իմ որդիկը — ՞վ գիտէ —

Տարած, նօթի, անտէրունչ ու ծառչքը  
Օտար աշխարհ յածում են:

Դու կը մեծնաս, բայ կը բաշես — չինար բարի  
Ես դուրբան — . . . : Դամառ-Քաթիպա.

5) Գծով բաժանւում են կրկնուած բառերը.  
Քեզ սիրեց աշխարհ, — սիրեց սերտ սիրով: Գ.-Ռ.

6) Ստորակէտ ու զիծ դըւում է այս, այդ  
այն, այս ամենը, այդ ամենը, բոլորը, ահա  
այս, ահա այդ, ահա այն, և այլ բառերի ա-  
ռաջ, երբ այդ բառերով հասկացում են նախըն-  
թաց նախադասութիւնների մէջ թուած մտքերը  
կամ առարկաները:

Նահախ չի իջնում երկնառաք ցողը,  
Նահախ չի ծաղկում սեացած հողը, —

Այս են պաղատում աչքերը նորա: Գ.-Ռ.

Բառերի կուտակութիւն, իմաստների յոր-  
դութիւն, բացադրութեան խթնութիւն, — ահա  
այն յատկութիւնները, որ երեսում են արաբա-

Կան շըջանի հայմատենագիրների երկասիրութիւն-  
ների մէջ: Պալասաննեան: Խողով զնեն մէ զնե  
Երբեմն այդ դէպքում դըւում է քութ: Առ հասարակ մի քանի դէպքերում ստորա-  
կէտի, բութի, գծի, ստորակէտ ու գծի, մասամբ  
և միջակէտի գործածութիւնը եղու որոշուած ու  
հաստատուած չէ, և շատ անգամ այդ կէտերը,  
ինչպէս վերոյիշեալ կանոններից երեսում է, փո-  
խանակում են իրար: Դա նրանից է առաջացել  
որ հայերէնում չկայ եւրոպական լեզուների եր-  
կու կէտ (:): Նշանը, որի փոխանակ գործ են ա-  
ծում երբեմն բութ, երբեմն կէտ, երբեմն ստորա-  
կէտ ու գիծ, կամ լոկ գիծ: Գիծը և ստորակէտ  
ու գիծը նոր են մտնում մեր լեզուի մէջ, իսկ  
բութը հին լեզուի մէջ գործ էր ածում իբրև  
առողջանութեան նշան և նոր է մտել կէտա-  
դրութեան մէջ:

7) Գիծը ոչ միայն ստորակէտի, այլ և՝ տե-  
ղին նայելով ուրիշ կէտէրի հետ միացած կարող է  
գործ ածուել, ինչպէս § 92, 2-րդ հատուածի օրի-  
նակի մէջ բութի հետ է միացած:

Նոյնպէս կարող է գրուել և միջակէտի ու վեր-  
ջակէտի հետ:

ա) Երկու նախադասութեան մէջ, որոնց երկը  
ըորդն առաջնի իբր պատասխանն է, դըւում է ստոր-  
քակէտ ու գիծ, կամ միջակէտ ու գիծ, կամ վերջա-  
կէտ ու գիծ:

Ի՞նչ կարող ենք անել — և ոչինչ:

Ի՞նչ կարող ենք անել — և ոչինչ:

Երբ երկու կամ մի քանի անձերի խօսքեր են մէջ բերում ետևէ-ետև, մէկի խօսքը միւսից բաժանում է վերջակէտով ու գծով. կամ, եթէ նոր տղերից են սկսում, ամեն մի անձի խօսքի առաջ դրում է գիծ:

— Դուք այս լսէք ինձի, ով սագեր,

թէ դուք ըրած ունիք երբէք քաջութիւն:

— Հապա Նախնիքն մեր Հռոմ են աղատեր:

— Ըստ լաւ, բայց դուք ի՞նչ եք ըրեր՝ այն  
ըսէք:

— Մենք, մենք ոչինչ: — Ուրեմն ինչու պար-  
ծենաբ: Ալիսածեան, «Առակը Քոհիովի»:

93. Բազմակետ կամ կախման կէտեր (Երեք  
և աւելի կէտեր) դրւում են այն ժամանակ, երբ-  
ասած խօսքերով գլուղի միտքը դեռ կիսակատար է  
մնում, կամ երբ սաստիկ զգացմունք պէտք է ցոլց  
առաջ:

Ի՞նչ անենք... Ամօթ պիսպէս ասողին:

Ո՞Վ ՀՐԱՇՔ... ԴԻՆ ԻՐ ՃԵՌԵՐ ԿԱՐԿԱՌԵՑ: ԳԵՂ

94. Նախադասութիւնից աւելի բաժանելու համար՝ փակագծի մէջ են դրում այն բառերը, երբեմն և նախադասութիւնները, որոնք կամ նախադասութեանը չեն վերաբերում, կամ միայն երկրորդաբար պարզաբանում են նախընթաց բառերին։ Փակագծի մէջ դրուած բառերը կամ նախադասութիւնները կարելի ե ամբողջովին դուրս ձգել, առանց խօսքը կրճատ ու կիսակատար ժողնելու։

Աւրացող Վասակը (այսպէս է անուանում  
Նրան Եղիշէն) միայն իւր անձի և օգտի համար:

## Էր աշխատում։ Պալասանեան։

Փակագծից անմիջապէս առաջ մեծ մասամբ ոչ մի կէտ չի դրւում. Եթէ փակագիծն սկսւում է այստեղ, ուր որևէ կէտ պէտք է դնել, այդ կէտը դրւում է փակագծի երկրորդ մասից լետոյ.

Ունիս գրքեր՝ անհամար։ Գամառ-Քաթիպա

95. Առողանութիւն կուտում է բառերն և  
ամբողջ խօսքն իմաստի համեմատութիղ արտաքե-  
լելու եղանակը: Առողանութեան նշաններն են  
շեշտ (՝), երկար կամ զարմացական նշան (՞) և  
հարցական նշան (՞), որոնք դրւում են բառի  
ձախաւոր տառերի վրայի:

96. Մաքին նայելով խօսքի մէջ մի քանի  
բառեր առանձնապէս շեշտուում են, այսինքն սուր-  
կամ բարձր ձայնով են արտասանուում. այդպիսի  
բառերի շեշտուած վանդի ձայնաւորի վրայ դը-  
ռում է շեշտ:

ԵԵՐ դրւում է.  
1) Նախադասութեան մէջ առանձնապէս շեշտուած բառերի և բայերի հրամայական եղանակի վրայ, երբ առանձին ոյժ է տըրւում կոչմանը կամ հրամանին:

**Ամրկի վեճակը չէ՝ յաւերժական:**

Զարթիր, մանուկ իմ նազելի:

Հարուստ, դիմացդ է ազնիւ ասպարէզ: Գութ.

Պէտք է շեշտն այն վանգի վրայ գնել, որ  
շեշտում է, — լինի առաջին, երկրորդ թէ վերջին  
վանդը:

Արևելեան գաւառական (ինչպէս Արարա-  
տեան, Վարաբաղցոց և այլն) բարբառների շեշ-  
տադրութիւնը բոլորովին տարբեր է գրական լե-  
զուի շեշտադրութիւնից. մինչեւ գրական լե-  
զուի մէջ սակաւ բացառութեամբ, շեշտում է  
բառի վերջին վանդը, արևելեան բարբառների  
մէջ ընդհանրապէս շեշտում է բառի վերջըն-  
թեր վանդը:

2) Միջարկութիւնների և բացագանչական  
նախադասութիւնների բացագանչութիւն ցոյց տուող  
բառերի վրայ ։ (') աչք  
Ո՛չ, լուսին, լուսին: — (') մայմ մայմացըն

Վայ թէ դուք մենակ վհատիք ահից: — ամիան  
Բաւ է, օտարին շատ ծառայեցինք: Գամ. Քաթ.

97. Երկար դրւում է այն բառերի վրայ, ու-  
րոնց մի վանգը սովորականից աւելի երկար է ար-  
տասահնուում. վերոյիշեալ երկու դեպքում ևս (96,  
1-ն, 2-րդ), երբ աւելի սաստկութիւն պէտք է ցոյց  
տալ, շեշտի փոխանակ կարելի է երկար դնել:

Հրագդան, գետակդ իմ հայրենի: (1)

Այ հրազդան, այ ջուրք հայրենիք, Ալիշան. այլան  
Այ ափունք, էլր կուլայք լրիկ: Ալիշան. այլան  
Հայոց աշխարհիկ, բերկրութեան տեղիք, ոյ նաև  
Հայոց բնութիւն, ամի, հայ մանկափ,

Երանիկ է ձեզ, ով որդիք փառաց:

Պանդուխտ, հալածեամ, եղբարբէ մէր դիմէնք:

Գամառ. Քաթիպա:

Բացագանչութիւն ցոյց տուող միջարկութիւն-  
ներից յետոյ սովորաբար ստորակէտ է դրւում, իսկ  
եթէ միջարկութիւնները խօսքի մէջ են ըն-  
կած, երկու կողմից ստորակէտների մէջ են առ-  
նըւում.

Վահ, մեր կանաչ անսոտիկս ուր: Ալիշան:  
Ակ, անդարձ կ'անցնի լաւ ժամանակը:  
Բայց, այս, միայն մենք կը խօսենք: Գամ. Քաթ.  
Երբ ով, այ, էյ, հէյ, և այլ միջարկութիւն-  
ները դրւում են կոչական բառերի, կամ այնպիսի  
բառերի առաջ, որ ինքնըստինքեան բացագանչա-  
կան ձեռվ են գործածուած, գոյականից ոչ մի կե-  
տով չեն բաժանւում:

Այ հրազդան: — Կյ մարդ: — Ով մարդիկ: Հէյ  
Աւագ, հէյ:

98. Հարցական նշան կամ պարոյկ (ոլորակ)  
դրւում է այն բառերի վրայ, որոնք ուղղակի հար-  
ցում են բովանդակում:

Ով նազլու Խաթուն, ինչու ես տրտում,  
Ինչի՞ ես կարօտ, ինչդ է պակաս: —  
Այն ով է կանգնած ամբիոնի վրայ: —  
Հիմի էլ լունք, եղբարբ, հիմի էլ... Գութ.  
Երկրորդական նախադասութեան մէջ դրւուած  
երկրորդական հարցական բառի վրայ կամ ոչ մի  
նշան չի դրւում, կամ շեշտ է դրւում.

ՏԵ՛Կ ինչպէս որդիքը պիտ վաղեն, պիտ  
գան: Գանւառ-Քաթիկա:

Ճիշտ յայտնի չէ, թէ բանի տառ ինքը  
ո. Մերոպն է յօրինել և բանինը հին հայոց  
վաղեմի նշանագրերից վերցրել, — ՏԵԿ ի՞նչ է ա-  
սում, եկ, ինձ պատմիր թիմանցին ի՞նչ  
Երեմն մի և նոյն նախաղասութիւնը բովան-  
դակում է իր մէջ թէ հարցում և թէ զարմանք,  
կամ քացագանչութիւն. այդ ժամանակ հարցական  
բառի վրայ հարցական նշան է դրւում, իսկ նա-  
խաղասութեան վերջում բայի վրա երկար նշան,  
կամ թէ, նայելով թէ ո՞րը զօրաւոր է, հարցումը  
թէ քացագանչութիւնը, երկու նշանից մէկն է  
միայն դրւում:

Ի՞նչ անե՞նք... ամօթ այսպէս ասողին: Գ. Ք. Ա. Թ.

Պէտք է շեշտը, երկարը, հարցական և զար-  
մացական նշանները դնել բառի շեշտուած վանդի  
վրայ, և ոչ անշեշտ վանդի վրայ:

(Պահպա) իրացր նոյն նոյն նախացն. 80  
դաք իրացր ո գնոյն ըստի միշտաց օրս և նույն  
նախաց ո անշեշտ մասն առան ի ո  
առարկ և քաշ առանք ո անշ  
այս ի մասն առանք և ի ո ան  
անշանք... և մասն առանք առան և մաս  
նախաց մասն առանք առանք մասն քայլից  
և ո նոյն լոյց ի ուոյ մախացոյ մախացոյից  
նախաց և ուոյ նոյն նախաց ո մասն

ՆԱՅՐԻ յշուշ նախաց (մ.թ Ե. Ա. Ա.)

ԼԱՅՐԻ սփր օձ (մ.թ Ե. Ա. Ա.)

ՎԱՐԴԱ պարապան այս և մասն գայուսի (մ.թ Ե. Ա.)

## ՍՈՒՆՁԻՆ ԲԸՌԵՐԻ ՑՈՒՑԱԿ.

Ցուցակիս մէջ ուղաձիգ գծերի | | մէջ գրուած գրու-  
թիւնները սխալ չեն և կարելի է գործածել, իսկ փակա-  
գծերի մէջ գրուած ձեւերը մեծ մասամբ սխալ և կամ ան-  
գործածական ձեւեր են: Բառերի մօտ գրուած թուանշան-  
ները ցոյց են տալիս այն երեսները, որոնց մէջ նկատո-  
ղութիւն կայ այդ, կամ դրանց նման կազմութիւն ունեցող  
բառերն մասին: Ցուցակիս մէջ գրուած են մեծ մասամբ  
բառերի նախատիպ ձեւերը, որոնց մօտ մէկ-մէկ միայն նշա-  
նակուած են ածանցումներն ու բարդութիւնները:

Աբգար

Աղին

Աբեթ

Ազապ

Ագանելիք, գրաբարի ա- Ազատ-արձակ 67

գանել բայից. առաջ Ազգ ու տակ, բայց ազ-

Ագապ, մայոնեզը գիօր գովտակով 67

Ագարակ Ազդ Ազդը արցոյա և ընդ պայման

Ագի առաջ Ազդը արցոյա և պայման

Ագուցք, գրաբարի ազու- Աթաբէկ

ցանել բայից Ալեխառն, ալեկոծ, ալե-

Ագուռ տանց, (ալեխառն, ալե- Ագուռ տանց, ալեխառն) և նման

Ագուռ կոծ, ալեխանց) և նման

Աղամ, ածանցն է աղա- բարդութիւնները 23

մային, (պարսկա) պարսկա Ալելուիա

Աղամորդի, սխալ, է աղա- Ալոշ

մաորդի ձեւ, որովհետև Ախոյան, ածանցն է ա-

բարդութեան ժամանակ խոյանքար. | ախոյեան |

ա յօդակապը ձայնաւորի Ախտ 29

ախտամէտ, որից 66 ՀՀ

ախտամէտիլ, ախտամէ-

տութիւն (ախտաժէտիլ, Աղինձ  
ախտաժէտութիւն) 25 Աղիս, աղիսել  
Ախտարք, արմատն է ախտ. Աղիսագուր  
ածանցն՝ ախտարակ, ախտ Աղկաղկ  
տարակաց, (աղթարք). Աղձնիք  
Ակաղձուն Աղճատել աղճացած  
Ականայեռ, բարդուած է Աղուշ, աղուշսագուն,  
ակն բառից ակնեռ աղուշսենի, (աղօժէտաւար  
բարի յեռ արմատից. քուն, աղուշսենի) նոյնար  
Ականջ պէս և աղուշտուկ (աշամ  
Ակճիռ, գրաբարիյակճիռս զուէսուկ) 25 լավ կալար  
կալամից Աղուշհաց, աղուշհաց | 59 ապ  
Ակն-յանդիման 67 Աղուն, աղօնփառ պատապ  
Ակնյատնի, ակն-յատնի Աղջամուլջ ան հաւաքամ  
Ակոս Աղջիկ  
Ահա 31 Աղտ, աղտեղի  
Ահուղող, (ահուղող) 58 Աղցան  
Ահուղու, (ահուղ- Աղցք, ածանցն աղցաւոր.  
սարսափ) 58 Աղքատ  
Աղանձ Աղօթք, աղօթարան, ար  
Աղք, որից և աղքիւս, (դր. Դօթել  
աղքիսք, աղքեք). Աղօտ  
Աղքիւր, որից և աղքե- Աճպարար  
ըակն, աղքերանալ. Աման-չաման 64  
Աղքրաց-արիւն Ամառանոց | ամարանոց 30  
Աղեբեկ, աղեկատ, աղե- Ամառային, ամառնային,  
կէզ, աղեխարշ (աղե- | ամարային | 30  
քեկ, աղեկատ, աղեկէզ, Ամբար, (ամպար) 40  
աղեխարշ) Ամառները 23 Ամբարիշտ | ամպարիշտ | 40  
Աղեկ, աղեկութիւն 23, 25 Ամբարձած, որից վեր-  
Աղժտ, աղետաւոր կամ ամբարձ, ամբարձում.  
աղիտաւոր (աղէտաւոր) Ամբարտակ (անբարտակ) 28  
23, 25 Ամբարտաւան 28

Ամբողջ Ամբողջ (մամալ) Աղեալլապութիւն  
Ամեն, որից ամենայն, ամեն 57  
մենսին, ամենաբարի: Աղ որ Գամբաւ յամբաւ  
Շատերը գրում են՝ ամէն, Աղուր 55  
ամէնաբարի. բայց ինը- Աջէք 24  
կատի ունենալով §§ 37, Այն-անուն, այն-ինչ (մար-  
1-ն և 38, 1-ն (երես դը) 66  
24—25) կանոնները, Այնինչ, մինչդեռ նշանա-  
պէտք է գրել ամեն. կութեամբ  
Ամեն մէկ, (ամեն) մինչ Այնուամենայնիւ, | այնու-  
Ամենա-ազնիւ, ամենա- ամենայնիւ |, (այնու ա-  
անվնաս, ամենա-ընտիր, մենայնիւ) 55  
ամենա-օգտակար և նը. Այնչափ 55  
մանները 22 Այնտեղ, այնտեղից | 55  
Ամենուրեք 55 Այնօր, այն օրը 56  
Ամէն, Երբ նշանակում է Այս-անուն, այս-ինչ (մար-  
լինի, ստոյդ. զար-բուքը) դը) 66  
Ամպ, (ամպ) ար առ զը Այս-այն, (այս) ուժ այն,  
Ամպրոպ թօ (պար) (այս այն) 66  
Ամփոփ թօ (պար) Այս-այս, (այս) ուժ այս,  
Ամօթ թօ (պար) (այս այս) 66  
Այդ, այդուն, այդածաւ Այս է  
զիկ Այսինքն է, այսինքնթէ  
Այդիւ այդեգործ Այսուամենայնիւ, | այնու-  
Այդ ամենայնիւ |, (այսու ա-  
Այդնաւամենայնիւ | այդու- մենայնիւ) 55  
ամենայնիւ |, (ալդու ա- Այսափ 55  
մենայնիւ) 55 Այստեղ, այստեղից 55  
Այդչափ 55 Այսօր, այս օրը 56  
Այդտեղ, այդտեղից 55 Այսօր-էգուց 67  
Այժմ մասնակի Այժմ Այժմ է 57  
Այժմէն, այժմէն իսկ Անագ Անագան  
Աղ և

Անարդ, անարդել, անարդ-  
 գութիւն Անձ(ն), անձնասէր և այլն  
 Անարդել, արդելք արմա- Անձնուց Անձնանուէր, | անձնուէր |:  
 տից. Վերջին Ճեն իմկապէս  
 Անարդիլ պէտք է լինէր (անձն-  
 Անբիծ, (ամբիծ) 28 նուէր: Անձն-  
 Անդամ Անձուկ, անձկալի Ա-  
 Անդէզ Անձրե Ա-  
 Անդղ Անշէջ Ա-  
 Անդոսնել Անորչ (անուշ) Ա-  
 Անդունդան Անջրդի Ա-  
 Անդուշել (գրմ.) Անտառ 41 Ա-  
 Անդադար Անտէր, անտէրութիւն 23  
 Անդամ Անտերունչ, | անտէրունչ | 23  
 Անդանօր, (գրմ.) Անտի, (գրմ.)  
 Անդէն, (գրմ.) Անտուն-անտէր 67  
 Անդէորդ, | անդիորդ | Անցնող-դարձող 67  
 Անդրէն, (գրմ.) Անց ու դարձ (անցու-  
 Անըմբունելի դարձ) 59  
 Անընդել, (անընտել) Անօժ  
 Անընդունակ (անընդունակ) Անօժի  
 Անընդհատ Անօրէն, անօրէնութիւն 23  
 Անխախտ 28 Աշխարհ 34  
 Անծեղ, (անձեղ) 41 Աշխարհաբար, | (աշխար-  
 Անծխոտ, (անձխոտ) 41 բար)  
 Անկ է 41 Աշխարհալեցողութիւն; Խո-  
 Անկեալ, անկելանոց 41 կապէտ պէտք է լինէր | աշ-  
 Անկիւն 41 խարհահալեցողութիւն  
 Անկողին 41 կամ (աշխարհալեցո-  
 Անկուած 41 դութիւնն):  
 Անհեթեթ, (անհեղեգ) 42 Աշխէն  
 Անձաւ, որից և քարան- Աշխէտ  
 ձաւ. Աշխոյժ Աշխոյժ

Աչք, աչքեր Առեւանգել, (առեւանկել)  
 Աչքի-լոյս, ածական ա- 57  
 նուն մանդ Առեւտուր, առուտուր 57  
 Ապա, ապա եթէ, ապա Առէջ, (առէչ)  
 թէ, ապա թէ ոչ, ապա Առընթեր  
 ուրեմն Առաջախինակ Առժամանակ 61 անարդ  
 Ապախտ, ապախտաւոր 29 Առժամայն 62 անարդ  
 Ապախտարք 29 Առժամ մի 61 անարդ  
 Ապարօշ Առժամս 61 գանդ  
 Ապաքէն Առիշգոյէ 62 անարդ  
 Ապէր, կազմուած է աղ- Առհասարակ 61 գանդ  
 պէր (եղբայր) բարից: Առհարկի 61 (յան)  
 Ապօլիստ, ապօլիսել 29 Առձեռն 62 անարդ  
 Ապշիլ ապշութիւն, (ափ- Առմիշտ 61 գանդ  
 շել, ափշութիւն), կազ- Առնէտ  
 մուած է ապուշ բարից: Առնուազն 61 գանդ  
 Ապտակ (պատակ) Առոգանել, առոգանու-  
 Ապրել թիւն անարդ  
 Աջ Առողջ անարդ  
